

ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ



Armenian Church Library <http://hygradaran.weebly.com>

ՀՐԱՄԱՆԱԲ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ-
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ

**ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ
ԵՐԳ ԵՐԳՈՅԻ**



Ս. ԷԶՄԻԱՅԻՆ - 2007

ՀՏԴ 25
ԳՄԴ 86.37
Ս – 970

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ
Ս – 970 Մեկնություն «Երգ Երգոցի» - Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007.
- 236 էջ:

ԳՄԴ 86.37

Տպագրվում է մեկենասությամբ՝
**ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՍԱՐՈ, ԲԱՖՖԻ
ՄԱՐՈՒՔՅԱՆՆԵՐԻ**

ISBN 978-99930-775-45-5
© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007 թ.

**Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ
«ԵՐԳ ԵՐԳՈՑԻ»
ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԸ**

Առաջին անգամ արևելահայ աշխարհաբարոյով ընթերցողի դատին ներկայացվող մեկնողական աշխատությունը բացառիկ արժեք ունի ինչպես Գրիգոր Նարեկացու կյանքի ու գործունեության, այնպես էլ նրա գրական բազմաբնույթ ժառանգության ուսումնասիրության համար: Բացառիկ է, որովհետև ծնունդ է ոչ թե սեփական մտահղացման ու ստեղծագործական ինքնաբուխ պոռթկման, այլ թագավորական հանձնարարության: Հանգամանք, որը մի կողմից կաշկանդել ու անվստահ է դարձրել հեղինակին, իսկ մյուս կողմից, հնարավորություն է տվել արտահայտելու այնպիսի մտքեր ու գաղափարներ, որպիսիք նրա մյուս ստեղծագործություններում կամ չեն հանդիպում, կամ եթե հանդիպում են, ապա՝ ո՛չ այդպես պարզ ու հստակ: Մեկնիչ Նարեկացու կաշկանդավածությունը կամ, որ միևնույնն է, ստեղծագործական անազատությունն զգացվում է թեկուզև այն բանից, որ նախ՝ ինչպես ինքն է խոստովանում, թագավորական պատվեր ստանալով, սկզբում հրաժարվել է՝ համարելով իր ուժերից վեր, բայց

երկրորդ անգամ թագավորական պատվերը կրկնվելուց հետո, ստիպված հանձն է առել, որպեսզի չմեղադրվի անհնազանդություն մեջ: Երկրորդ՝ թեև համաձայնել է, բայց մինչև վերջ չի ազատվել այն զգացումից, որ «զբանս սրբոց գրոց օտար մեկնութեամբ» աղավաղելու դեպքում իրեն սպասվում են ոչ փոքր «դատապարտութիւն և պատիժք», իսկ դա բացառված չէր, որովհետև քաջ հասկանում էր, որ կարող էր տգետ չերևալու համար համակվել «փառամոլ հպարտութեամբ» և «զոչէան իբրև ճմարիտ ցուցանել»¹: Երրորդ՝ իր մյուս երկերում խոսքաչափ ու հորդահոս բանաստեղծն այստեղ անընդհատ կապանքներ է դնում իր մտածողութեանն ու լեզվին՝ հիշեցնելով, որ ի տարբերություն այլ մեկնիչների, ինքը ձգտում է համառոտութեան: Օրինակ՝ «գիտես եթէ զհամառօտն եմ յախորժեի» (էջ 287), «զոր այլ վարդապետք մանր կտտեն, ես համառօտեմ» (էջ 308) և այլն: Բանը հասնում է այնտեղ, որ մեկնիչ Նարեկացին, զգալով իր սկզբունքի վտանգավորությունը, երբեմն թագավոր – պատվիրատուին հարկ է համարում ասել, որ «եթէ երկայն կամիս լսել զբանս, երթ առ Նիւսացին Գրիգոր» (էջ 285): Չորրորդ՝ հեղինակի զգուշավորությունն ու անազատությունը շատ լավ է երևում հատկապես «Երգ Երգոցի» և Աստվածաշնչի մյուս գրքերից կատարված մեջբերումների առատությունից և

դրանց մեկնությունների չափազանց ժլատությունից: Ի հաստատումն ասվածի՝ բերենք միայն մեկ օրինակ. «Պատրաստեաց զքեզ յարգանդէ, գեղեցիկդ ի կանայս մայր քո»: Արգանդ սուրբ ավագանն է. և մայր Սիրովն եկեղեցի կոչի. զի «Սիրովն ասի մայր. և մարդ ծնաւ ի նմա»: «Ծնցի մարմին առ նոյն անխիղճ անաղտ յայլմէ տեսութենէ»: Այսինքն՝ ի Հոգւոյն Սրբոյ: Նա և առաքեալ ասէ. «Ծնեալ վերստին՝ ոչ յապականացու սերմանէ, այլ յանապականացուէն, կենդանի և մշտնջենական բանիւն Աստուծոյ» (էջ 279-280, այս և հետագա ընդգծումներն իմն են – Հ. Մ.): Դժվար չէ տեսնել, որ այստեղ մեկնիչի խոսքը՝ ընդգծված հատվածները, քանակապես խիստ պակաս է մեկնվող մտքերից, իսկ բովանդակությունը գրեթե նրանց սոսկական կրկնությունն է: Մինչդեռ տրամագծորեն հակառակ պատկերն ենք տեսնում այն դեպքերում, երբ մեկնիչն անդրադառնում է իրօրյա խնդիրներին. ասես, միանգամից դեն է նետում միտքն ու լեզուն կաշկանդող կապանքները և արտահայտում այնպիսի գաղափարներ, որոնցից շատերն այսօր էլ չեն կորցրել իրենց արժեքն ու կարևորությունը: Իր խոսքն ուղղելով պատվիրատու թագավորին՝ մեկնիչ Նարեկացին հոգևոր ու աշխարհիկ տերերի առաքելությունը տեսնում է ոչ թե հպատակներին ճնշելու, շահագործելու և կողոպտելու, այլ նրանց մասին զօր ու գիշեր մտա-

ծելու, գթածաբար կրթելու ու դաստիարակելու մեջ, քանզի «վասն այնորիկ տիրեն մեզ, ~ գրում է նա, ~ զի ընդ մեր պատերազմ հարկին հարկանել հոգևոր առաջնորդքն ընդ սատանայի, և մարմնաւորքն արիւն ևս պարտին եղուլ ի վերայ մեր և պատերազմ տալ թշնամեաց, և եթէ կարասեալ և եթէ մահուամբ, թափել ի թշնամեաց: Եւ դատ առնել իրաւամբք անակնառութեամբ հանգիստ որպէս զԱստուծոյ սպասաւորս. և զամենայն մարդոյ տուն՝ որպէս զիւր համարել» (էջ 361):

Չեմ ցանկանում այս կարգի մեջբերումներով անհարկի ծանրաբեռնել ընթերցողի միտքը, վստահ լինելով, որ ուշադիր ընթերցելու դեպքում նա ինքը կարող է գգալ և հասկանալ մեկնիչ Նարեկացու արտահայտած այսօրինակ մտքերի արժեքն ու գինը:

Գրիգոր Նարեկացու գրական ողջ ժառանգութեան մեջ բացառիկ է սույն մեկնութեան արժեքը նաև այն տեսակետից, որ նրա բոլոր գործերից միակն է, որ ունի հեղինակի կեղմից նշված գրութեան ստույգ թվական, որը կարող է մասամբ կողմնորոշիչ լինել Նարեկացու անունով մեզ հասած առանձին գործերի գրութեան ժամանակն ու հեղինակային պատկանելության հարցը լուծելու համար: Օրինակ, եթե մինչև վերջերս որոշ նարեկացիագետներ մերժում էին «Համառօտիւք բան խրատու» երկը բանաստեղ-

ծի գրչին պատկանելու փաստը², ապա մենք, ընդհակառակը, մանրամասն համեմատելով այդ աշխատություն, «Երգ Երգոցի» մեկնության և Մատյանի բովանդակությունն ու լեզուն, հանգել ենք այն անխախտ համոզման, որ անվերապահորեն Նարեկացին է նրա հեղինակը, և որ այն գրվել է «Երգ Երգոցի» մեկնությունից առաջ, որի հիման վրա էլ Գուրգեն Խաչիկ թագավորը պատվիրել է Նարեկացուն գրել «Երգ Երգոցի» մեկնությունը³:

Սույն մեկնությունը բացառիկ արժեք ունի նաև այն տեսակետից, որ գրված լինելով ստեղծագործական հասունության արշալույսին, հնարավորություն է տալիս հետևելու գրան հաջորդած ավելի քան քառորդդարյա ժամանակահատվածում բանաստեղծի ունեցած աշխարհայացքային, գաղափարական ու հոգեբանական էվոլյուցիայի ընթացքին և ըստ այդմ, ավելի լավ հասկանալու կյանքի մայրամուտին ստեղծված «Մատյան ողբերգության» հրաշք գլուխգործոցը: Վերջապես, «Երգ Երգոցի» մեկնությունը կարևորվում է նաև այն տեսակետից, որ նրա հանգամանալից ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս կտրականապես մերժելու առանձին հայագետների (Ն. Ակինյան և Կ. Քիպարյան) առաջադրած այն թյուր տեսակետը, որ իբր Գրիգոր Նարեկացու անունով հասած մատենագրական ժառանգությունը պատկանում է

երկու Գրիգոր Նարեկացիների, որոնցից գյուղական քահանա Գրիգոր Նարեկացին հեղինակել է «Երգ Երգոցի» մեկնությունը և Կճավա վանքի վանահորն ուղղված թուղթը, իսկ կուսակրոն վանական Գրիգոր Նարեկացին՝ մնացած մյուս ստեղծագործությունները՝ տաղեր, գանձեր, ներբողներ և «Մատյան ողբերգություն»։ Հետաքրքիր է, որ նարեկացիագետ Պ. Խաչատրյանը, իրավացիորեն հերքելով այս շինծու տեսակետը, վերջում տողատակային ծանոթագրությունում հարկ է համարել ավելացնելու, «որ Ն. Ակինյանի և Կ. Քիպարյանի տեսակետը մերժելու նպատակով մեր բերած փաստարկներն ու բացատրությունը կարող են այնքան էլ համոզիչ չլինել, որ նշանակում է, թե խնդրի վերջնական լուծումը բանասիրությունից պահանջում է նոր պրպտոմաներ ու մերժման ավելի ծանրակշիռ ապացույցներ»⁴։ Բարեբախտաբար, երկար պրպտելու կարիք չկա, որովհետև նման «ծանրակշիռ ապացույցներ» գտնում ենք հենց սույն մեկնության մեջ, որը, ցավոք, մինչև օրս վրիպել է մասնագետների ուշադրությունից։ Ընդհանուր է, մեկնության հիշատակարանում բանաստեղծը իրեն անվանում է «Գրիգոր քահանայ ի Նարեկայ, որդի տեառն Խոսրովայ անձաւացեաց Եպիսկոպոսի», բայց նախ՝ «քահանայ» եզրը բնավ չի նշանակում միայն ամուսնացյալ, այլ քահանայական դասի մեջ մտել ու շարունակում

են մնալ թե՛ ամուսնացյալ և թե՛ չամուսնացյալ քահանաները, այսինքն՝ նաև վարդապետները։ Երկրորդ՝ բանաստեղծն ինքն իսկ ասում է, որ ինքը վարդապետ է, այսինքն՝ կուսակրոն քահանա։

Մեկնության հենց սկզբում խոսքն ուղղելով պատվիրատու Գուրգեն Խաչիկ թագավորին՝ մեկնիչը գրում է. «Զի եթէ Նիւսացիս Գրիգոր, որ կատարեալ վարդապետ էր և հոգիաբնակ, ի բուն կատարմանէ մեկնութեան այսմ գրոցս վերջացեալ գտանի, ո՞րչափ ևս առաւել ես, որ ամենայնիւ տգէտ եմ և ունայն ի հոգւոյն շնորհաց, ոչ կարացից հետեւել մտացն ասացելոց ի սողոմոնեան հոգւոյն» (էջ 271)։ Փաստորեն Գրիգոր Նյուսացուն համարելով «կատարեալ վարդապետ ... և հոգիաբնակ», իսկ իրեն՝ «ամենայնիւ տգէտ... և ունայն ի հոգւոյն շնորհաց»՝ դրանով իսկ բանաստեղծն անուղղակիորեն իրեն նույնպես կոչում է վարդապետ։ Բնական է, որ կատարյալ ու հոգիաբնակ վարդապետ Գրիգոր Նյուսացու հետ կարող էր համեմատվել ոչ թե ամուսնացյալ, այլ կուսակրոն քահանա, այսինքն՝ վարդապետ Գրիգոր Նարեկացին։ Մեկ ուրիշ անգամ նույնը ասում է ավելի պարզորոշ։ Նա գրում է. «Եթէ բան առ բան զսա մեկնեմ, լսողքդ ձանձարանայք, բայց զի զդուռն իմաստիցն բացեալ եմ, զոր այլ վարդապետք մանր կտտեմ, և համառօտեմ և ի բան առաքելոյն ա-

վարտեցից» (էջ 308): Դժվար չէ տեսնել, որ տվյալ դեպքում մեկնիչը նախ՝ իրեն դասում է վարդապետների շարքը, և ապա՝ ի հակադրություն նույն միտքը մանրամասն մեկնող վարդապետների, ինքը համառոտում է: Սա այնքան պարզ ու սովորական տրամաբանական հնար է, որ, թվում է, մանրամասնելու հարկ չկա:

Չնայած այսքան կարևորությունը՝ Նարեկացու այս երկը, ինչպես հարկն է, առայսօր չի արժանացել մասնագետների ուշադրությունը: Բավական է ասել, որ այն մինչև օրս չունի քննական բնագիր: Ինձ հայտնի է, որ վաստակաշատ նարեկացիագետ Ա. Ղազինյանը ձեռնարկել էր նման աշխատանք, բայց, ցավոք, վաղահաս մահը ընդհատեց այն:

Մեկնությունը Նարեկացու համեմատաբար քիչ հրատարակված գործերից է. ունեցել է գրաբար ընդամենը չորս հրատարակություն (Վենետիկ, 1789, 1827, 1840, Իսթանպուլ, 1955): Այն ունեցել է նաև արևմտահայերեն⁵ և իտալերեն⁶ ամբողջական, իսկ արևելահայերեն՝ մասնակի⁷ թարգմանություն: Փաստորեն երիտասարդ թարգմանիչ Վ. Ֆերեշեթյանը հայ գրական մեծագույն հանճարի այս կարևոր, բայց և դժվարթարգամանելի երկի աշխարհաբարացմանը ձեռնամուխ է եղել ավելի քան մեկուկես տասնամյակ առաջ, սակայն նոր կարողացել է ավարտել այն: Կասկածից վեր է, որ չհաջված ա-

ռանձին բացառություններ, թարգմանությունը չի կարող համարժեք լինել բնագրին, առավել ևս ներկա դեպքում, երբ գործ ունենք Նարեկացու նման բարդ լեզվամտածողության տեր հեղինակի բարդագույն ստեղծագործության հետ: Բանն այն է, որ խնդրո առարկա մեկնությունը, բացի սովորական դժվարություններից, ունի նաև մեկնողական երկին բնորոշ լրացուցիչ բարդություններ. անսահման շատ են «Երգ Երգոցից», «Աստվածաշնչի» մյուս գրքերից և այլ աղբյուրներից բերված հատվածները, որոնք միշտ չէ, որ համերաչխվում են մեկը մյուսի և հեղինակի խոսքի հետ: Դիտելի է, որ սույն մեկնությունը գրելիս իր իսկ վկայակոչած մտքերի միջև նույնպիսի անհամաձայնություն նկատել է Նարեկացին ինքը և խորհուրդ է տվել իր պատվիրատուին նման դեպքերում չպահանջել «ամենևին զհաւաստին», այլ ուշադրություն դարձնել խոսքի իմաստին:

Հետևելով մեկնիչ Նարեկացու այդ խորհրդին՝ մենք էլ ցանկանում ենք խնդրել ընթերցողին, որ այս թարգմանությունն ընթերցելիս չպահանջի լեզվական բացարձակ համապատասխանություն, քանզի դա անհնարին է նույնիսկ ամենակատարյալ թարգմանության դեպքում, այլ հետևել միայն լեզվական կաղապարի մեջ արտահայտված մտածողությանը, այսինքն՝ թարգմանության հաջողվածության կամ անհա-

Ջողվածություն չափանիշ ընտրել ոչ թե լեզվական ձևերը, այլ մտածողության տրամաբանությունը, կառուցիկությունն ու հետևողականությունը:

Վստահ ենք, որ սա, լինելով Նարեկացու կարևորագույն աշխատություններից մեկի՝ արևելահայ աշխարհաբարով առաջին տպագրությունը, կունենա նաև այլ հրատարակություններ, որոնցից յուրաքանչյուրը մի նոր քայլ կլինի նարեկացիական լեզվի ու ոճի յուրացման ու աշխարհաբարացման ուղղությամբ:

Հուսով ենք, որ հաշվի առնելով այս ամենը, ընթերցողը ըմբռնումով կընդունի կատարված աշխատանքը, իսկ թարգմանիչը և հրատարակիչները սիրով հաշվի կառնեն այն բոլոր դիտողությունները, ցանկություններն ու առաջարկությունները, որոնք կարվեն հետագա հրատարակություններն ավելի կատարյալ տեսնելու նպատակով:

Հ. Ղ. Միրզոյան

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ
«ԵՐԳ ԵՐԳՈՑ»-Ի

ԳԼՈՒԽ Ա

Քո աստվածասեր թագավորության հրամանը, ո՛վ տեր արքա, բուռն էր և ավելին, քան մեր կարողությունը, զի նման խնդիրը՝ մեկնել «Երգ Երգոց»-ը, վայել է նրանց, ովքեր հոգով Սողոմոնի պես են: Որովհետև եթե Գրիգոր Նյուսացին, որ կատարյալ վարդապետ էր և հոգիաբնակ, այս գրքի բուն մեկնության մեջ ետ մնաց¹, որչափ առավել ևս ես, որ ամենևին տգետ եմ և ունայն հոգու շնորհներից, պիտի չկարողանամ հետևել սողոմոնյան հոգեբուխ մտքերին: Մանավանդ որ փոքր չէ պատիժը և դատապարտությունը, տգետ չերևալու համար Սուրբ Գրոց Խոսքը օտար մեկնություն մը աղավաղելու և փառամոլ հպարտություն մը անիրական իբրև իրական ցույց տալու դեպքում: Բայց քանի որ պատգամ ունենք հնագանդվելու արքաների հրամաններին, կհանդգնեմ ասել իմ տկար մտքի հասողությունը՝ ապավինելով Սուրբ Հոգուն, կատարելով նրա հրամանը, որ ասաց, թե՛

Հպատակվեցեք թագավորներին^{1*}:

Արդ, նախ ուրախացա այս բանի համար, որ Գիրքը քննելու նման մտահղացում ունեցար և հոգ տարար ուսման, որը նշան է Տիրոջից երկյուղելու, պիղծ հոգիներից, մեղսասեր բարքերից և դրանց վայրիվերո քննարկումներից հեռու մնալու, ինչպես և այն երանության ձգտման, որ մարգարեն է ասում . «Երանի այն մարդուն, ով չքայլեց ամբարիշտների խորհրդով»^{2*} և որ հետո է գալիս: Եվ որ փոքր-ինչ առաջանալով՝ ասում է. «Այլ նա Տիրոջ օրենքների մասին պիտի խորհի զօր ու գիշեր»^{3*}: Ապա հատուցման վերաբերյալ խորհելով, Տիրոջ օրենքը մեջբերելով, ասում է. «Թող լինի նա որպես ծառ, որ տնկված է հոսող ջրի մոտ»^{4*}: Որովհետև ինչպես որ հոսող ջրի մոտ տնկված ծառն է անթորչոմ, նույնպես և նա, որ Աստծո պատվիրաններն է քննում և հոգում է նրանց մասին զօր ու գիշեր, այդպես անթառամ կմնա այս կյանքի մեջ, և ամեն ինչ որ անի, կհաջողի նրան Աստված, ինչպես որ Դավթին հաջողեցրեց, քանզի թագավոր էր, և այդչափ մեծ թագավորն, արհամարհելով պատերազմներն ու ոտնահա-

րելով մարմնական բոլոր կարիքները, խորհում էր միայն աստվածային բաների մասին, այդ պատճառով էլ անպարտելի մնաց թշնամիներից:

Նույնպես և ի դեմս Սողոմոնի է տեսանելի, որ որքան էլ տիեզերակալ թագավոր էր, բայց եւ այնպես նրա ամենօրյա հոգսը Ձեր կարդացած, ինչպես նաեւ՝ այն գրքերն էին, որոնք աշխարհը չէր կարող կրել, եթե մնացած լինեին: Բայց, քանզի աշխարհն արժանի չէր, և պետք էլ չէր, որ մարդիկ ուսանեին, այդչափ անսպառ գիտությունն Աստված վերացրեց երկրից, որովհետև ամեն ինչ գիտության էր վերածված, ինչ որ Աստված արարել էր երկրի վրա: Եվ եթե չգլորվեր, առավել մեծ շնորհների հասած կլինեիր: Արդ, թագավորները պետք է հետևեն այդպիսիներին և անհագաբար ուսանեն Տիրոջ օրենքները: Բայց այժմ դա մի կողմ թողնենք և ձեռնամուխ լինենք այս գրքի մեկնությունը:

Արդ, նախ պետք է պարզել, թե ի՛նչ է նշանակում «Երգ Երգոց», և դրանով իսկ ուսանել նրա անբավ արժեքը: «Երգ Երգոց» նշանակում է օրհնությունների օրհնություն այնպես, ինչպես մենք սովոր ենք խորանի

սուրբ սեղանը կոչել «սրբությունների Սրբություն», ինչպես ասում է հենց առաքյալը^{5*}: Այսինքն, եթե եկեղեցին սրբություն է, ապա խորանը ևս սուրբ է, կրկին սուրբ և ավելի սուրբ: Նույնպես և այն բոլոր երգերից և օրհնություններից գերազանց է: Ինչպես նորերից Ավետարանն այլ գրքերից ավելի սուրբ և պատվական է կոչվում, այնպես էլ նա է՝ հների մեջ: Հարկ է ասել, որ տաճարում երգում էին եղանակով, առավել ևս հանգավոր և մարգարեական հոգով, քան Դավթի սաղմոսները, որովհետև անմեկնելի է այդ սարսափելի խոսքերի մեջ թաքնված խորհուրդը: Եվ մարմնեղեններից ոչ ոք չի կարող հասկանալ դա, եթե հոգով Պողոսի պես չէ, որ երրորդ երկինքը բարձրացավ և լսեց անճառելի խոսքերը, որոնք խոսելը վեր է մարդու կարողությունից^{6*}: Որովհետև այս լսելիքը ի զորու չէ լսելու Աստծո խորհուրդները, և ոչ էլ այս աչքերը՝ (հայելու) Աստծո տեսությունը:

Արդ, Սողոմոնը, կամենալով անճառելի բաներ պատմել, դրանք նմանեցրեց մարմնեղենների, այսինքն՝ հարսի և փեսայի, եղբորորդու և օրիորդի, դստեր և աղավնու,

ստինքների և խունկի, թափված յուղի, խնձորի, այծյամի, Սողոմոնի, թագավորի, Երուսաղեմ քաղաքի, պարտեզի և նմանատիպ՝ ակնահաճո, ախորժալուր և մտափափազ բաների: Քանզի ինչպես մանկանց ծնողները արժեքավոր բաները բարետես ամանի մեջ են թաքցնում, որովհետև նրանց համար արտաքին տեսքն ավելի ցանկալի է լինում, քան ներսում պահված գանձը, որպեսզի դրանով իսկ նրանց հորդորեն զգուշությամբ պահպանել ներսում եղածը, նույն կերպ եւ անուշ ու թանկագին յուղը՝ նարդոսը, ինչպես ինքն է ասում, ամանում է ամփոփվում, որովհետև անուշ հոտը բաց տեղում չի կարող մնալ, ինչպես որ Տերն իսկ սուրբ Ավետարանում ասում է, թե «Մի՛ նետեք ձեր մարգարիտները խոզերի առաջ»^{7*}, այսինքն՝ թե տկար լսելիքներին անճառելի բաներ մի՛ տվեք: Նույն Հոգին Սողոմոնին սովորեցրեց հոգու լույսով տեսածը հայտնապես չսփռել և ամենևին չթաքցնել եկեղեցու խորհուրդները՝ թե՛ փրկությունը, թե՛ Քրիստոսի մարմնանալը և թե՛ այն ամենը, ինչ կրեց մարդկանց հանդեպ ունեցած սիրո համար՝ թե՛ մահը, թե՛ հարությունը, թե՛

մյուս անգամ գալուստը: Եվ այն ամենը, ինչ որ կա այնտեղ, պահվում է որպես սրբերի անիմանալի պարգեւներ և առ Քրիստոս սրբերի սիրո տուփանք, որ արյամբ ու մահով կրեցին իրենց անձերի մեջ՝ սիրելով Քրիստոսին, ինչպես որ նա՝ մեզ, որ իր անսահման սերը մեզ հայտնելու համար ստիպված էր մարմին առնելու, նաև՝ իր սուրբ արյունը հեղել մեզ համար:

Նա, որ իբրև Աստված կարող էր մեզ իշխանաբար փրկել սատանայական բռնություններից, այդ արեց արդարությամբ և նրան բռնությամբ կապեց: Նույնիսկ դա խաղաղաբար արեց և ոչ տիրաբար:

Որպեսզի արդարությամբ և ողորմությամբ փրկվի մարդու գերությունը, այսինքն՝ մահը, որով արդարորեն դատապարտվեցինք հող դառնալ՝ պտղից չուտելու պատվիրանն անարգելու պատճառով, և արդար դատը, հակառակ որ ունեք իշխանություն, առանց արդարության չկատարեց: Եվ ինքը Ադամի մարմինը հագավ և նրա մահն իր վրա առավ և արդարությամբ փրկեց: Նաև արդարությանը ողորմություն խառնեց և ողորմությանը՝ արդարություն: Եվ այս ամենով ի

ցույց դրեց մեր հանդեպ ունեցած անսահման սերը:

Այս ամենն է պատմում Երգ Երգոցը՝ եկեղեցու պայծառագարգությունը խաչով և խորանով, Տիրոջ մարմնով և արյունով, սուրբ ավազանով և սուրբ յուղով, Հին և Նոր Կտակարաններով, առաքյալներով և մարգարեներով, վարդապետներով, քահանաներով և ճգնավորներով, կույսերով և մարտիրոսներով, քրիստոնյա թագավորներով և համայն անբիծ ժողովրդով, որ պիտի հաստատեր եկեղեցու մեջ: Եվ նմանատիպ այլ անքննելի պարգևները, ինչպես նաև ուրիշները, որոնք առակավոր խոսքերով ցույց տվեց մեզ:

Սակայն և նա [Սողոմոնը] ճշմարտապես չճանաչեց համայնը և ոչ էլ մեզ կարողացավ ճանաչեցնել, և ոչ էլ իր իմացածը մեզ հայտնապես պարզեց, այլ՝ առակով:

Թերևս մեկը հարցնի, թե ինչո՞ւ հարսն ու փեսան իբրև օրինակ դարձրեց առակի, և թե ինչպե՞ս կարելի է Աստծո խորհուրդը մարմնավոր ցանկությամբ արտահայտել, և Աստծո անչափելի սերը՝ ախտավոր սիրո օրինակով հայտնել:

Նախ՝ մեր ցանկասեր բարքն ավազելու արժանի է, քանզի այնքան ենք հեռացել Աստծո խորհուրդներից, որ Սուրբ Հոգին ստիպված էր Սողոմոնի միջոցով այս անասնական ցանկությամբ մեզ պատմել անմատչելի բաները:

Այսպիսի բաների մասին երանելի և տիեզերահոգակ վարդապետ Հովհանն ևս ասում է խոսքով, թե մենք պետք է այնպիսի սրբակրոն վարք ունենայինք, որ գրի կարիք չունենայինք, ինչպես Նոյը և Աբրահամը և նրանց որդիներն ու թոռները, ինչպես՝ Հոբը և Մովսեսը և առաքյալները, որ գրի փոխարեն նրանց սրտում էր բնակվում և ուսուցանում, սրտի տախտակների վրա էր գրում և ոչ թե Գրքերում²:

Արդ, մենք ևս պետք է հրեշտակային և լուսավոր սիրտ ստանայինք, որպեսզի կարիք չունենայինք հարս ու փեսայի առակով՝ Քրիստոսի և սուրբ եկեղեցու խորհուրդները կերպարանել, ինչպես նաև երկնային անիմանալի բարությունները կերպարանել:

Արդ, քանի որ նման պատիվը կորցրեցինք և նման աչքերը կուրացրինք, ուրեմն երկրորդին դիմենք և մարմնավորների միջոցով

տեսնենք հոգևորները, ինչպես որ պատմում է Սողոմոնը՝ Սուրբ Հոգու շնորհները ստանալով: Նաև սուրբ ամուսնությունը և հարսի հանդեպ փեսայի սերը և փեսայի հանդեպ հարսի սերը, որ զերծ է պիղծ խառնակությունից, օտար չէ Հոգու շնորհներից, որով և Քրիստոսի և եկեղեցու խորհուրդը կավարտվի, ըստ առաքյալի, թե. «Այս խորհուրդը մեծ է, բայց ես ասում եմ՝ Քրիստոսի ու եկեղեցի մեջ»^{3*}, վկայելով Սողոմոնի խոսքերը: Ուրեմն, ով որ սուրբ ամուսնությունը պղծում է պիղծ խառնակությամբ և չար գործերով, եկեղեցու խորհուրդն է պղծում և Քրիստոսին է անարգում, որ սրա օրինակն է:

Բայց մենք մեր առջև դրված խորհուրդները մեկնենք, և ցույց տանք, թե որքան սեր ունի Աստված առ մարդիկ. այնպես, ինչպես փեսան հարսի հանդեպ: Ինչպես ասում է Եսային. «Որպես փեսան է ուրախ լինում իր հարսի մոտ, այնպես ուրախ կլինի Տերը Քեզանով»^{9*}: Դավիթը ևս, Հովնաթանի ողբի մեջ ասում է. «Քո սերն ինձ համար ավելի զորավոր է, քան կանանց սերը»^{10*}: Արդ, չկա երկրի վրա ավելի պատվական և առավել սեր, քան տղամարդու և կնոջ սերը:

Իսկ եթե ոմանց այս բանը նվազ ու անկարևոր է թվում, ապա պատճառն այն է, որ սրբությամբ չեն ամուսնացել և ոչ էլ կուսությունն են սրբությամբ պահում, այլ իրենց անառակ պղծություններով իրենցից վանել են Հոգու շնորհները:

Սակայն ովքեր անբիծ և անարատ են մտենում սուրբ ամուսնությանը և Սուրբ Հոգու անճառ սիրով են միավորվում, կօրհնվեն այն օրհնությամբ, որով օրհնվելով միավորվեցին Ադամն ու Եվան:

Երբ այսպիսի սիրով և օրհնությամբ միավորվեն, նույնիսկ արյունն ու կյանքը կտան մեկմեկու համար: Սակայն ընտանիքի սիրո պատճառով՝ շատերը Քրիստոսից հեռացան և ուրացան հալածանքների ժամանակ: Ադամը ևս դրախտից և լուսեղեն փառքից մերժվեց իր կնոջ սիրո և ոչ թե Աստված լինելու պատճառով, այլ Եվայի սիրուց բաժանվելը ծանր թվաց նրան: Ճշմարտապես գիտեր, թե ինքը պիտի պատժվի Աստծուց, քանզի անգետ չէր, այլ լի էր մարգարեական հոգով և տակավին Հոգու շնորհից զրկված չէր, որովհետև պատվիրանագանց չէր եղել: Նույնիսկ պտուղն ուտելուց հետո հոգին իս-

պառ չկորցրեց, այլ, ինչպես դրախտում եղած ժամանակ, Սուրբ Հոգով ճանաչեց կենդանիների բարքերը, և երբ Աստված կենդանիներին Ադամի մոտ բերեց, ըստ նրանց բարքի և բնության դրեց յուրաքանչյուրի անունը: Եվ իր քնած ժամանակ, երբ ստեղծվեց Եվան և իր մոտ բերվեց, մարգարեությամբ ասաց, թե՝ «Սա հիմա ոսկոր է իմ ոսկորներից»^{11*}, մարգարեացավ և՛ որդեծնությունը կնոջից, և՛ հորն ու մորը լքելը, և՛ կնոջ հետևից գնալը, և՛ մեկ մարմին լինելը^{12*}: Նույնիսկ պտուղն ուտելուց հետո մարգարեությամբ իմացավ մեր փրկությունը, որ կնոջ ձեռքով էր լինելու, այսինքն՝ սուրբ Աստվածածնի ձեռքով:

Այս պատճառով էլ կնոջը կյանք կոչեց^{13*}: Եթե այդպես չէր, ինչպե՞ս կարող էր նրան կյանք կոչել, որ Ադամի բոլոր ծնունդների մահվան պատճառն եղավ:

Ինչպես ասում է սուրբ Լուսավորիչը, թե՝ «Այս ասելով նա իմացավ այն ամենը, ինչ որ պիտի կատարվեր երկրի վրա, նաև՝ Քրիստոսի ձեռքով փրկությունը»³:

Արդ, եթե փառքից ընկած ժամանակ էլ նա մարգարեության հոգի ուներ, ապա որ-

չափ ևս առավել՝ երբ փառքի մեջ էր: Այո, և ունեք առավել ևս:

Եվ Հայտնի է, ինչպես առաքյալն է ասում, թե Ադամը չխաբվեց օձի սուտ խոստումից՝ սատանայի միջոցով, այլ կինը խաբեց և հանցանք գործեց, իսկ Ադամը, կնոջից չբաժանվելու համար, կերավ պտուղը, բայց նրան սիրելու պատճառով և ոչ թե աստվածանալու համար՝ ինչպես կինը:

Այժմ ևս կանանց մեծարելու համար այրերն հարգում են կնոջ խրատը և, լավ իմանալով հանդերձ նրանց չար կամքը, որ պատշաճ չէ, բայց սիրուց մղված՝ ստիպված են կատարել: Արդ, Սողոմոնն այս իմանալով, թե մարդու մեջ եղած սերն ավելի զորեղ է, քան մյուս բոլոր սերերը, Քրիստոսի և եկեղեցու միմյանց հանդեպ ունեցած սերը ևս նույն առակով բացատրեց: Բայց միայն սրանով չի կշռվում Աստծո սերը, որովհետև որչափ որ Աստված առավել է մարդուց, նույնքան Աստծո սերն առավել է, քան ամուսնուկության սերը: Բայց ով որ այս գիրքը կարդա, կարիք ունի միտքն ու խորհուրդները մաքրելու մարմնավոր ամուսնուկության ամեն տեսակ մտածումներից և ապա միայն

տրամադրվի լսելու: Որովհետև այս գիրքը Քորեբ լեռն է, որտեղ Աստված բնակվեց: Եվ ինչպես այնտեղ, երբ գազան էր մոտենում լեռանը, քարկոծվում էր, նույն կերպ և ով գազանաբարո մտքով մոտենա այս գրքի երևելի խոսքերին, նույնը կկրի: Դրա համար պետք է մարմնական խորհուրդներին գերմանալ, խցելով մարմնի աչքերը և բանալով հոգու աչքերը, որպեսզի կարողանանք, Մովսեսի նման ելնել այս աստվածաբնակ իմանալի լեռը և նրա մեջ եղած աստվածային խոր գաղտնիքն ըստ կարելիության ի Հայտ բերել⁴: Դրանում թող առաջնորդ լինի Սուրբ Հոգին՝ մեզ տալով լեզու՝ խոսելու, իսկ լսողներին՝ ունկնդրելու միտք:

ԷԿԼԵՍԻԱՍՏԵՍ

Այսինքն՝ ժողովումն եկեղեցու, որը տրոհված էր սնտոի պաշտամունքների, որովհետև եկեղեցի կոչվում է ժողովուրդը:

Իմացա, որ մարմինը զորացնում է մանկությունը⁵:

Այսինքն՝ մեղքով ծերացած Ադամի ման-

կուլթյունը Սուրբ Հոգով գիտակցեց Սողոմոնը, այն մարմինը, որ Քրիստոս մեզանից պիտի փոխ առներ: Դարձյալ, մեր հնացած բնույթյունը, նույն մարմնով զորացած, մանկանում է՝ հագնելով լուսեղեն փառքը, որից մերկացավ:

Պիտի բարձրացնի դեպի մեր շտեմարանները:

Եթե դրախտը և կամ երկինքն իմանաս, երկուսն էլ կհասկացվեն, ուր Տերը պիտի բարձրացնի մեղքով խոնարհվածներին:

Եվ եթե մեկը հարցնի, թե ո՞վ կատարեց այս փրկույթյունը, թող լսի.

Մեր Քրիստոս թագավորը, «որ իր գահի վրա իբրև ոսկեղեն զմուսալից արմավ է»:

Թագավորող մարմինը, միանալով Աստծո խոսքին, «Աստծո գահի վրա ոսկեղեն արմավ է», մեղքերից մաքուր իբրև ոսկի, գուշակում է Աստվածույթյունը՝ մարմինն միացած, այսինքն՝ արմավենուն: Իսկ ինչու մեր մարմինն արմավենի կոչվեց՝ որովհետև մեղքերից անբիծ լինելով՝ նրա մարմինն էր: Քանզի եթե Դավիթը արդարներին վայելչականույթյան համար ծաղկած արմավենի է ա-

սում^{14*}, ապա որքան առավել՝ աստվածացած մարմինը: Եվ՝ «զմուսալից», որովհետև մեռելույթյունը կրեց: Որին մոգերի կողմից ընծա էլ բերվեց երկու պատարագներին, առ ի գուշակույթյուն այս բանի: Էլ չեմ ասում, որ թաղման ժամանակ զմուսվեց:

Թագավորը կրկին դեպի մանկություն պիտի դառնա:

Այս բանը կրկնում է առաջին խոսքերը, որ ասաց, թե՝ «մարմինը զորացնում է մանկույթյունը»: Եվ մարդը կոչվում է նաև թագավոր, որովհետև ըստ Աստծո պատկերի ստեղծվեց: «Թագավորը կրկին դեպի մանկույթյուն պիտի դառնա», այսինքն՝ առաջին փառքին, որ դրախտում ուներ:

Սիրելի՛մ՝ իր սեպակում:

Ինչպես որ առաջաբանում շտեմարան կոչեց արքայույթյունը, ուր պիտի շտեմարաներ արդարներին, նույնն այստեղ դարձյալ սենյակ անվանեց: Եվ՝ սիրելի, որովհետև մարդկանց ավելի սիրեց, քան հրեշտակներին, և հանուն այդ սիրո և մեր բնույթյունը հագավ:

Երգեցեք սերը:

Այսինքն թե՛ օրհնեցեք այն սերը, որ այնքան սիրեց, ով իր իսկ մահվամբ այնչափ պարզևներ շնորհեց մեզ:

Սաղմոսարանի մեջ ես եմ:

Երկու բան է հասկացնում այս խոսքը, թե սաղմոսարանի մեջ գրվածները՝ ես եմ, այսինքն՝ ինչ միջոցներ որ ձեռնարկեցի հանուն փրկության և կրեցի, գրված է սաղմոսարանում: Բայց ես չեմ կամենում մեկ առ մեկ բերել վկայությունները, որովհետև ձգտում եմ համառոտին: Եվ երկրորդ, եթե մեկը կամենում է սաղմոսերգել իմ սերը սաղմոսի մեջ, ես եմ, որ սովորեցնում եմ, թե ինչպես պետք է օրհնել: Այս է վկայում նաև առաքյալը, թե՛ «Երբ աղոթում ենք, չգիտենք, թե ինչպես է արժանի, բայց ինքը Հոգին բարեխոս է լինում անմոռուն հեծություններով»^{15*}: Եթե հեծությամբ է քո աղոթելը, Սուրբ Հոգին կսովորեցնի քեզ օրհնության խոսքերը՝ անբարբառ և անմոռուն:

Ընկերներիս հետ պիտի երգեմ:

Այսինքն՝ հրեշտակների հետ: Եվ թե ինչու

հրեշտակներն ընկերներ են կոչվում: Նախ՝ որ մենք ևս Արարչից ենք գոյացել, ինչպես և նրանք: Երկրորդ, որ հեռու չեղանք հրեշտակների փառքից, այլ՝ փոքր-ինչ պակաս, քան հրեշտակները, ինչպես ասում է նաև Դավիթը^{16*}:

Երգե՛ք և ուրախանա՛ք սիրելի թագավորի համար:

Այսինքն՝ մեր Քրիստոս թագավորի համար, որ սիրեց մեզ: Ուրախ լինենք կորսված փառքը վերստին ստանալու համար: Եվ օրհնության երգենք նրան:

Թեպետ ծածկված լինե՛ք տեսիլքից:

Սրանով հայտնում է, որ թեպետ Աստված անտեսանելի է, քանի որ մարմնեղեն աչքեր ունենք, անտեսության օրհնենք նրան:

Մեր աչքերը՝ հիսնավոր:

Թվերի մեջ տասը կատարյալ է: Եվ երբ միանում է այլ թվի, ասենք՝ մեկին, դառնում է տասնմեկ, և այսպես՝ ըստ կարգի: Այս է վկայում նաև Աստվածաբանը⁶: Արդ, ինչպես միավորների մեջ, նույնպես և տասնավորների մեջ: Տասը տասն՝ հարյուր է, և հինգ տասը՝ հիսուն: Հարյուրը կատարյալ

Թիվ է, ինչպես տասը, և հիսունը՝ կես թիվ՝ ինչպես հինգը: Արդ՝ մարդը կես աչք ունի, և կատարյալ չէ, այսինքն՝ հիսնավոր է: Ուրեմն, նա ինչպե՞ս կարող է տեսնել տեսողութունից, այսինքն՝ հիսնավորից ծածկվածը: Նույնիսկ հարյուրավորից, այսինքն՝ հրեշտակներից անտեսանելի է, թեպետև ո՛չ մեզ պես, բայց կատարյալ չէ:

Տերը ստեղծեց քեզ և հաստատեց քեզ:

Նա ստեղծեց առաջինը և դարձյալ նա վերահաստատեց ընկածին՝ իր նույն փառքի մեջ:

Պատրաստեց քեզ արգամից. կանանց մեջ գեղեցիկ քո մայրը:

Արգանդը սուրբ ավազանն է, և մայր է կոչվում Սիրոն եկեղեցին, որովհետև «Սիրոնը մայր է ասվում: Եվ նրա մեջ մարդ ծնվեց»^{17*}:

Մարմինը պիտի ծնվի մաքուր և անաղարտ այլ տեսողությունից:

Այսինքն՝ Սուրբ Հոգուց: Առաքյալը ևս ասում է՝ «Վերստին ծնված՝ ոչ թե ապականացու սերմից, այլ՝ անապականից՝ Աստծո կենդանի և մշտնջենական խոսքով»^{18*}:

Քանգի այսպիսին ուներ:

Այսինքն՝ թե պտուղը ճաշակելուց առաջ, այսպիսի մաքուր խղճով, անարատ, լուսավոր մարմին ունեին:

Եվ կար այս օրհնությունների օրհնությունը:

Սրանով, իր հայր Դավթի խոսքերն է վկայակոչում՝ օրհնութունների օրհնութուն ասելով, թե՝ «Տերն ասաց՝ դու իմ որդին ես, և ես այսօր ծնեցի քեզ»^{19*}:



ԵՐԳ ԵՐԳՈՅ, ՈՐ ՍՈՂՈՍՈՆԻՆՆ Է

Սողոմոն՝ խաղաղությունն է նշանակում, որով Քրիստոսին է ակնարկում, քանզի նա է մեր խաղաղությունը, ինչպես ասում է առաքյալը²⁰: Արդ, որովհետև նոր ծնունդով ծնվեցինք, աղաչենք ծնողին մայրական սիրով համբուրել մեզ, մոտեցնել աստվածային բերանը, որպեսզի երբ նա համբուրի մեզ՝ նույն բերանից խմենք այն, որ ինքն՝ ամենասուրբ բերանն աւսաց. «Եթե մեկը ծարավ է, թող գա ինձ մոտ և խմի»²¹: Այս բանի համար է ասում.

Պիտի համբուրի ինձ իր բերանի համբուրանով (Ա, 1):

Եվ մենք, լինելով անառակ որդի, համբուրյր ենք ստանում երկնավոր Հորից, ինչպես որ Ավետարանի առակում է ասվում:

Արդ, աղաչենք, որ այն սերը, որով մեզ սիրեց, ավելանա առակի համբուրյրով:

Զի բարի են ստիճքները քո գիտուց ավելի (Ա, 2):

Պատվիրանները, որ ծծվում են Հոգուց

Գրքերի ստինքներից, բարի են, քան գինին, ըստ մարգարեի ասածի, թե՛ «Քո բերանի խոսքերն ինձ համար առավել են, քան հազարավոր ոսկի և արծաթ»²²: Որովհետև կաթը, որ ստինքից է բխում, կենդանության պատճառ է, իսկ գինին՝ միայն զորության:

Եվ քո յուղերի հոտը հաճո է բոլոր անուշահոտ խուճկերից:

Այսպես են առաքինությունները և բարի գործերը, որոնք աստվածային յուղից են բուրում: Այսինքն՝ ինչ որ ուսուցանում է Սուրբ Հոգին նրանց, ովքեր նրան մոտենում և Հոտոտում են:

Քո անուղ թափված յուղի պես է (Ա, 3):

Զէ՞ որ ամանից թափվածն անզննելի է, և միայն ամանով է ճանաչվում նրա մեջ եղած յուղը: Այսպես էլ աստվածային բնությունն անզննելի, անիմանալի և անտեսանելի է, ինչպես թափված յուղը: Արդ, ինչպես որ պատվական յուղով ամանն է անուշահոտում, այդպես էլ արդարների և մեղքերից մաքրվածների Հոգիները: Արդ, եթե աստվածության անունը թափված յուղի պես է և անհասանելի է մարդկային, նաև կատարյալ

սրբերի, և ոչ միայն սրբերի, այլև բոլոր երկնայինների ճանաչողությանը, սակայն որքան հնարավոր է մեր բնությանը տեսնել թափված յուզը, տեսանք սուրբ Կույսի միությունից: Որ ինքը Տերն ասաց կույրին, երբ հարցրեց՝ «Դու հավատո՞ւմ ես Աստծու Որդուն», և նա պատասխանեց՝ «Ո՞վ է Տերը»: Եվ Տերն ասաց. «Դու տեսար նրան, և ով խոսում է քեզ հետ՝ նա է»^{23*}: Աստվածացյալ մարմինը տեսնելով՝ ասաց՝ անտես յուզը տեսնել:

Մրա Բամար օրհորդների սիրեցիկ քեզ:

Օրհորդներ նրանց է կոչում, ովքեր մեղքերից մաքրվեցին: Նույնպես և՛ հրեշտակներին:

Քեզ Բետ՝ քո յուզերի փոտերի Բետևից պիտի ընթանանք:

Քանզի նրանք, ովքեր արժանի են լինում Աստծո խոսքը ճաշակելու, և նրա հոտն առնելու, անհազաբար յուզերի հոտի հետևից են ընթանում: Եվ երբեք չեն դադարում ընթանալուց, եթե անգամ բանտ և կապանք վիճակվի կրել: Եվ հետ չեն դառնում, եթե նույնիսկ հարկ լինի թողնել որդիներին,

ինչպես որ հանձն էին առել առաջին սրբերը, ովքեր այս հոտը հոտոտեցին:

Հարսն օրհորդների պատմում է փեսայի մասին, թե նա ինչ է շնորհել իրեն:

Հարսը եկեղեցին և ժողովուրդն է, իսկ օրհորդները՝ հրեշտակները և սրբերը, ինչպես ասաց մեղքերից մաքրվածը: Արդ, հարսը պատմում է օրհորդներին, այսինքն՝ առաջին հայրերին և մարգարեներին և արդարներին, նաև՝ հրեշտակներին:

Տարավ ինձ արքան իր սեպյակը:

Թե՛ ինձ արքայություն՝ իր բնակությունը, փոխադրեց: Որովհետև մեր բուն բնակություն՝ դրախտի փոխարեն, որից մերժվեցի, առավելագույնը տվեց ինձ:

Հարսը պատմում է օրհորդներին, և նրանք ասում են.

Յճճանք և ուրախ լինեճք քեզ Բետ միասին և գիճուց առավել սիրեճք քո ստիճքերը:

Այսինքն՝ արդարները ուրախակից են լինում հեթանոսների փրկությունը և միասնաբար ցնծում են Հիսուս Փրկիչով և փոխադարձաբար սիրում են միմյանց սիրո ստինքները, որ Աստծո պատվիրաններն են:

Օրիորդները հարսիմ հայտնում են փեսայի անունը:

Օրիորդներ ասելով հասկանում է Քրիստոս փեսայի բարեկամներին. բազում անգամ պետք է մեկնել:

Ուղղությունը սիրեց քեզ:

Այս և Դավիթն է ասում. «Ուղիղ է մեր Տեր Աստվածը»^{24*}: Արդ, եթե նա, որ ուղիղն է, սիրեց մեզ, նույնը քեզանից է պահանջում՝ սեր սիրեցյալից:

Հարսն ասում է.

Սև եմ ես և գեղեցիկ, դուստրեր Երուսաղեմի, իբրև վրանը Կեդարի և իբրև Խորանը Սողոմոնի: Մի՛ գայեք ինձ, սևացած եմ, քանզի խեթ գայեց արեգակն ինձ: Մարտնչեցին իմ դեմ որդիներն իմ մոր և ինձ այգեստանի պահապան կարգեցին, բայց ես իմ այգին չպահպանեցի (Ա, 4):

Արդ, եթե ասածներն այս մարգարեական խոսքերին չեն հարմարվում, դու մի՛ պահանջիր ավելի հավաստին: Որովհետև տիեզերական երանելի վարդապետ Հովհանն ասում է, թե եբրայերենից հունարենի թարգմանելով՝ խոսքի բովանդակ իմաստը հունա-

րենով հնարավոր է հաղորդել⁷: Մանավանդ որ մենք հունարենից կամ ասորերենից ենք թարգմանել և այն հայոց լեզվում ավելի մթազնած է: Նույն բանն ասում է նաև Գրիգոր Նյուսացին սրա մեկնության մեջ⁸: Բայց խոսքի իմաստն այս է. երբ օրիորդներն ասում են հարսին, այսինքն՝ հավատացյալ դարձած հեթանոսներին, թե ուղղությունը քեզ այսպիսի մեծ սիրով սիրեց, նշանակում է այլևս մի՛ շեղվիր և ուղղությունից մի՛ հեռացիր:

Դառնում է հարսը, գոհանալով Քրիստոս փեսայից, պատմում է իր առաջին հանցանքները և կրած պատիժները: Սև եմ ես, որ այժմ նրա ողորմությամբ գեղեցկացա, դուստրեր Երուսաղեմի: Երուսաղեմի դուստրեր արդարներին է ասում, նաև հրեշտակներին ևս սովոր է դուստրեր կոչել, որ բազմիցս հանդիպում է մարգարեական գրքերում^{25*}: Զի կանանց պես համեստություն ունեն և կանանց ցեղն ավելի պատկառելի է, քան տղամարդկանցը:

Իսկ երբ ասում է, թե՛ իբրև վրանը Կեդարի (Ա 4). Կեդարը խավար է նշանակում, այսինքն՝ թե սատանայի վրան եղա ես, և Աստ-

ծո ողորմութեամբ այժմ Սողոմոնի խորան դարձաւ: Այս տաճարի մասին է ասում՝ Սողոմոնի խորան, թե Սողոմոնի խորանի նման Աստծո տուն եղաւ: Ապա դարձյալ առաջվա տգեղութիւնը հիշելով՝ վրա է բերում՝ ասելով:

Մի Ապելք ինձ, զի սևացած եմ (Ա, 5):

Մեղքով սևության մասին է խոսքը: Ուրովհետև հանցանքներն իմ ըմբռնելով՝ խեթ նայեց ինձ արեգակ Աստված: Սրանով հասկանում է դառնութեան պատիժները, որ [Աստված] տվեց իրեն, ինչպես նաև Աստծու երեսից և դրախտից զրկվելը: Եվ այս ո՞ր հանցանքի համար եղավ:

Ասում է հարսը.

Իմ մոր որդիները մարտնչեցին իմ դէմ: Իմ մոր որդի սատանային է կոչում, զի մեկ Արարչից են ստեղծված:

Եվ դրեցին ինձ պահապան այգետանի, բայց ես իմ այգին չպահպանեցի:

Սրանով էլ հասկացվում է այն, որ ասում է. «Աստված դրեց նրան փափկութեան դրախտի մեջ՝ այն մշակելու և պահելու»^{26*}: Ոչ թե մշակման կամ պահպանութեան կա-

րիք ունեն դրախտը, ուր կար ամեն տեսակ վայելչութիւն և աստվածային պահպանութիւն, այլ արդարութիւն գործելու և առաջին վարդապետների պատվիրանները պահպանելու:

Հարսն ասում է փեսային:

Պատմի՛ր ինձ, որ սիրեցիր անձն իմ, ո՞ւր ես հովանում հոտը քո, ո՞ւր ես հանգստի տաճում միջօրեին, որպէսզի գալիս չմոլորվեմ քո ընկերների երամակների մէջ (Ա, 6):

Արդ, երբ հարսը փեսային պատմում է, թե որ տգեղութիւնից և սևութիւնից ինչպիսի՞ գեղեցկութեան փոխվեց, փեսան անհիշաչար է լինում հարսի գործած անօրենութեան համար՝ իր անսահման սիրուց մղված: Նույնպես և հարսը, նրա սիրով բորբոքված, աղաչում է փեսային պատմել, թե որն է այն ճանապարհը, որ խնամվում է հովվի ձեռքով՝ առաջնորդվելով դեպի անստվեր լույսը, որպեսզի կարողանա թշնամու որսից անպարտելի մնալ: Որովհետև միջօրեին լույս և անստվեր արև է, այս պատճառով է ասում՝ միջօրեին: Գուցե սատանայական վարքով սևացած լինեմ նախկին մեղքերով և հե-

ուացած բարեբեր արոտավայրերից: Ինչպես որ ինքը Տերն է ասում Սուրբ Ավետարանի մեջ. «Ես եմ քաջ հովիվը, եթե մեկն ինձ հետ գա՝ պիտի ապրի»^{27*}, և այսպես՝ հաջորդ խոսքերը:

Փեսան ասում է հարսին:

Եթե չճանաչես անձդ, ո՛վ գեղեցիկդ կանանցից, գնա հոտերի հետքերի հետևից և ուլերդ արածեցրու հովիվների վրանների մոտ (Ա, 7):

Հարսի հարցման համեմատ փեսան պատասխանում է՝ հիշեցնելով այն գեղեցկությունը, որ տվեց նրան, և զգուշացնելով՝ ճանաչելու իր անձը, ըստ մարգարեի ասածի, թե «նայիր քո մեջ»^{28*}: Արդ այն է ասում, թե հիշիր առաջին պարգևները, այսինքն՝ դրախտը և այն փառքը, որ ստանալով ապականեցիր մեղքով և դարձյալ ողորմություն գտար, ոչ թե քո արած բարի գործերի համար, այլ՝ իմ ձեռքով, որ քո մեղքերի տեղը՝ հատուցում եղա, ինչպես ասում է մարգարեն, թե՝ «Տերն իմ փոխարեն հատուցում արեց»^{29*}: Բայց եթե այս ամենը չմտածես և դու չնայես քո մեջ և ինքդ քեզ չխոնարհես քո ամբարտավանություններից կա՛մ քո

ուղիղ վարքով և կա՛մ քո այլ բարի գործերով, որ (լինում է) չարից հետ կանգնելով, (բայց), եթե հպարտանաս քո նախահոր պես և այնուհետև բարի ընթացքով չքայլես, դրա պատճառով դուրս կգաս հոտիցս, որ բողոքով և կաթով է պտղաբերում, և փոխանակ իմ արոտավայրին, կխառնվես ուլերի խմբին, որ բոլորովին անպտուղ են, զի ոչ բուրդ և ոչ կիթ ունեն, որ օտարացած են բարի հովիվիս վրանից, եւ զնալով օտար հոտերի հետևից, որոնք իրենց իրենց հոտ են կարծում, բայց հոտ չեն, այլևս չես գտնի բարի հովիվին: Ուրեմն հո՛գ տար փրկությանդ, որ պարգևեցի քեզ, պատերազմելով աներևույթ փարավոնի կառքերի և երիվարների դեմ իմ անպարտելի զորությամբ: Այս է, որ ասում է:

Քե՛զ Փարավոնի կառքին լծված ձիուս պիտի անանցանես, մերձավոր իմ (Ա, 8):

Թե՛ նրա կառքն ընկղմելով՝ ինձ մերձավոր արի՛ անցկացնելով մեղքերի ծովից: Արդ, ես փութաջան եմ համառոտին, եթե ավելի երկար խոսք ես կամենում լսել, դիմիր Գրիգոր Նյուսացուն⁹:

Օրիորդները ասում են հարսին.

Այսինքն՝ փեսայի բարեկամները, որոնք են առաքյալները, մարգարեները և վարդապետները, ովքեր հանապազ խրատում են մեզ մտաբերել մեր վերստին ստեղծումը, և թե այն առաջինից որքան առավել է՝ այլաբանելով տատրակի¹⁰, մանյակի, ոսկու, արծաթի և ձիու մասին:

Քանզի գեղեցկացան ծնոտները քո տատրակի ծնոտների անան (Ա, 9, 10):

Որովհետև այս թռչունը սրբասեր է, և եթե պատահի, որ իր արուն մեռնի, նա մինչ ի մահ այլևս իր նմաններից ոչ մեկի հետ չի զուգավորվի: Արդ, ծնոտը նմանեցնելով տատրակի ծնոտի, ցանկանում է ասել, որ Աստծո դեմքն ու պատկերն ես և սրբությամբ ես զարդարված որպես տատրակ, որ նրա պատվիրանների ահը մանյակի պես զարդարում է պարանոցդ, ոսկու և արծաթի նման սուրբ և մաքուր ես մեղքից: Դրանց է նմանեցված, և ոչ թե ճշմարիտ ոսկի և արծաթ է: Քանզի մարդու մտքին հասու չէ այն հոգևոր գեղեցկությունը, որով զարդարված է մարդը և Աստծո հանգստարանը որպես ձի, որը միայն Պողոսին է նմանվում և հոգով

նրա նմաններին, ով անճառ բաներ լսեց:

Արդ, այս ասացին օրիորդները, վկայելով փեսայի խոսքերը, որ առաքինազարդ հարսին նմանեցրեց իր ձիուն, որով փարավոնի դեմ մարտնչեց:

Այս օրինակները ցույց են տալիս առավելազույն պարզեցնելու հասնելը, որ ոչ միայն քո մեջ կհանգրվանի, ինչպես ձիու վրա, եթե բարի գործերով զարդարվես, այլ նաև իր գիրկը կընդունի քեզ: Սրա համար է ասում.

Մինչև որ Արքան իր գիրկն ընդունի քեզ (Ա, 11):

Բայց ինձ այնպես է թվում, թե այս խոսքերի կատարյալ մեկնությանը հասու չեղար, այս պատճառով ստիպված եմ դարձյալ համառոտել:

Փարավոնի կառքին լծված ձիուս պիտի անանեցնեմ քեզ, մերձավոր իմ:

Արդ, ձիու մասին հարցնելու է. եթե քոնն է, ապա ինչպես է լծված Փարավոնի կառքին, և կամ՝ ո՞վ է Փարավոնը: Լսիր և կմեկնես: Ձին Աստծո մարդկային բնությունն է, քանզի հանգստարան և բնակարան էր Աստվածության, որ պարծենում էր խրոխտանա-

լով իբրև խստերախ ձի, և դարձյալ մեղքերի պատճառով կառավարվեց սատանայից, որով և ակնարկում է Փարավոնին, որի հետ Հիսուս մարտի բռնվեց խաչով, և այդ խաչի օրինակն էր Մովսեսի գավազանը, որով հերձեց ծովը և ընկղմեց Փարավոնին, այսինքն՝ սատանային և իր պատկերը, որ իբրև ձի կապված էր նրա կառքին, դարձյալ իր մեջ ամփոփեց:

Այս է, որ ասում է. «Փարավոնի կառքին լծված ձիուս»: Որովհետև Աստվածուծյան կարող զորությունը կործանեց Փարավոնի կառքը: Եվ դարձյալ. երևույթ ձին, որ զարդարված էր իբրև հենց թագավորական, և լծված Փարավոնի կառքին, իմն էր և այն, որովհետև իմն է ամեն ստեղծված:

Արդ, իմ այն զարդարված ձիուն նմանեցրի քեզ, որ վարեցի բռնությամբ, որոնք ասում էին՝ փախչենք Իսրայելի երեսից: Նույնպես և մանյակով զարդարված, որով դասվեց կարգի մեջ, դարձրեց իր երիվարը, ընկղմելով աներևույթ Փարավոնին ծովն հրեղեն, և իրենը դարձնելով՝ քեզ այնչափ պերճացրեց առաքինությամբ, որ նրա երիվարն էիր, որ փոխանակ քո վրա նստելու,

առավ իր գիրկը, առավել ևս նույնիսկ իր ուսերի վրա դրեց, ինչպես ասում է Տերն Ավետարանում:

Հարսն ասում է իրեն և փեսային.

Նարդոսն իմ բուրեց հոտն իր: Իմ եղբորորդին, ստաշխի ծրարի պես, ստիճքներիս մեջ պիտի հանգչի (Ա, 12):

Իմ եղբորորդիս ծաղկյալ ողկույզ է Ենգադդի այգեստանի մեջ (Ա, 13):

Այն պարարտ է այգիների բերքով. նախ և առաջ իմացիր, որ ով փեսա է կոչվում, կոչվում է և եղբորորդի, որովհետև Բանն Աստված հրեաներից մարմնացավ, իսկ հրեաներն ու հեթանոսները եղբայր են, քանզի երկուսն էլ Ադամից են:

Իմ եղբորորդին, ստաշխի ծրարի պես, ստիճքներիս մեջ պիտի հանգչի:

Այս այն է, որ ասված է Ավետարանում, թե՛ «Ով որ ինձ հավատա՝ կհաստատի, թե՛ ճշմարիտ է Աստված»^{30*}:

Արդ, ով հավատում է նրան և նրա պատվիրաններն ու երկյուղն, իր սրտի մեջ ծրարելով, ժողովում է, պատվական յուզի ու անուշահոտ խոսնկի պես է, մանավանդ, որ

ուրիշներին ևս տարածում է հոտը, ինչպես Առաքյալն է ասում. «Աստծո առաջ Քրիստոսի անուշ հոտն ենք փրկվածների և կորսվածների մեջ»^{31*}: Բայց կա կենդանի, որ մեռնում է անուշահոտությունից, ինչպես մեղավորները, որ չեն ընդունում անուշահոտ գրքերի վարդապետությունը, որ ստիճանների, այսինքն՝ սրբերի սրտերի մեջ է ամփոփված:

Նրանք, ովքեր ընդունում են, մի կյանքից մյուսն են փոխվում, իսկ ովքեր չեն ընդունում, մի մահից՝ մյուսը: Ինչպես ասում էր Քրիստոսի մեծ նահատակ Իգնատիոսը, թե՛ «Քրիստոսին իմ մեջ եմ կրում»: Երբ այս բանը լսեց Տրայանոս կայսրը, ասաց. «Հրամայում եմ այրել Իգնատիոսին, որ ասաց, թե՛ «Խաչյալին իր մեջ է կրում, որպեսզի խաչյալը ևս իր հետ միասին այրվի»¹¹:

Փեսան ասում է հարսին.

Ահավասիկ ես՝ մերձավոր իմ, ահավասիկ ես՝ գեղեցիկ իմ, աչքերը քո աղավնիներ են (Ա, 14):

Այսինքն՝ թե, որովհետև մերձեցար ինձ և օտարացար մեղքերից, առաջին գեղեցկությունը,

յունը, որ դրախտում ունեիր, ստացար, և ոչ միայն այս պարգևին հասար, այլև աղավնու աչք ստացար ինձ նայելով, այսինքն՝ Սուրբ Հոգուն: Քանզի մեկը ինչին որ նայում է, մտքով նրան է նույնանում: Արդ, որպեսզի մեկնություն մեջ չերկարեմ, իմացիր, որ համառոտն եմ գերադասում:

Հարսն ասում է փեսային.

Ահավասիկ եղբորորդիս, գեղեցիկ է նա, գահույքի մոտ հովանավորված (Ա, 15):

Մեր տան գերանները մայրիներ են, և անճիներ են դարավանդները մեր (Ա, 16):

Փեսան ցույց է տալիս աղավնու պես մաքուր հոգու աչքերը, հարսը վկայում է, թե՛ ինչ որ չէի կարողանում տեսնել այնժամ՝ մինչ տակավին փոխված չէի աղավնու բնություն, այժմ աղավնի լինելով՝ տեսնում եմ քեզ, իմ եղբորորդի: Զի թեպետ եղբորորդիս եղար՝ մարմնավորելով իմ տգեղությունը, բայց և գեղեցիկ ես՝ Աստվածությունդ ինձ հետ խառնելով, ինչպես և մարգարեն է ասում. «Մարդկանց բոլոր որդիներից ավելի գեղեցիկ կտեսնվի»^{32*}:

Մեր գահավորակի վրա՝ ու Աերքո (Ա, 16):

Այսինքն՝ Քրիստոսին մեզ տուն և հովանի է անվանում տնօրինութեամբ:

Մեր տների գերանները մայրիներ են (Ա, 16).

Այդ փայտերը անփուտ ու անուշահոտ են, և հարմար են շինութեան համար, ինչպես որ մեր Տիրոջ մարմինն է պատշաճում շինելու համար այս տունը, և կամ ինքներս մեզ մաքրելու՝ այնտեղ բնակվելու համար: [Տիրոջ] տունը հենց մենք ենք, ըստ Պողոսի:



ԳԼՈՒԽ Բ

Փեսան ասում է իր անձի և հարսի մասին. Փեսան ավելի է բացահայտում իր գեղեցկութունը, որ հարսի հոգու աչքով աղոտ էր տեսնվել, պատմեց անտեսանելին և անպատմելին:

Ես՝ ծաղիկ դաշտերի, շուշան հովիտների (Բ, 1):

Ի՛նչ զարմանալի բան, ինչպես որ Տիրոջ տնօրինյալ մարմնով անտեսանելին մեզ տեսանելի դարձրեց, նույնպես ջանում է ցույց տալ այն բարեզարդությունը, որ հագավ երկիրը՝ Քրիստոսին ընդունելով: Եվ ինչպես ծաղիկներով, նաև հովիտների շուշանով պսակված երկրի տեսքը զվարճացնում է տեսնողի աչքը, այնպես էլ նրանք, ովքեր տարածում են իրենց հոգիները իբրև դաշտեր իմ բնակութեան համար, և իբրև հովիտներ հորդում են ինձնով և փթթում շուրջս՝ տեսնողներին պարգևելով անպատմելի ցնծություն:

Եվ ոչ միայն այս, այլև՝

Որպես շուշանը՝ փշերի մեջ, այնպես մերձավորն իմ՝ դուստրերի մեջ (Բ, 2):

Այսինքն՝ ոչ միայն ես՝ փեսաս, գեղեցիկ եմ ծաղիկների պես, այլև ինձ մերձ եղող հարսը, որ դուստրերի մեջ այնպես է վայելչանում, ինչպես շուշանը՝ փշերի մեջ: Դուստրեր անվանում է սատանային հարսնացողներին, այսինքն՝ մեղավորներին: Փշերը մեկնուլթյան կարիք չունեն՝ հիշելով Ավետարանի փշերի և որոմի առակը, որ Տերը չհրամայեց հանել ցորենի միջից մինչև հունձքի ժամանակը, այսինքն՝ աշխարհի վերջը: Իսկ Երգ Երգոցը կարևոր և վայելուչ համարեց նաև արդարների գտնվելը մեղավորների մեջ: [Չթողեց], որ առավել պայծառ երևա արդարների վարքը, որպեսզի անարգների միջից ընտրի պատվականին: Եվ երկրորդ՝ թերևս փշերը շուշանի փոխվեն՝ տեսնելով նրանց պիտանի լինելը:

Հարսն ասում է փեսային.

Ինչպես խնձորն՝ անտառի փայտերի մեջ, այնպես եղբորորդին իմ՝ դուստրերի մեջ (Բ, 3):

Տե՛ս, որ աստիճան առ աստիճան հավե-

լում է փեսայի գովեստը: Այն, ինչ առաջ շուշան և ծաղիկ անվանեց, այժմ՝ խնձոր: Քանզի ծաղիկը միայն աչքն է զվարճացնում, իսկ խնձորը տեսքով՝ աչքը, հոտով՝ քիմքը, և ապա կերակուրի գորուլթյուն ունի: Եվ այն, ինչ որ այնտեղ փուշ ասաց, այստեղ՝ անտառ, որ մարդիկ անտառացել են մեղքերով, ինչպես ասում է, թե՛ «Ապականեց նրան անտառի խոզը»^{33*}:

Եվ դուստրեր անօրեն հայրերի որդիներին է ասում.

Նրա հովանու Գերքո փափագեցի Գառել և Գառեցի. և Գրա պտուղը քաղցրացավ կոկորդիս մեջ:

Սա շատ մեկնուլթյան կարիք չունի, նրանք, որոնք անտառներին և վարսավոր ծառերին էին ձոնում. արգ խնձորն է ծանուցվում, որ կենաց փայտից մեզ տրվեց. փափագով նրա հովանուն ենք ապավինում և անշարժ հավատով նստում նրա շուրջը: Նստելը՝ թյուր վարդապետությունների մեջ համառողներին է ասում. Եվ պտուղը նրա քաղցրացավ կոկորդիս մեջ: Դրանով թե՛ կենարար խորհուրդը և թե՛ կենաց փայտի

պտուղը պետք է հասկանաս և թե՛ աստվածային բերանից մեզ տրված խոսքը: Երկուսն էլ հասկացվում են, ըստ մարգարեի, թե՛ «Քրիստոս մեջ քո խոսքերն ավելի քաղցր են, քան բերանիս մեղրը»^{34*}:

Հարսն օրիորդներին ասում է.

Տարեք ինձ տունը գինու (Բ, 4):

Ասում է, թե չեմ հագենում հեռվից բերված բաժակից, կամ աստվածային խոսքերից. զի անհազ ցանկություն ունեմ և անաշխատելի ընթացք, արդ, տարեք ինձ այս բարիքների տունը, որովհետև չունեմ այնպիսի փափագ առ փեսան և պատվիրանները նրա, որ ձեր միջոցով տեսնեմ և լսեմ ու դրանով հագենամ: Գինին զվարճության առիթ է, և այս կյանքում սիրում են նրանով մոռացնել տրտմությունը, այս պատճառով գինի է կոչում Աստծո պարգևների շնորհը:

Կարգեցեք ինձ վրա սեր:

Շատ մի հետամտիր խոսքերի հարմարմանը: Հավանիր միայն այն պատճառը, որ առաջ ասացի: Կարգեցեքն այստեղ հասկացվում է այնպես, ինչպես մի այլ տեղ է ասում. «Արթնացրե՛ք սերը»^{35*}: Սերն Աստված է,

որովհետև անունն Աստծո ճանաչված է սեր, ինչպես առաքյալն է ասում, թե «Աստված սեր է, և ով ապրում է սիրո մեջ, Աստծո մեջ է բնակվում, և Աստված նրա մեջ է»^{36*}: Արդ, փեսայի սիրով ջերմացած հարսն աղաչում է փեսայի բարեկամներին՝ պատգամներ չհղել հեռվից, ինչպես առաջ անում էին մարգարեները, այլ առաքելաբար բերել Քրիստոսի տունը, որը գինի կոչեց: Որովհետև երեսի տեսությամբ սերն առավել է բորբոքվում երկու սիրեցյալների միջև: Այս է՝ կարգեցեք ինձ վրա սեր:

Եվ հաստատեցեք ինձ յուղերով (Բ, 5):

Յուղը ողորմությունն է: Արդ, ուզում է ասել, թե փեսային տեսնելով, հոգուս աչքերի բացմամբ ավելի լավ կճանաչեմ այն անչափելի ողորմությունը, որ մեզ արեց, և ավելի պիտի ամրապնդվեմ և ողորմությամբ ողորմություն պիտի գտնեմ, ինչպես ասում է Աստվածաբանը¹²:

Կիսեցեք վրաս խնձոր:

Խնձորը բարի գործերի գեղեցկությունն է: Ինչպես որ խնձորն իր տեսքով և հոտով ախորժելի է նաև ճաշակելուց առաջ, նույն

ձեռով առաքինություն տարբեր տեսակները զվարթացնում են տեսնողներին:

Որովհետև խանդակաթեւ սիրով:

Անչափելի է այն սերը, որ բռնկվեց Քրիստոսի գալստյամբ սրբերի մեջ, որոնք անհագ մնացին՝ այն սիրո համը ճաշակելով: Որովհետև չբավականացան պես-պես նեղություններով, որ կրեցին կա՛մ սատանայից, կա՛մ մարդկանցից, այլև իրենց կողմից ևս ավելացրին անթիվ նեղություններ՝ նմանվելով Դավիթ մարգարեին, որ ասաց այլոց նեղությունների մասին, թե. «Շուրջս մահվան երկունքը շրջեց և դժոխքի վշտերը գտան ինձ»^{37*} և ավելացրեց նաև իր անձի նեղությունը, ինչպես ասում է, թե՝ «Նեղություն և անձկություն գտա»^{38*}: Ինչպես սուրբ Լուսավորիչը¹³ և Մեծն Պողոսը և նրանց նման մյուս սրբերը, որ հանուն Քրիստոսի կրած նեղությունները պարգևներ էին համարում^{39*}, խնձորի օրինակի պես: Ինչպես որ Տրդատն էր ասում սուրբ Գրիգորին, թե՝ Ա՞յդ է ուրախությունը: Եվ նա ասում է. Այո՛, այս է ուրախությունը¹⁴:

Թող Արա ձախը լինի գլխիս վրա, իսկ աջը՝ գրկի ինձ (Բ, 6):

Այս նույնն այլ տեղ ինքը երկրորդում է՝ «Աջ կողմում՝ երկարությունը կյանքի, իսկ իր ձախ կողմում՝ փառք և հարստություն»^{40*}: Արդ, ասում է, թե իմ սերն ու սիրտը այլ կերպ չեն լիանա, քան միայն նրան հարելով և նրան տեսնելով: Թեև նեղությունների բազում փորձություններ վրա հասնեն, միայն աջն ու ձախը ինձ հովանի և պահապան պահիր:

Հարսն օրիորդներին ասում է.

Օրիորդներ՝ հրեշտակներն են կոչվում. մաս այն մարդիկ, որոնք հրեշտակացան:

Կերպվեցան ձեզ, դուստրե՛ր Երուսաղեմի, անդաստանի զորությունների և ուժգնությունների վրա, երբ արթնանաք, արթնացրեք սերը՝ մինչև կամեա (Բ, 7):

Անդաստան՝ աշխարհն է կոչվում. նաև՝ երկինքը, իսկ անդաստանի զորություն և ուժգնություն՝ Աստված, որով հաստատվեցին աշխարհն ու երկինքը, որոնք անշարժ սեղմված և փակված են մնում զորությամբ և ուժգնությամբ անդաստանի, այսինքն՝ Աստծո: Նաև հրեշտակները և մարդիկ, որ

անդաստանների մեջ են բնակված՝ երգումով են հիշվում: Արդ, այն զորությունն են երգմանեցնում հառնել, աղոթել և արթնացնել նույն համակ սերն առ Քրիստոս, որպեսզի իր կամքը լցնի մեր մեջ: Այս է, որ Տերն անձամբ աղոթել հրամայեց. «Քո կամքը թող լինի, – ասում է, – ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա»: Արդ, վերին Նրուսաղեմի դուստրերը, որոնք երգվեցնում էին, հրեշտակներն են, և՛ սրբերը, որ երկրից են:

Լսելով փեսայի ձայնը՝ հարսն ասում է.

Իմ եղբորորդու ձայնն է (Բ, 8):

Տե՛ս, ահա, որ բերանով խոստովանելուց առաջ, ծածուկ բաներն է ճանաչում, սակայն սպասում է պաղատանքի, որպեսզի ուրիշները ևս ճանաչեն նրա արդարությունը: Քանզի թեպետ ողորմած է, բայց նաև՝ արդարադատ: Իրեն ձայնելը և փափագելով պաղատելը՝ մեր պարտքերի վճարումն է համարվում: Արդ, երբ հարսը, այսինքն՝ եկեղեցին, աղաչում էր օրիորդներին՝ հեթանոսներին տանել գինու տունը, այլ ոչ թե՛ հանցավորների պատգամով՝ փեսայի երեսից հեռու, և երգվեցնում էր Նրուսաղեմի դուստրերին արթնացնել սերը, որպեսզի կատարվի նրա

կամքը՝ որպես բարիք մարդկանց հանդեպ, փեսան չսպասեց բարեխոսների աղաչանքին, այլ լսելով աղաչողի մաղթանքներն՝ հաշտություն առաջարկեց և ընդառաջ գնաց, ինչպես Ավետարանում է ասում անառակ որդու առակով^{41*}: Քանզի ինքը [Տերը] չըջում է որոնելով արժանավորներին, և որոնք սիրում ու փնտրում են կանխատեսությունամբ ճանաչված նրա կամքը:

Հարսն ասում է.

Իմ եղբորորդու ձայնն է, ահավասիկ Գա վագելով եկավ լեռների վրայով, խաչտալով՝ բլուրների վրայով:

Ձայն է կոչում մարգարեներից մեզ առաքված լուրը: Ինչպես լսեցինք, այնպես էլ տեսանք, այսինքն՝ Բանն Աստծո: «Որ բազմիցս և բազում օրինակներով խոսեց մեր հայրերի հետ՝ մարգարեների միջոցով, օրերի վախճանին մեզ հետ սրանք խոսեց իր Որդու միջոցով»^{42*}: Այս է, որ ասում է.

Ահա Գա վագելով եկավ լեռների վրայով, խաչտալով՝ բլուրների վրայով:

Լեռներ և բլուրներ սատանայի բռնություններն են կոչվում, որ ոտնակոխ արեց իր

գալստյամբ, ըստ մարգարեի ասածի, թե՛ «լեռները և բլուրները խռովվեցին, սասանվեցին, և դողը պատեց նրանց»^{43*}: Նաև նույն իշխանությունը Տերն առաքյալներին տվեց լեռների վրա, ոչ միայն խայտալ լեռնացած մեղքերի վրա, այլև դրանք ծովը նետել:

Նման է եղբորորդիս իմ այծյամի կամ եղբիկների ձագերիս Բեթելի լեռների վրա (Բ, 9):

Տեսողության համար եղբորորդուն նմանեցնում է այծյամի, թեպետ շատ էլ պատշաճ չէ, քանզի նա ստեղծելուց առաջ իսկ տեսնում է ինչ որ կա մարդու մեջ, ասվածի համեմատ, թե՛ «Մինչև քեզ ստեղծելը որովայնից գիտեմ քեզ»^{44*}: Սակայն, որովհետև անասունների մեջ այծյամից լավ տեսնող չկա, այդ պատճառով նրան Քրիստոսի տեսողության օրինակը դարձրեց: Նույնպես, որովհետև եղնիկը օձի սատակիչն է, ինչպես Տերն՝ աներևույթ օձի՝ Բեթելի լեռների վրա: Ըստ եբրայերենի, Բեթել երկիրն է կոչվում, ուր և հանում է օձից փրկվածներին:

Հարսն օրիորդներին նշան է տալիս փեսայից:

Ահավասիկ կանգնած է նա մեր որսի ուտում:

Որմը՝ կույսից առած մարմինն է: Պատուհանին հառած՝ մարգարեների համար է: Նայելով վանդակապատերին՝ նկատի ունի օրենքները: Այսինքն՝ թե Աստվածության լույսը նախ նրանցով մեր մեջ նշուլվեց, ապա՝ կույսից մարմին առնելով:

Պատասխանեց ինձ եղբորորդին իմ և ասաց.

Արի՛, ե՛կ, մերձավոր իմ, գեղեցիկ իմ, աղավաղի իմ (Բ, 10):

Այս այն կոչն է, որ Քրիստոսով եղավ, որ ասաց. «Եկեք ինձ մոտ բոլոր հոգնածները»^{45*} և այլն: Եվ գեղեցիկ՝ ավազանի լվացման համար է ասում, աղավաղի՝ հոգու զգեցման համար, իմ մերձավոր՝ որովհետև Քրիստոսին մարմնակից եղանք:

Վասնզի, ահավասիկ, ձմեռն անցավ (Բ, 11):

Ձմեռ [ասելով]՝ կռապաշտությունն է հասկանում, որ տարածված էր երկրի վրա: Անցավ ևս, այսինքն՝ եղբորորդու գալստյամբ, որ Քրիստոսն է: Նույնպես՝ Անձրևներն անցան և զնալով հեռացան, նշանա-

կում է սատանայի խաբեությունը, որ բարի է ձևանում, մինչդեռ կորստյան անձրև է, ինչպես Ջրհեղեղի ժամանակ, որից հալածական գնացին դեերը, այսինքն՝ գնալով հեռացան:

Ծաղիկները երևացին երկրում մեր, Էտելու ժամանակը հասավ (Բ, 12):

Սրանով ցույց է տալիս գարնան գեղեցկությունը, որ Քրիստոսով եղավ՝ ձմռան հալածումով: Եվ ծաղիկ [է կոչում]՝ առաքինությունը և աստվածապաշտությունը գարնարված արդարների բազմությունը:

Էտելու ժամանակը եկավ, այսինքն՝ սրբերի միջից պիղծերին կտրելու և էտելու:

Տատրակի ձայնը լսելի եղավ մեր երկրում:

Ինչպես որ թռչունները գարնանը երամով թռչում և տարածվում են երկրով մեկ, նույնպես և երբ հոգևոր գարնան գալստյամբ ցնծում են սրբերը, մանավանդ առաքյալները և մարգարեները և վարդապետները, և նրանք, ովքեր նրանց քարոզությունը հրեշտակային և հոգևոր երգերով զօր ու գիշեր օրհնում են Աստծուն: Այս է.

Տատրակի ձայնը լսելի եղավ մեր երկրում:

Այգիները ծաղկեցին և տվեցին հոտն իրենց (Բ, 13):

Այգի՝ հավատացյալներին անվանեց, որոնք ծաղկեցին այլևայլ ու զանազան գույներով, պտուղներով և հոտերով, մեկը՝ մարտիրոսությունը, մեկը՝ զանազան առաքինություններով, մեկը՝ բարեգործություններով:

Արի՛, ե՛կ, մերձավոր իմ, գեղեցիկ իմ, աղավա՛հի իմ, կատարյալ իմ:

Նույն առաջին խոսքերը կրկնեց՝ հաստատելով իր կոչումը, թե՛ ոչ թե վանդակապատի կամ պատուհանի միջոցով, այսինքն՝ մարգարեներով կամ օրենքով, այլ հենց իմ սեփական կոչով՝ ել և եկ: Եվ կրկնելով խոսքերը՝ ցույց տվեց, թե արքայության ճանապարհին կանգ առնել չկա, քանի դեռ մարմնի մեջ [ենք գտնվում], ըստ Տիրոջ ասածի՝ «Օ՛ն, ելեք գնանք այստեղից»^{46*} և ըստ աստվածաբանի մեկնության¹⁵:

Եվ եկ, աղավա՛հի իմ, այն վեմի հովանու ներքո, որ գտնվում է պատվարի մոտ պարսպի (Բ, 14):

Տե՛ս, թեպես և աղավնի եղավ, բայց մշտա-

պես պահանջում է զորանալ մաքրության մեջ և չհամարել իրեն կատարյալ մաքրության մեջ: Եվ ով որ համարի, թե նրա մեջ է, թող զգուշ լինի, որպեսզի չլինի թե ընկնի:

Վեմիդ հովանու անքո:

Վեմ՝ Քրիստոսին է կոչում, քանզի առաքյալն ասում է, թե վեմը՝ ինքը Քրիստոսն էր^{47*}: Իսկ պարիսպ՝ պատվիրաններին է ասում, ինչպես կա Գրքի մեջ: Արդ, հրամայում է այսուհետև ղեկավարել Ավետարանով և դրա պատվիրաններով և ոչ թե՝ օրենքներով: Դա է վկայում նաև առաքյալը, թե՛ «Դուք, որ օրենքով եք արդարանում, չեղված եք Քրիստոսից»⁴⁸:

Եվ պարսպի պատվարի մոտ:

Թեև Ավետարանի պատվիրանները պահելով՝ հեռու չես օրենքներից, քանզի «օրենքների լրումը Քրիստոսն է»^{49*}, ասում է առաքյալը: Եվ ինքը Տերն է ասում, թե՛ «Օրենքները լրացնելու եկա»^{50*}: Սրանով ցույց է տալիս, թե Օրենքները թերի էին: Արդ, կատարելով բովանդակ լրումը, կմերձենաս պարսպին, այսինքն՝ օրենքներին:

Ցույց տուր ինձ դեմքդ, և լսելի արա խոսքդ, քանզի ձայնդ քաղցր է, և դեմքդ՝ գեղեցիկ:

Երգ երգոցը սա փեսայի խոսքով է ասում, իսկ Գրիգոր Նյուսացին՝ հարսի խոսքով է ասում¹⁶, որին մենք էլ համաձայն ենք: Արդ, հարսն, աղավնի լինելով և ճանաչելով վեմը, այսինքն՝ Քրիստոսին, աղաչում է. Ցույց տուր ինձ դեմքդ, և այլևս ինձ հետ մի խոսիր մարգարեներով և օրենքներով, այլ որչափ տեսանելի ես մարմնավորներին, ցույց տուր ինձ զգալապես քո դեմքը, որպեսզի տեսնեմ և հագեանամ քո փառքի երևումից, և որչափ կարող է տանել մարդու լսելիքը, լսեցրու ինձ քո ձայնը, որպեսզի ավետարանական քարոզությունդ հովանուներքո արածելով՝ օտար հովվի հետևից չգնամ: Զի եթե պատուհանից, այսինքն՝ մարգարեների հույլի միջից այդքան ախորժելի էր քո ձայնը, ապա որչափ առավել ևս, եթե քո դիմաց արժանանամ լսելու իմ փրկության ավետյաց լուրը:

Փեսան ասում է օրիորդներին.

Բռնեցեք մեզ համար աղվեսներից, այգիների փոքրիկ ապակահիչներից, որպեսզի այգիները մեր ծաղկեն (Բ, 15):

Այս հրեշտակներին է ասում, որ ի սպասավորութիւն մարդու առաքված անհրաժեշտ հոգիներ են: Եվ դարձյալ՝ առավելապես առաքյալներին է ասում, որոնք որսորդներ եղան բովանդակ տիեզերքի: Քանզի նրանք նախ և առաջ աղվեսին որսացին ի կորուստ՝ հալածելով այգիներից: Աղվես՝ սատանային է ասում, իսկ այգիներ՝ եկեղեցուն, որ հավատացյալ անձերն են, որոնց առաքյալները դուրս կորզեցին աղվեսի ժանիքներից, որ հակառակ էր ճշմարտութեան, որ և մահվանից դեպի կյանք փոխադրեցին: Այս Տերն էլ ասաց, երբ առաքյալներն ուրախութեամբ իր մոտ դարձան և ասացին. «Տեր, դեերը ևս քո անունով հնազանդվում են մեզ»^{51*}: Ասաց. «Ահա տվեցի ձեզ իշխանութիւն, ոտնակոխելու օձերին և կարիճներին, նաև թշնամու ողջ զորութիւնը»^{52*}: Մինչ ուրիշ առիթով լեռ, վիշապ կամ իշխան է կոչում սատանային, այստեղ՝ առաքյալների ստացած ահարկու զորութեան պատճառով՝ ասում է՝ աղվես և փոքր:

Հարսն այսպես է ասում.

Եղբորորդիս իմն է, և ես՝ Գրանը: Որ հովվում է շուշանների մեջ, միգչև տիվը լուսավորի, և ստվերները շարժվեն (Բ, 15, 16):

Հարսը, տեսնելով իրեն աղվեսի որսից ազատված, խնդամտութեամբ ինքն իրեն տալիս է երկրագործին, որ ցանկապատի միջնորմը քանդեց: Եվ քանի որ այլևս օրենքների որմով իր փափագած միավորումից չի բաժանվում, ուստի ասում է, թե ես իմ եղբորորդունն եմ, և եղբորորդիս՝ իմը: Եվ դարձյալ՝ քանզի ճաշակեցի ես նրա սերը, տեսա նրա ցանկալի դեմքը և լսեցի խոսքի ձայնը՝ ես նրա մեջ եմ, և նա՝ իմ մեջ: Արդ, այսուհետև չի կարող երկրային ցանկութիւնը կամ կարիքը ինձ բաժանել նրանից: Ինչպես որ եղավ իսկ, և տեսանք այս մարտիրոսների և ճգնավորների կյանքի ասպարեզում: Ինչպես ասում է առաքյալը, թե՛ «Ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց. նեղութիւնը, թե՞ անձկութիւնը, թե՞ հալածանքը»^{53*} և ըստ Գրոց:

Որ հովվում է շուշանների մեջ, միգչև տիվը լուսավորի, և ստվերները շարժվեն:

Այսինքն՝ թե այլևս չի կերակրում խոտով,

որ անասնացած մարդկանց կերակուր է: Խոտ՝ մարմնավոր վայելքներին է ասում, և ոչ թե դրանով, այլ հոգևոր կերակուրներով է կերակրում, որ կերան իսկ և զմայլվեցին բոլոր սրբերը, և սնտի ցանկություններն արհամարհեցին, և սպասում են միջօրեի ծագմանը, որ վերջին օրն է, և այլևս հավիտյան պիտի չչարժվեն: Այսինքն՝ անցնում են և ապա սրբերը հագենում Քրիստոս փեսայի հանդեպ ունեցած անչափելի ծարավով:

Դարձյալ՝ եղբորորդիս նման է այծյամի, կամ խնկաբեր լեռների վրայի եղնիկների ձագերին:

Այսինքն՝ թե սրահայաց աչքովդ տե՛ս ամբարիշտների արարքները [Դու], որ բարձունքի վրա ես նստում, և ոտքիդ տակ ճգմիր օձերին և վիշապներին, ինչպիսին որ է եղնիկների բնությունն իսկ՝ ճգմել օձերին և սպանել:



ԳԼՈՒԽ Գ

Գ իշերն անկողնիս մեջ փնտրեցի Արան, որ իմ անձն էր սիրում: Փնտրեցի Արան և չգտա: Կանգեցի Արան և ինձ ձայն չտվեց (Գ, 1):

Այս խոսքերն ընդարձակ մեկնություն կարիք ունեն, և հնարավոր չէ սեղմ գրել: Բայց քիչ պիտի խոսեմ: Ավելի ընդարձակ խոսք կամեցողը թող դիմի Գրիգոր Նյուսացուն:

Երբ հարսի ճանաչողությունը հասու եղավ այսքան առակաների, որ թվարկվեց և հասավ Քրիստոսի գիտություն¹⁷ կատարին, ուր գտնվում ենք, հետո հանդարտորեն կարծեց, թե հասել է գիտություն և անհոգացավ: Ինչպես հոգնած և անկողնու մեջ հանգչած մարդը, նույնպես և սա, որ ի խնդիր մեծ գանձերի, այսինքն՝ մեծ, և լուսավոր և ճշմարիտ գիտություն հասնելու ցանկությամբ է հուզավառվել, և երբ հասավ, հանգչեց ինչպես անկողնում, և չհիշեց Պողոսի խոսքը, թե՝ «Փոքրիշատե գիտենք, և փոքրիշատե մարգարեանում ենք»^{54*}, և թե՝ «Այժմ փոքրիշատե խելամուտ եմ»^{55*}:

Գիշեր՝ կոչում է այս կյանքը, մյուս կյանքի բաղդատմամբ: Եվ միթին, և աղջամուղջով ծածկված մարմնով ոգիներ, ինչպես տան կամ բանտի մեջ, որոնք անտեսանելի են դրսուլմ մնացողների համար: Մարգարեն ևս այն բանտ և կապանք է կոչում՝ ասելով, թե՛ «Կտրեցիր կապանքներն իմ»^{56*} և «Տե՛ր, հանի՛ր անձն իմ բանտից, գոհանում եմ քո անվամբ»^{57*}:

Արդ՝

Գիշերն աճկողնիս մեջ փնտրեցի Արամ, որ իմ աճճն էր սիրում: Փնտրեցի Արամ և չգտա: Կանչեցի Արամ, և իճճ ձայն չտվեց:

Այսինքն՝ թե որքան էլ փնտրեմ Աստծո զորուլթյունը, կամ նրա փառքի երևումը, կամ անվան մեծուլթյունը, կամ պարգևները, որ պատրաստել է արդարների և սրանց նմանների համար, օտարացած եմ մնում: Եվ մարգարեններից, առաքյալներից ու վարդապետներից հասած գիտուլթյունը մեզ տրվեց Սուրբ Հոգով, և նույն ինքը Տիրոջից ավետարանվեց: Եվ այս չհամարվեց կատարյալ գիտուլթյամբ գտնված, ինչպես որ հանդերձյալում են լինում գիտուններ, որոնք այնտեղ արժանավորվում են, և այնպես են հա-

մարում, թե ճայն իսկ չի տրված և ոչ էլ խոսված է սրանց մասին այստեղ: Որովհետև մարմնեղեն լեզուն չի կարող խոսել այն կենաց բաները, ինչպես և Պողոս Առաքյալն է ասում, թե՛ «Լսեցի անճառելի խոսքեր, որոնք մարդ հարկ չէ, որ խոսի»^{58*}: Ի վիճակի չէ, ասում է՝ չկարողանալու փոխարեն:

Ելա և շրջեցի քաղաքների մեջ, հրապարակների և փողոցների մեջ, և փնտրեցի Արամ ու չգտա: Կանչեցի Արամ և ձայն չտվեց իճճ (Գ, 2):

Քաղաք և փողոց և հրապարակ է անվանում երկիրքը և նրանում գտնվող հրեշտակներին, որոնց գիտուլթյան վերին խորհուրդներին նրանցից հասու լինել չկարողացավ:

Գտա՞ն իճճ պահապանները, որոնք շրջում էին քաղաքի մեջ: Հարցրեցի, թե՛ տեսա՞ք Արամ, որ իմ աճճն էր սիրում (Գ, 3):

Եվ նրանք չպատասխանելով հասկացրին, թե նրանք ևս հասու չեն գիտուլթյանը: Քանզի որչափ մարդ հասնում է գիտուլթյան, այն հիմք է լինում առավել բարձրագույն գիտուլթյան:

Երբ մի փոքր անցա Արամցից, գտա սիրեց-
յալիմ իմ (Գ, 4):

Քանզի կա գիտուած յոն, որ բովանդակ
ծանոթութեան հասնելու փափագողներին
արգելք է լինում գտնելու այն. սրա համար
է ասում, թե՛ երբ մի փոքր անցա նրանց
հետ, գտա, ապա հավատին և Սուրբ Հոգուն
ապավինեցի: Սրա նման են նաև Պողոսի
խոսքերը, թե՛ «Երբ աշխարհն իմաստութ-
յամբ չճանաչեց Աստծուն, Աստված հաճեց
քարոզութեան խենթութեամբ ապրեցնել հա-
վատացյալներին»^{59*}:

Փեսայիմ գտնելով՝ ասում է.

Բռնեցի Արամ և չթողեցի, միճև որ մտքեցի
Արամ մորս տունը՝ ինձ հղացողի սեպակը:

Հավատի ըմբռնման մասին է ասում, որով
մտնում ենք մոր մոտ, մեզ հղացողի տունը և
սենյակը, որ է՝ Դրախտը և Երկինքը:

Հարսն երկրորդ անգամ երդվեցնում է օ-
րիորդներին:

Երդվեցնում եմ ձեզ, դուստրեր Երուսաղեմի,
անդաստանի ուժգնությունների և զորության
վրա, թե պիտի արթնանաք, զարթնեցնեք սերը՝
միճեւ կամեմա (Գ, 5):

Սա մեկ անգամ մեկնել եմ: Բայց դու տե՛ս
Քրիստոսի սիրո առավելութունը. ում մեջ
բնակվում է (այն), որքան անհագ է դարձ-
նում մարդկանց: Այնչափ հասած լինելով
գիտութեան և շնորհների, իբրև թե հասած
չլինելով այն երդումն է տալիս, երբ դեռ
անհոստութեան և տգիտութեան մեջ էր:
Արթնացնում է սերը՝ իբրև ոչ կատարելա-
պես ստացած:

Փեսան հարսի մասին ասում է.

Ո՞վ է սա, որ ելնելով գալիս է անապատից,
իբրև ծառացած ծխի խնկափոս մի սյուն, իբրև
գմուռու և կնիքուկ, որոնք ելնում են ամեն տեսակ
բարձրացող յուղերի փոշիներից (Գ, 6):

Փեսան կամենում է ցույց տալ հարսի գե-
ղեցկութունը, այսինքն՝ հավատացյալներից
հրեշտակներին հարցնելով, որոնց փոխաբե-
րաբար խորհրդանշում են օրիորդները, թե
ես դրան սև եմ ճանաչում՝ իր կերպարանքը
դրախտում կորցնելու համար: Արդ, որտե-
ղի՞ց է սրան այս կերպարանքը և անուշահո-
տութունը, որ, անապատից առած, գալիս է
դեպի երկնքի բարձունքը: Անապատ ասելով
[հասկանում է] չար գործերից անապատա-
ցածներին: [Այս բարձրութեանը] Դավիթը ևս

կամենում էր հոգու թևերով հասնել: Իբրև ծխի խնկահոտ մի սյուն՝ [ասելով] իրեն պարուրած առաքինությունը և բարեգործություններն է անվանում:

Իբրև խուճկեր, զմուտս և կնդրուկ, որոնք էլ-նում են ամեն տեսակ բարձրացող յուղերի փոշիներից:

Զմուռսը մեռելություն նշան է, կնդրուկը՝ անուշահոտ վարքի: Ուրեմն, տե՛ս, նախ պետք է մեղքերի մարմինը մեռցնել, և Քրիստոսին մահակից լինել և անուշահոտ վարքով Քրիստոսի մաքրությունը հավասարվել, ապա պետք է լինել Քրիստոսի հարս և բարձրանալ Քրիստոս փեսայի մոտ:

Օրհորդներն այսպես են ասում:

Ցանկանալով հարսին ավելի ճանաչեցնել տալ փեսայի վայելչությունն ու գեղեցկությունը՝ փեսային Սողոմոն են անվանում, որովհետև Սողոմոն խաղաղություն է թարգմանվում, որ Քրիստոսն է, որը «եղավ մեր խաղաղությունը ու ցանկապատի միջնորմը քանդեց»^{60*} և Աստծուն մարդկանց հետ հաշտեցրեց:

Ահա Սողոմոնի գահը, նրա շուրջը, վաթսուհ սպառազիցյալներ՝ Իսրայելի զորավարներից (Գ, 7):

Իսրայելը տասներկու ազգերի բաժանվեց: Եվ տասներկու անգամ հինգը վաթսուհ է անում: Նույնպես մարդու մեջ հինգ զգայություններ են: Արդ, ցանկանում է ասել, որ ինչպես օրենքներում տասներկու ազգերը իսրայելացի դարձան, և յուրաքանչյուրը, հինգ զգայություններով մաքրված, հաճոյացավ Աստծուն, և ըստ տեսանելի [պատմության]՝ ինքը՝ Իսրայելը Սողոմոնի թագավորության կամակատարն ու գահն էր, նույնպես և այժմ այս Սողոմոնի համար բովանդակ տիեզերքը գահ է, ուր հանգչում է Աստծո կամքն:

Նրա շուրջը սպառազիցյալներ՝ Իսրայելի զորավարներից:

Արդ, նոր իսրայելի մեջ զորավար են բուր սուրբ հավատացյալները:

Ամենքը սուսերավոր են և պատերազմի մեջ հմուտ (Գ, 8):

Այս սուրը՝ Հոգու սուսերն է, որ Աստծո խոսքն է, որով սովորեցին պատերազմել աներևույթ թշնամու դեմ: Արդ, ամեն սուր

ազգրի վրա է: Որովհետև հնարավոր չէ մարտնչել մարմնի և արյան դեմ, եթե սուրը մշտապես կրել չկարողանա, բայց ճշմարտապես ազգրի վրա է հաստատված, որով մարտնչում են իշխանությունների և պետությունների դեմ:

Գիշերային արհավիրքներից:

Հայտնի է, թե գիշերային և խավարային արհավիրք է կոչում երկնքից ընկածին:

Սողոմոն արքան իր համար գահավորակ պատրաստեց Լիբանանի փայտից, արա պունեքը գործեց արծաթից, արա կոնքերը՝ ոսկուց և արա ձեղումը՝ ծիրանից, և արա մեջը ակաճազարդ է, [որ] սփռված է սերը Երուսաղեմի դուստրերի (Գ, 9):

Բազմիցս ասել եմ, թե Սողոմոնը Քրիստոսին է խորհրդանշում, որովհետև Դավթի զավակն է, և՛ թագավոր և արդարադատ, խաղաղասեր և տաճարաշեն:

Սակայն սրա մասին խոսքը քիչ է, իսկ Քրիստոսի մասին՝ շատ, որովհետև Դավթի արմատն է և երկնի ու երկրի թագավորը, ավելի արդարադատ և ողորմած, և ողջ աշխարհի խաղաղության առիթ, աշխարհից վերացնելով կռապաշտությունը, երկնայիննե-

րի խռովությունը երկրայինների հետ, որով և ողջ երկիրը Աստծո տաճար եղավ Քրիստոսի ձեռքով փոխելով օրինակը ճշմարտության՝ թագավորով և տաճարներով, որոնք եկեղեցիներն են:

Սողոմոն արքան իրեն գահավորակ պատրաստեց անփուտ փայտերից (Գ, 10):

Լիբանանի փայտը հեթանոսներն են: Եվ Դավթին է վկայում, թե՛ «Պիտի մանրի Լիբանանի մայրիները»^{61*}: Եվ նույնպես՝ պիտի մանրի որթի նման, որ Սովսեսը մանրեց. դա սատանան է և իր կամակատարները: Եվ մեզ կռապաշտությունից կտրելով՝ իրեն գահույթ պատրաստեց, քանզի սուրբ է Տերը և սրբերի մեջ է հանգչում: Եվ Եսայու միջոցով ասում է. «Ես ու՞ր հանգչեմ և խաղաղվեմ, եթե ոչ հեզերի եւ խոնարհների մեջ, որ դողում են իմ խոսքերից»^{62*}: Նաև առաքյալն է ասում, թե՛ «Մեծ տանը ոչ միայն ոսկեղեն և արծաթեղեն անոթներ են, այլև՝ խեցեղեն ու փայտեղեն»^{63*}, և վրա է բերում. «Եթե մեկն իր անձն այստեղ սրբի այսպիսի բաներից, պատվական անոթ կլինի»^{64*} և այլն: Ցույց տվեց, թե մարդը տունկերի և բույսերի պես միայն սննդով չէ, [որ ասորում է], այլև՝ կա-

մբողջ, թեկուզ ոսկի լինի, թեկուզ արծաթ, թեկուզ խնձոր, թեկուզ դառնաբեր, թեկուզ քաղցրաբեր, թեկուզ փշաբեր: Ինչպես և մեր առաքյալն ու լուսավորիչն է այս բանն ասում¹⁸ բազմիցս: Արդ, Լիբանանի փայտից՝ ոմանք ոսկեղեն, ոմանք արծաթեղեն, ոմանք ծիրանի են լինում՝ փոխելով չարը բարու: Բայց պատշաճ է, որ գահավորակը բովանդակ եկեղեցին հասկացվի, և նրա մեջ են վարդապետները և կույսերը և պես-պես առաքինություններով զարդարված սրբերը: Ինչը և բացահայտում է առաքյալը՝ [ասելով], թե. «Սրանք են, որոնց Աստված դրեց եկեղեցու մեջ, նախ՝ առաքյալները, երկրորդ՝ մարգարեները, երրորդ՝ վարդապետները»^{65*}, և ապա նրանք, որ իրար հետևից շարում է: Եվ մեկ-մեկ չի թվարկում, որովհետև գահավորակի բուն պատվականներն այս երեք կարգերն են, այսինքն՝ եկեղեցու շինությունը:

Սերը Երուսաղեմի դուստրերի: Ելե՛ք և Գալեցե՛ք, դուստրե՛ր Երուսաղեմի, Սողոմոն արքայի այն պսակին, որով պսակեց Գրան մայրը իր փեսայության օրը և իր ուրախության օրը (Գ, 11):

Սերը Երուսաղեմի դուստրերի: Երուսա-

ղեմի դուստրերին՝ հրեշտակներին, կոչում է իրեն ուրախակից, սիրակից և գոհացողակից: Եվ որի պատճառով փոխվեց մեղքերով անտառացած Լիբանանը և եղավ գահավորակ Քրիստոսի՝ պես-պես առաքինություններով, զարդարված փշեպսակով, որ իր գլխին դրեց Սողոմոն արքան, այսինքն՝ Քրիստոսը, և օրհնեց երկիրը, անեծքներն իր գլխին կրելով, որ ասաց, թե՝ «Փուշ և տատակ թող բուսնի քեզ»^{66*}: Նաև Սուրբ Լուսավորիչն է այսպես մեկնում¹⁹, թեև Գրիգոր Նյուսացին՝ այլ կերպ²⁰: Բայց որ սա նրանից գերիվեր է, հազարավորների կվկայաբերենք: Սակայն երբ ասում է, թե՝ Ելե՛ք, նայեցե՛ք, Երուսաղեմի՛ դուստրեր, սրանով վերին Երուսաղեմի դուստրերն են հասկացվում. նրանց կանչում է, որ տեսնեն իրենց Տիրոջը, որ այնպիսի պսակ է կրում, որը հանուն եկեղեցու հանձն առավ զարմանալի մեծագործություններ: Դարձյալ ներքին Երուսաղեմի դուստրերին է ասում, որոնց Տերն ինքը դարձավ և ասաց. «Դուստրեր Երուսաղեմի, մի՛ արտասվեք ինձ վրա»^{67*}:

Որով պսակեց իրեն իր մայրը:

Միտնին մայր է ասում, քանզի Միտն նշանակում է մայր: Եվ ովքեր պսակեցին Տիրոջը, նրա մեջ էին բնակվում: Այս պատճառով էլ մորից է ասում պսակվելը:

Իր փեսայության օրը և իր սրտի ուրախության օրը (Գ 11).

Արդ, դու մի զարմացիր, որ չարչարանքների օրը կոչում է ուրախության և փեսայության օր: Վասնզի ինքը Տերն իսկ փառավոր կոչեց այն օրը և այն ժամը, ասելով, թե «Հասավ ժամը՝ որպեսզի փառավորվի Մարդու Որդին»^{63*}: Որովհետև մերը՝ իրենն է ասում, այս պատճառով էլ այնպիսի պսակ հանձն առավ, և մենք այն օրն իսկ փեսայացանք և ուրախացանք, որ հինգ հազար տարի տրտմության մեջ էինք դրախտի կորստյան պատճառով և ընկանք փառքից, որ ունեինք լուսեղեն զգեստով, որից մերկանալով՝ անարգվեցինք:



ԳԼՈՒԽ Դ

Փեսան ասում է հարսին. Ահավասիկ կաս գեղեցիկ իմ, մերձավոր իմ գեղեցիկ, քո աչքերն աղավաղեցի եմ (Դ, 1):

Այսինքն՝ թե ներկայիս քո այդ գեղեցկությունը գոյացավ իմ այլակերպ պսակվելով, այսինքն՝ իմ գլուխը փշով պսակելով, որով դու ինքդ իսկ գեղեցկացար, երբ իմ փշեղեն պսակով ինձ վրա վերցրի քո մեղքերի տգեղությունը: Ահա այս գեղեցկությունն ավազանի մաքրությունն է բացահայտում, որ Սուրբ Հոգու միջոցով նոր ծնունդինը եղավ: Կրկնելով հայտնեց, թե առավել գեղեցիկ կերպարանք ունեն նրանք, որ նոր ստեղծումով են ստեղծվում և նախկինից ավելի անարատ են պահում: Եվ այս գեղեցկությունը առավել է, քան առաջինը, որ ուներ Ադամն իր փառքի մեջ:

Ինչպես ասում է երանելի Գրիգոր Աստվածաբանը, աստվածային այս ստեղծումը՝ առաջինից էլ բարձր է, որովհետև այն ստեղծումը թեև լուսավորություն էր ու անցավ և անտրտում կյանք էր՝ անմահություն մը հան-

դերձ, սակայն փորձը սահմանափակ էր. եթե պահեր, ապա անմահ կմնար²¹: Բայց այժմ Աստուծու որդի լինելը և այս բոլոր պարզևեղիքին արժանանալը, աստվածային Սողոմոնը զարմացած և սքանչացած կերպավորում է այս աշխարհի տենչալի թվացող բաներով, որոնցով ցանկանում է ցույց տալ անճառելի շնորհների մեր պարզելը:

Այսուհանդերձ չկարողացավ մինչև գիտության վերջը հասնել, թեպետ օրինակով ջանում է ակնարկել: Բայց, արդ, ասա՛, երևացող այս գեղեցկությունների մեջ կա՞ նրա օրինակը, որի մեջ դարձյալ գոյացանք, ո՛վ փեսադ մեր Քրիստոս: Սակայն ինձ այնպես է թվում, որ իբրև մանուկների կամենում ես կաթ տալ և ոչ թե հաստատուն կերակուր, որովհետև այս կյանքի մեջ ապրելով՝ դեռ մարմնավոր ենք և հոգևոր բաները չենք կարող հասկանալ:

Քո աչքերն աղավաղվեցին եմ, բացի քո լուսնուց:

Ահա վկայեց այն խոսքը, թե՛ մաքուր ես և աղավնու պես միամիտ^{69*}: Բայց որչափ էլ որ կաս, լռությամբ փակված ես, չկարողա-

նալով հայտնել, քանզի չեա կարող լսել, որովհետև ականջամաններդ խեղեցն են և ի վիճակի չեն անճառելի բաները լսելու:

Վարսերը քո այծերի երամակների պես եմ, որոնք երևացին Գաղատայից:

Այսինքն՝ թե մեռյալի պես է մազը, անկենդան, առանց ցանկության, անհպարտ, աշխարհից օտարացած և մեռած, որովհետև վարսն անզգայական է: Ինչպես որ աչքը տեսնող է, չարին հակամետ և միամիտ դեպ բարին, նույնպես էլ վարսերի կամ մազի պես հեռու ես ամեն տեսակ ախտերից:

Ատամները քո խուզված ոչխարների պես եմ, որոնք ելնում եմ լողարանից (Դ, 2):

Վասնզի մաքուր և ախորժելի է լվացվածը և բրդի բեռից թեթևացածը:

Ամենքը երկվորյակ եմ, և նրանց մեջ ամուլ չկա:

Այսինքն՝ թե որբեկայրիների զավակներն ավելի շատ են, քան ամուսին ունեցողների, և ոչ միայն քեզ են մաքրություն վարդապետում ատամներդ իրենց որոճողությամբ, այլև այլոց են ծնում՝ վարդապետական խոսքով խրատելով և որոճողաբար ուսուցանե-

լով՝ սուրբ Գրքերի մանրամասն մեկնութ-
յամբ:

Կարմիր լարի պես են քո շուրթերը, և քո
խոսքերը՝ գեղեցիկ (Դ, 3):

Նախ՝ գովելի է այն կարմրությունը, որ
արյունով են ներկվում շուրթերը: Ապա՝ այն,
որ ավետարանական խոսքերով են բար-
բառում և համակ հոգևոր խոսակցություն-
ամբ: Բայց լարը պետք է աչքաթող անել, ո-
րովհետև շատ բան լարով է թակարդվում:
Արդ, ասում է, որ երբ կարմրած շրթունքնե-
րից խոսք է ելնում, լար է և մարդկանց
թակարդում է և բարությունը առ Աստված
քաշում:

Նուսն կեղևի պես են այտերը քո, բացի քո
լուրջությունից (Դ, 3):

Նուսը երկու բնություն ունի. քանզի ե-
րևացողները խիստ են, իսկ աներևույթներն՝
ախորժելի և շատ առողջարար:

Արդ՝ Քրիստոսի հարսը, այսինքն՝ եկեղե-
ցին, վրայից երեսը սքողել է առաքինական
վարքով, իսկ քայլվածքը՝ խիստ և տաժանե-
լի, այսինքն՝ արտաբուստ նուսն նման:
Սրանք դրսից՝ նուսն ձևով: Իսկ ինչ որ ներ-

սում է ամբարված հույսն է և սերը, և հա-
վատն առ Աստված, որի հույսով ամեն ինչ
համբերում է: Որովհետև ինչպես նուսն մեջ
ամբարվածները ուտելու համար շատ ցան-
կալի են, նույնպես էլ առաքինի վարքը
քրտնալի է և մեծ տքնությունը լեցուն, իսկ
նրա պտուղը ամբողջությամբ փառավոր է և
փառավորված, որի համար մարգարեն աս-
ում է. «Թագավորի աղջկա ողջ փառքն իր
ներսում է»⁷⁰:

Բացի քո լուրջությունից:

Թե որքան գեղեցիկ ես՝ լուրջյան մեջ է,
և առայժմ չի հայտնվում, քանի դեռ մար-
մինդ տկարություն է պատած: Ըստ այնմ՝
«ինչ-որ աչքը չտեսավ, ականջն էլ չլսեց»:

Դավթի աշտարակի պես է պարանոցը քո,
որ շինված է Թալպիովի մեջ:

Դավիթը նշանավոր աշտարակ է շինել, և
դրա վայելչությունն է նմանեցնում հարսի
պարանոցը:

Հազար վահաններ են կախված Գրանից, և
բոլոր նետերը սպառազինյալների:

Հազարը շատություն է ցույց տալիս, ըստ
այնմ թե՛ «Աստծո կառքերը բյուրավատիկ

են և կառավարողները՝ հազար»^{71*}: Առաք-
յալը ևս հավատը վահան է կոչում, ասելով.
«Առեք վահանը հավատի»^{72*}, որ կախված է
պարանոցի շուրջը, որով գեղեցկացած՝
Դավթի աշտարակին է նմանեցնում:

**Երկու ստիճաները քո, իբրև երկու ուլ երկվոր-
յակ, որ արածում են շուշանների մեջ (Դ, 5):**

Երկու ստինք է ասում, որովհետև մար-
դու մեջ երկու բնություն կա՝ մարմին և հո-
գի: Եվ մարմինը, ունենալով երկու աչք՝ հո-
գին և միտքը, ընտրություն է արածում, ո-
րովհետև փշերը թողնելով՝ շուշաններով է
անվում, այսինքն՝ հոգևոր կերակուրներով:

**Միճև որ տիվը պայծառացա, և ստվերները
շարժվեց (Դ, 6):**

Տիվը և լույսը ո՞վ է, եթե ոչ Սուրբ Հո-
գին, և նույն ինքը Քրիստոսը, որ մտքի մի-
ջից ստվերն է հալածում: Ըստ այնմ թե՛ «քե-
զանից է, Տե՛ր, Կենաց աղբյուրը, և քո երե-
սի լույսով ենք տեսնում լույսը»^{73*}: Որով և
նրանցով լուսավորվում են միտքն ու սիրտը՝
որ ստինքների մեջ են: Որոնցից էլ կաթը, հո-
գևոր կենդանության շնորհիվ ժողովվելով,
մակարդվում է՝ այլոց կերակուր տալով:

Արդ, այս բանն առաքյալը ևս համառոտ
կերպով մեկնում է, թե անձն՝ ամբողջ եկեղե-
ցին է, և նրա մեջ բաժանված շնորհները՝
զգայարաններն են, որպես մարմնի անդամ-
ներ, որ մեկ առ մեկ թվարկում է՝ կոչելով
աչք, շրթունք, ատամ, այտ, պարանոց և ո-
րովայն^{74*}:

Աչք ասելով՝ հասկացվում են մարգարե-
ները, որոնք կանխատես եղան այս շնորհնե-
րին, ինչպես ինքն՝ այս Սողոմոնը և իր նման-
ները:

Պարանոցը, որի վրա հաստատված է
գլուխը, և որին միացած է ողջ կենդանութ-
յունը՝ վերևում, ներքևում, հարմարված՝ բո-
լոր զգայություններով հանդերձ, որ Դավթի
աշտարակին նմանվեց, որ շինեց Թալպիով-
թի մեջ՝ պատերազմողների դատավարու-
թյան համար, որ Մեծն Պողոսն է և իր նման-
ները, որոնց վրա Քրիստոսն է կեցած, որտե-
ղից էլ ամենայն կենդանությունն է բաշխ-
վում եկեղեցուն:

Եվ որովայնը, ինչպես մեր սուրբ Լուսա-
վորիչը և Հովհանն և նրանց նմանները²², ո-
րոնց համար վկայում է Տերը, թե՛ «Գետերը
նրա որովայնից պիտի բխեցնեն ջրերի կեն-

դանությունը»^{75*}, այսինքն՝ Հոգու շնորհները: Նույնպես և ատամը՝ կարմրած շրթունքներով, որ որովայնից են վեր բերված, որոճալով մանրում է Գրքերի խոսքերը, անհայտները հայտնի դարձնելով, և մարդկանց իմացնելով, նաև լուսավորելով մյուս նվաստ անդամները Եկեղեցու մարմնի մեջ, որ բովանդակում է մարդուն և Քրիստոսի հարսն է լինում:

Գնացի միայնակ Ջմուռսի լեռը և բլուրը Կնդրուկի:

Այս ակնարկելով, երանելի Հովհանն ասում է, թե այս խոսքը նմանվում է մարգարեի այն խոսքին, թե՛ «Հնձանը կոխեցի միայն, և հեթանոսներից ոչ ոք չկար հետս»^{76*}. այն խոսքի նման, թե՛ զնացի միայնակ զմուռսի լեռը և բլուրը կնդրուկի²³: Արդ՝ զմուռսի լեռ ասելով հասկանում է մահը, որ մեզ համար հանձն առավ՝ որպես միայնակ մենամարտիկ պատերազմելով: Եվ բլուրը կնդրուկի, որովհետև միավորյալ Աստվածությամբ խաչի վրա կոխեց հնձանը:

Ամենևին գեղեցիկ ես, մերձավոր իմ, և ոչ մի արատ չկա վրադ (Դ, 7):

Այսինքն՝ այդպես անարատ և գեղեցիկ եղար իմ խաչելությամբ ու մահվամբ և Գառի արյունովս, որով աշխարհի մեղքերը ջնջեցի: Նաև՝ ովքեր մերձենում են նրան և նրա մեռելությանը մասնակից լինում, կրում են նաև նրա անուշահոտությունը՝ կնդրուկի օրինակով:

Եվ Լիբանանից, հարս, եկ այստեղ Լիբանանից. պիտի գաս և անցնես հավատի գլխով, կատարից Սանիրի և Հերմոնի, առյուծների որջերից և ինձերի լեռներից (Դ, 8):

Այսինքն՝ մեղքով անտառացած լեռից գալով՝ սկզբից հավատացիր Հորդանանի ավազանից ծնվածին, որովհետև Հորդանանն այս երկու լեռների միջից է ելնում և բխում, որով լվացվեց հարսն ու գեղեցկացավ, նա, որ գազանաբնակ էր առյուծների և ինձերի հետ, որոնք զորացած և բռնացած էին, իբրև առյուծ՝ ինձի պես էր՝ խայտաբղետ կռակաշտությամբ:

Սրտապնդեցիր մեզ, քույր մեր հարս, սրտապնդեցիր մեզ քո մի աչքով և մի քառամանյակով քո պարանոցի (Դ, 9):

Սա՛ ասում են փեսայի բարեկամները, որ հրեշտակներն են, եկեղեցուն, որ հարսն է:

Սրտապնդեցիր: Թե՛ մեզ հոգի տվիր և սիրտ՝ տեսնելու՝ ինչ որ չգիտեինք, այսինքն՝ նախախնամող սերը, որ ցույց տվեց մարդկանց, ավագանի ծնունդը, որդեգրությունը և արքայությունը ևս, որ խաչի մահվամբ արեց: Որի մեռելությունն հաղորդակից եղար զմուսսով և կնդրուկի անուշահոտությունամբ էլ փառակից ես լինելու: Արդ, քո միջոցով ճանաչեցի նրան և նրա զորությունը և սերն առ մարդիկ: Որով և հրեշտակներն ասում են քրոջը, որ եկեղեցին է. դու մեկ աչքովդ առաջնորդեցիր մեզ, որ քո համեմատությամբ առավելություն ունենք բազմատությունամբ և պարանոցով: Արդ, մենք երկու բնությունամբ, այսինքն՝ տեսողությամբ և պարանոցով հզոր ենք, սակայն քո միջոցով ենք տեսնում և քեզանից ենք լսում քեզանից սովորած այսպիսի անճառ խորհուրդը և փրկությունը:

Այս է, որի համար առաքյալն ասում է, «Պիտի հայտնվի եկեղեցու ձեռքով երկնի իշխանություններին և պետություններին Աստծո բազմապատիկ իմաստությունը»^{77*}: Եկեղեցին քույր կոչելով՝ հրեշտակների հետ մեր բնության անխախտ ազգակցությունը

մատնացույց արեց: Եվ պարանոցի քառամանյակը ցույց է տալիս որ հոժար կամքով մտանք Քրիստոսի լծի տակ: Արդ, ասաց, թե փեսայի կանչելով եկար Լիբանանից և այսպիսի շնորհներ հագար, բայց այդ գալը միայն բավական մի համարիր, այլ նորից ու նորից եկ և այսպես շարունակ ընթացքի մեջ պիտի լինես, այսինքն՝ առաքինի վարքի մեջ, ըստ մարգարեի, որ ասում է, թե. «Պիտի գնա նա զորությունից զորություն»^{78*}: Որ վկայում է նաև Գրիգոր Աստվածաբանը, թե՛ առաքինություն մեջ պետք է լինել մշտաշարժ և դյուրաշարժ²⁴: Այս պատճառով էլ առաջ ասաց՝ եկ Լիբանանից, հետո դարձյալ կրկնում է.

Ձի գեղեցկացան ստինքներդ քո, քույր իմ հարս, գեղեցկացան ստինքներդ քո գիւուց, և հոտն հանդերձների քո ամենայն խուճկերից առավել (Դ, 10):

Ստինքները սովոր են կերակուր տալ մարդկանց, որոնք ծնունդով երկիր են գալիս: Նույն ձևով ստինքների օրինակով է գուշակում եկեղեցու մեջ բուսած սրբերի սրտի մաքրությունը, որովհետև սիրտը ստինքների մոտ է: Բայց քանի որ առաջ ա-

սաց, թե ստինքները կաթ են տալիս, ինչո՞ւ ուրեմն գինու փոխեց և ասաց, թե գինուց գեղեցկացան: Արդ, այսպես պետք է իմանալ Պողոս առաքյալի խոսքը, թե՛ «Ով որ կաթնակեր է, անգիտակ է արդարության խոսքին»^{79*}, և կամ մյուս ասածը, թե «Իբրև մանուկներ ի Քրիստոս, կաթ ջամբեցի ձեզ, և ոչ հաստատուն կերակուր»^{80*}:

Սրանով ցույց է տալիս եկեղեցու մանկությունը սկզբում, ստինքներից անուցած կաթով, և այժմ՝ կատարելությունը գինիով, որովհետև կատարյալներին են հաստատուն կերակուրն ու ըմպելիքը: Եվ ինչպես որ գինին է ուրախացնում կերակրով զմայլվածներին, նույնպես էլ Սուրբ Հոգու խոսքերը՝ բխած սրբերի սրտից, այսինքն՝ ստինքներից, զվարճացնում են լսողներին և պարգևում անպատմելի կենդանություն և ուրախություն: Նույն ձևով կարելի է հասկանալ հանդերձների հոտը, որ խունկի պես է բուրում: Քանզի ովքեր անուշահոտ առաքինությունների և բարի վաստակի են ձեռնամուխ լինում, ոչ միայն պատճառ են լինում իրենց փրկության, այլև իրենց մերձեցողներին և իրենց տեսողներին էլ շահեցնում են ոչ

միայն կենդանություն ժամանակ, այլ առավել ևս մահվանից հետո, թեկուզ շատ ժամանակներ անցնեն:

Մեղր եմ կաթեցնում շրթունքներդ քո, քույր իմ հարս, մեղր և կաթ է քո լեզվի ցեղքո, և քո համդերձների հոտը՝ կնդրուկի հոտի պես (Դ, 11):

Սա արդեն շատ մեկնություն պետք չունի: Մեղր է կոչում քաղցր և խորթելի վարդապետությունը, որ Քրիստոսի մերձավորներից և հարսնացածներից է տրվում մարդկանց և քաղցրանում լսողների սրտում, ըստ Դավթի, թե «Քո խոսքերն իմ քիմքի մեջ քաղցր են մեղրից ավելի»^{81*}: Էլ չեմ ասում, որ մարգարեի կերածը քաղցրացավ ուտելու ժամանակ, մինչ ուտելուց առաջ բերանի մեջ լեղի էր և կուլ տալու ժամանակ՝ քաղցր: Վասնզի առաքինությունը ևս սկսելիս դառն է, իսկ հետո՝ քաղցր:

Մեղր և կաթ քո լեզվի ցեղքո:

Մանուկներին՝ կաթ, իսկ կատարյալներին՝ մեղր: Նախ բոլոր լեզուներում, այս անուշ կերակուրը տվողին պետք է համարել՝ երանելի Հովհան տիեզերական վարդապետին,

Աստվածաբանին²⁵, և նրանց նման անուշ կերակուր ունեցողներին:

Դարձյալ կրկնում է ասելով՝ Եվ քո հանդերձների հոտը՝ իբրև կնդրուկի հոտ: Այս է անուշահոտ պատարագը, որ հոտոտում է Աստված նրանց հոտից, ովքեր իրենց կամքը, խորհուրդները և մարմինները իրենք են մատուցում Աստծուն որպես ողջակեզ:

Պարտեզ ես գոցված, քույր իմ հարս, պարտեզ գոցված և աղբյուր կնքված (Դ, 12):

Տե՛ս, թեպես պարտեզ է, բայց գոցվելու պեսք ունի, թեպես աղբյուր է, բայց կնքվելու կարիք ունի, որպեսզի կերակուր և ըմպելիք չդառնա օտար հոտերի, և չնետել մարգարիտը խոզերի առաջ, և չտալ օտար լսելիքներին:

Առաքումը քո դրախտ է Նոնեմյաց, մրգաբեր պտուղներով հանդերձ: Ծաղիկ՝ Նարդոսով հանդերձ:

Նարդոս և քրքում, եղեգն խունկ և կիմամոն՝ Լիբանանի ամեն տեսակ փայտերով հանդերձ, զմուռս և հալվե՛ ամենայն առաջնագույն յուղերով հանդերձ (Դ, 13):

Եթե բառ առ բառ մեկնեմ այս, լսողներդ կձանձրանաք: Բայց քանի որ իմաստների

դուռը բացել եմ, որ ուրիշ վարդապետներ շատ են մանրամասնում, ես պիտի համառոտեմ և առաքյալի խոսքերով պետք է ավարտեմ, որ ասում է. «Այս է հոգու պտուղը՝ սեր, խնդուկություն, խաղաղություն»^{82*}: Եվ այլ տեղ, թե՛ «Գուլթ, ողորմություն, հավատ, հույս, սեր, հեզուկություն, խոնարհուկություն, քաղցրուկություն, եղբայրասիրուկություն, անոխակալուկություն, անընչասիրուկություն, պարզամտուկություն և անձի սրբուկություն և սրանց նման այլ բաներ»^{83*}: Գործածվողների կեսը լեղի է ինչպես զմուռսը, ոմանք անուշահոտ՝ յուղերի պես, ուրիշները գեղեցկատեսիլ՝ ինչպես ծաղիկները: Սրանցով է հարսն Աստծո պարտեզ լինում, բազմեփյաց անուշահոտ յուղ, որ ծխում էր մովսիսական խորանի վրա, որն հենց օրինակ էր սրբերի բյուրապատիկ առաքինությունների, որոնք Աստված առավել ցանկուկյամբ է հոտոտում, քան այն ժամանակվա առավոտյան և երեկոյան խոնկերն ու պատարագը:

Եվ ինչպես նոնենին, մինչև նռան հասնելը, ուտողին վայելք չի տալիս, փշերով պատված է, նույնպես և նա, ով այս կյանքում Աստծո պարտեզ և դրախտ է լինում,

պետք է նախ հեղուկթյամբ ապրի, քաղցով, ծարավով, տքնուկթյամբ և աշխատուկթյամբ, առաքինուկթյան այլ զրկանքներով ինքն իրեն նեղի, և եթե ակամա վրան փորձուկթյուններ գան՝ թե՛ ընկերներից և թե՛ սատանայից, հանուն Աստծո սիրո՝ ակաման դարձնելով կամավոր, համբերի, ապա լինի Աստծուն ախորժելի պտուղ, ինչպես նուռը, որն հասունանալուց առաջ փշերի մեջ էր:

Արդ, ով Քրիստոսին հարսնանում և նրա պարտեզն է դառնում, անհրաժեշտ է, որ նախ փշերի, այսինքն՝ առաքինուկթյան մեջ ապրի, և ապա կերակուր լինի Քրիստոս փեսային: Նա և ծաղիկ ևս լինի, ինչպես Նարդոսը և քրքումը, որոնցից մեկը ջերմ է, մյուսն՝ անուշահոտ: Այնպե՛ս պետք է վառվել Քրիստոսի ջերմ սիրով և արձակել առաքինուկթյան և ամենայն բարեգործուկթյան բուրմուկներ: Քրքումի համար ասում են, թե միջասահման է. ոչ շատ ջերմ, և ոչ շատ պաղ, այլ չափավոր գորուկթյուն ունի: Այս օրինակով ուսուցանում է, թե Աստծո պարտեզում առաքինուկթյունն էլ պետք է պտղաբերի, բայց չափազանցից պետք է խոլսափել և չափի մեջ մնալ, որպեսզի անչափուկթյամբ

չհրապուրվի: Նույնպես և հավատի մեջ՝ գրածներն ընդունել հաստատուն հավատով, և գրածներից ավելին չիմանալ, և ոչ էլ անքննելիները քննել, այլ ամեն տեսակ անկարելի, անիրականանալի և անհավատալի բաները վստահել Աստծու գորուկթյանը, որ կարող է ամեն ինչում: Նույնպես, եթե մեկն իր գործած մեղքերի համար սգի մեջ լինի, չպետք է չափից առավել սգա, որպեսզի հուսահատուկթյան չմատնվի և չասի, թե փրկուկթյուն չկա: Եվ այս պատճառով էլ կամ մեղքից չի դառնում, կամ Հուդայի կրքով է վարակվում, որ խեղդվեց այն մտածումով, թե չկա ապաշխարուկթյուն, որն անչափ սգալուց էր: Եվ ի՛նչու՞ մեկ առ մեկ թվեմ. ամեն բանի մեջ պետք է չափավոր լինել, ինչպես ուսուցանում է քրքումի խորհուրդը, և չչեղվել ո՛չ աջ և ո՛չ ձախ: Եղեզը և կինամոնը նույննյաց դրախտում հարսից են պտղաբերված: Եղեզը բոլոր խունկերից անուշահոտ գիտենք, որ և նույնիսկ հրամայված է խառնել խորանի խունկին՝ ծուխ բարձրացնելու համար Աստծուն^{84*}: Եվ կինամոնի համար էլ ասում են, որ եթե սաստիկ եռացող կաթսային մոտեցվի, նրա մեջ եղած

Ջրի եռքը կիջեցնի: Նույնպես՝ եթե խիստ շոգ բաղնիք մտնի, իսկույն տունը կզովացնի: Եվ այլ այնպիսի բաներ, որոնք լսողներին անհավատալի են թվում: Քանզի ասում են, որ եթե քնած մարդու բերանի վրա մեկը կինամոն դնի և որևէ բան հարցնի, ապա պատասխան կստանա, այսինքն՝ քնի մեջ է, բայց արթուն է, ընդ որում լսած հարցերին տալիս է հստակ ու պատշաճ պատասխան: Փաստորեն թվում է քնած, բայց արթուն է²⁶: Արդ, այսպես է ուսուցանում խունկն այս, որ եթե մեկը նվիրվում է Աստծուն, մարդ է թվում, բայց մարդ չէ, քանզի եթե պոռնկություն, կամ բարկություն, կամ ազահուլության կամ այլ մարմնավոր ախտերը նեղեն, չի ընդունի, այլ վարքով հրեշտակներին կհավասարվի, որոնք արթուն են և անքուն և անախտ, և անկարոտ: Եվ մարդ է, և մարդ չէ: Որովհետև մարդը քնի մեջ է՝ հրեշտակներին (նմանվելու) իմաստով: Եվ պտուղը հարսին նմանեցրեց, որ հոգևոր պարտեզից է և դրախտից:

Եվ զմուտս և հավլե՝ բոլոր առաջին յուղերով հանդերձ (Դ, 14):

Ջմուռսը Քրիստոսի մեռելության և թաղման նշանն է: Իսկ հավլեն և այլ առաջին պատվական յուղերը՝ մարմնին միացած Աստվածություն, որով մահը կրեց: Արդ, ցույց տվեց, թե մարդը փայտ էր Լիբանանից՝ մեղքերի անտառից, որ Լիբանանից գալով և Քրիստոսին չարչարակից և մահակից լինելով, և մեղքերը մեռցնելով՝ Քրիստոսի անուշահոտ հարսը եղավ՝ նրան միանալով վարքի մաքրությունը, ինչպես ասում է առաքյալը, թե՝ «Դուք, որ մի անգամ մկրտվեցիք Հիսուս Քրիստոսի մեջ, նրա մահով է, որ մկրտվեցիք, նրա մկրտությամբ մահվան մեջ թաղվեցիք: Քանզի, ինչպես մեռելներից հարուլթյուն առավ Քրիստոս Հոր փառքով, նույնպես և մենք կշրջվենք, ի նորոգումն կյանքի, քանզի ինչպես որ տնկակից եղանք նրա մահվան նմանությամբ, նրա հարուլթյանը ևս պիտի հաղորդակցվենք»^{85*}: Նաև Աստվածությունը անուշահոտում է, ինչպես ասաց աստվածային Սողոմոնը:

Աղբյուր՝ պարտեզների, ջրհոր՝ Լիբանանից հոսած կենդանի ջրի (Դ, 15):

Սրանով հարսի գեղեցկությունն առաջ-

վանից ավելի է հավելում, զի առաջ պարտեզ կոչեց հարսին, և ապա փոքր-ինչ առաջ գալով՝ պարտեզների աղբյուր, թե՛ ո՛չ միայն դու պարտեզ եղար, այլև բազում այլոց էլ ուռուցելով՝ Աստծու պարտեզ և դրախտ ես դարձնում՝ պտղաբերելով արդարության պտուղը: Եվ ինքն Աստված ջրհոր կոչվեց, ինչպես ասաց մարգարեի բերանով. «Ինձ կենդանի ջրերի աղբյուրի մեջ թողեցին»^{86*}: Եվ նույնպես Տերը սամարացուն ասաց. «Եթե իմանայիր դու Աստծո պարգևներն և ո՞վ է, որ ասում է քեզ, թե տուր ինձ ջուր խմելու, դու կխնդրեիր նրանից, և նա կտար քեզ ջուրը կենդանի»^{87*}: Եվ դարձյալ, թե՛ «Ով որ ինձ հավատա, կենդանի ջրերի գետերը նրա որովայնից պիտի բխեն»^{88*}:

Արդ, ինչպես որ հաղորդակից են դառնում Աստվածության անուշահոտությանը, որին ովքեր մահակից են լինում և հարսնանում են նրան, նույնպես էլ նրա նման կենդանի ջրի ջրհոր կլինեն նրանք, ովքեր նրան հարսնանան ինչպես ինքը, թող որ եկած լինեն Լիբանանից, այսինքն՝ մեղքերի անտառից, քանզի անտառ է Լիբանանը: Սա հետո Հովհաննես ավետարանիչն էլ է մեկնում.

«Այս ասում էր Հոգու համար, որ պիտի ընդունենին նրան հավատացողները»^{89*}:

Չարթիր հյուսիսում և եկ հարավ (Դ, 16):

Այսինքն՝ գնա հյուսիս, եկ հարավ: Հյուսիս են կոչվում սատանան և իր գործերը, ինչպես ասում է այս նույն Սողոմոնը՝ «Թե խիստ է հյուսիսի հողմը»^{90*}, որովհետև հեռու է արեգակի ջերմությունից, և դրա համար էլ սառած է: Նույնպես և նրանք, որ արդարության արեգակից հեռաբնակ են, սատանայական խորհուրդներով են լցված և մեղքերով սառած, արևի ջերմությամբ չեն թուլանում, այսինքն՝ սուրբ Գրքերի խոսքերով չեն վարդապետում, որոնք անզղջության սառույցն են հալում և զղջում են սերմանում Սուրբ Հոգու սյուլքով, որ հարավն է: Արդ, հրամայում է, որ հարավը գա պարտեզ, այսինքն՝ Սուրբ Հոգու շնորհները հալածեն սատանայական գործերը: Այս պատճառով էլ ասում է՝ զարթի՛ր հյուսիսում, այսինքն՝ գնա՛ և՛ ե՛կ հարավ, որ է Հոգին Սուրբ և նրա ջերմ հողմը, որ հալածում է ձմեռը:

ԾԱՋԻՐ ԿԱՐԱՆԵՂՈՒՄ ԻՄ, և թող բուրեճ խուճ-
կերն իմ:

Այս Սուրբ Հոգու առատ շնչումն է Քրիս-
տոսի պարտեզի մեջ, որ հարս անվանվեց,
որտեղից ծաղկեցին տեսակ-տեսակ շնորհ-
ներ մարդկանց մեջ, ինչպես առաքյալն է ա-
սում. «Հոգուց մեկին տրված է իմաստութ-
յան խոսքը, ուրիշին՝ գիտություն խոսքը, մե-
կին՝ հավատ, ուրիշին՝ գորությունների հա-
ջողություններ, մեկին՝ հոգիների ընտրութ-
յուն, մյուսին՝ մարգարեություն»^{91*}:

Եվ ինչ կարիք կա մեկ առ մեկ թվելու այն
բազմաթիվ շնորհները, որ ասված են եկեղե-
ցու մասին: Եվ վրա բերելով՝ ասում է. «Այս
ամենը հաջողում է միևնույն Սուրբ Հոգին և
յուրաքանչյուր շնորհը բաժանում է, ինչ-
պես որ կամենում է»^{92*}: Արդ, սրա համար է,
որ ասում է.

ԾԱՋԻՐ ԻՄ ԿԱՐԱՆԵՂԻ ՄԵՋ, և թող բուրեճ խուճ-
կերն իմ:

Առաջին խոսնակերը Պողոսը և Պետրոսը և
նրանց տասնյակ ընկերները, և մեր սուրբ
Հուսավորիչը ու Հովհան Ոսկեբերանը, և
նրանց նման շատ շատերն են:

ԳԼՈՒԽ Ե

Հարսն աղաչում է, որ իջնի իր փեսան.
Թող իջնի եղբորորդիս կարտեզն իր,
թող ուտի պտուղներն իր ծառերի (Ե, 1):

Հարսը, տեսնելով, որ ինչպես զրախտում
կամ պարտեզում ծաղկել է իր այնքան շատ
առաքինությունը, որն ուսանեց փեսայից և
հրեշտակներից, աղաչում է, որ իջնի և ուտի,
որ նշանակում է բարեգործներից Աստծուն
հայցելը: Թեև Աստված անկարոտ է, սակայն
քաղցյալ և կարոտ է մեր փրկությունը, ինչ-
պես որ ինքը, երբ նրան ստիպում էին հաց
ուտել, իր աշակերտներին ասաց. «Իմ կերա-
կուրն այն է, որ կատարեմ կամքը նրա, ով
առաքեց ինձ»^{93*}: Որը և մեր դարձն էր առ
նա և նրա պատվիրանները պահելը: Եվ
ինքն իսկ ասաց, թե՝ «Քաղցեցի, և տվեցիք
ինձ ուտել, ծարավեցի, և խմեցրիք ինձ»^{94*}:

Այս բանը մեզ նաև խոնարհություն է ու-
սուցանում. առաքինական վարքով չհպար-
տանալ և անհոգ չլինել, բարի գործերում
խոնարհություն ունենալ և աղաչել սրտա-

բեկ ու խոնարհ հոգով՝ ընդունել պտուղներն արդարութեան, ինչպես որ ինքը հրամայեց աղաչել և ասել. «Թող գա արքայութիւնը քո»^{95*}: Եվ փեսան, այս աղաչանքին նայելով, մարգարեի բերանով ասում է. «Մինչև կանչելդ ես լսեցի քեզ, և երբ խոսես, կասեմ, որ ահավասիկ հասել եմ»^{96*}:

Փեսան նույնպես, հարսի աղաչանքը լսելով, ասում է.

Լսեցի քո աղոթքները և մտա պարտեզն իմ, քույր իմ և հարս, քաղեցի զմոտս խնկով հանդերձ, կերա իմ հացը մեղրով իմ:

Քույր է կոչում, ապա՝ հարս, քանզի ով Աստծո կամքն է կատարում, հարսնանում է նրան: Եվ քաղեցի զմոռս՝ խնկով հանդերձ: Այսինքն՝ մեռելութեան պտուղը, որ ձեզ համար մեռա, քաղեցի իմ պարտեզից և հարսից, որ առաքինութեան խունկերով է բուրում, մեռած՝ ըստ զմոռսի օրինակի, և անուշահոտ՝ ըստ մարմնին միացած աստվածային սիրո:

Մեղրովս կերա հացն իմ:

Ոչ միայն կերակուր եղար ինձ՝ կերակրելով առաքինութեան հացով, այլ նաև քաղց-

րացար ինձ մեղրի խորիսխի պես:

Ինչպես երանելի աստվածաբան վարդապետները և Հովհանն, որոնք կարծես Աստծո բերանով են խոսում և ասում. «Կերակրիր ինձ առաքինութեամբ»: Ինչպես որ Պետրոսն էլ հրամայեց նույն կերակրով կերակրվել կտավի օրինակի պես, ուր կար ամենայն կենդանի շունչ. այսինքն՝ բոլոր հեթանոսներին, ինչպես և հրեաներին անխտիր Աստծու կերակուր տալ և պիղծ չհամարել^{97*}:

Գիմիս խմեցի կաթով իմ:

Սա ինքն իսկ ասաց Ջեբեղիայի որդիներին. «Կարո՞ղ եք ըմպել բաժակը, որ ես եմ ըմպելու»^{98*}, այսինքն՝ մահը, որ ըմպեց, և արյունով գինին, և կաթը խմեց, այսինքն՝ մարդկանց մաքրութիւնը, որ այն արբամբ՝ մահվան բաժակը ըմպելով, անմեղութեամբ մանկացան, որպես կաթնակեր: Որ ինքը Տերն էլ ասաց. «Եթե չդառնաք և մանկանց պես չլինեք, չեք կարող մտնել արքայութիւնն Աստծո»^{99*}: Ձանց եմ առնում ասել, որ Տերը խմեց և առաքյալներին տվեց և ասաց. «Այս է արյունն իմ, առեք և խմեք»^{100*}: Եվ սրան հետևող մյուս խոսքն ահա այս է.

Կերեք, մերձավորներս, խմեք և խմեցրեք, եղբայրներ իմ (Ե 1), որ մյուս Ավետարանիչն է ասում հետևյալ ձևով. «Եթե չուտեք մարդու Որդու մարմինը և չխմեք նրա արյունը, ձեր անձերի մեջ կյանք չեք ունենա»^{101*}: Արդ, իր ըմպելով, և ապա՝ առաքյալներին տալով՝ ցույց տվեց, որ եկեղեցուն և հարսին այս բաժակն ըմպել տվեց և իրեն մահակից արեց, զի խորհուրդը, որ կատարում ենք՝ նրա մահվան հիշատակն է, և ահա՛ որ պատարագը, սեղանի վրա Հոր առջև դնելով, նրա առաջ ենք դնում այն մահը, որ մեզ համար եղավ և դրանով մեզ համար փրկություն ենք հայցում: Արդ, թեպետ երանելի Հովհանն ասում է, թե ինքն ըմպեց իր արյունից, որպեսզի նրանց ևս հորդորի դրանից խմելու, որ չասեն, թե արյունն ինչպե՞ս կարող ենք խմել²⁷, բայց բուն պատճառն այս է. թե՛ իմ ըմպածը մահն է և անմեղությունը, որ գինին և կաթն է, դուք նույնպես պետք է խմեք, և ինչպես որ ես կերակրեցի ձեզ իմ արյամբ, դուք էլ ինձ եք պարտավոր կերակրել մանկունակությամբ և մեռելությամբ՝ ըստ այս կյանքի: Ինչպես առաքյալն է ասում. «Եթե մեկը կամենում է իմաստուն

լինել այս աշխարհում, հիմար պետք է լինի, որպեսզի իմաստուն լինի»^{102*} այն աշխարհում, և Քրիստոսին թող կերակրի իր գինով և կաթով, նրա վարքն ստանալու համար, ինչպես որ դարձյալ առաքյալն ասում է. «Նմանող եղեք ինձ, ինչպես ես՝ Քրիստոսին»^{103*} և այլուր, թե՛ «Քրիստոսը ձեր մեջ է, բայց եթե անպիտան լինեք»^{104*} և թե՛ «Որ մկրտվեցիք ի Քրիստոս, Քրիստոսին զգեցաք»^{105*}: Եվ Գրիգոր Աստվածաբանն է ասում. «Քրիստոսներ եմ ճանաչում ըստ Քրիստոսի ապրողներին»²⁸: Արդ, ասելով, թե՛ «խմեք և խմեցրեք», վրա է բերում, թե՛

«Ես անջուր եմ, բայց սիրտն իմ արթուն է» (Ե, 2):

Այսինքն՝ թե այս խմելը չի նմանվում այն արբեցությունը, որ թմրություն է բերում, ինչպես որ թատունկի գինին, այլ՝ ինչպես որ Աստվածությունը գերեզմանի մեջ արթուն էի, իսկ մարմնիս մեռելությամբ՝ քնի մեջ, նույն ձևով ովքեր այս արբելիքն են ըմպում, Տիրոջ անմահությամբ կարթնանան ինձ հետ: Այս է, որ ասում է. «Հավիտյան պիտի ապրի», և «Թեև մեռնի՝ պիտի ապրի»^{106*}: Թեև մարդկային բնություն ու-

նենալով՝ ննջում են, բայց արթուն են՝ Հոգու շնորհն ընդունելով: Արդ, եթե այսպես չէր՝ ինչպե՞ս կարող էին այս տկար մարմնով առաքյալներն այնպիսի չարչարանքներ կրել, և մարտիրոսները՝ այնքան նեղություններ, նույնպես և՛ ճգնակյաց հայրերը. մանավանդ մեր Լուսավորիչը, որին տասը տղամարդ, յոթ օր գլխիվայր կախված, բրածեծ արեցին, բայց նրա սրտի արթնությունը չկարողացան թմրեցնել այդպիսի դառը տանջանքներով, այլ միտքն արթնություն մեջ Աստված համբարձած այն օրերին անընդհատ աղոթքներով խոսում էր Աստուծու հետ և Աստուծու առաջ աղերսում էր մեր աշխարհի փրկություն համար²⁹: Գավազանի մեկ հարվածը բավական է մեր միտքը թմրեցնելու համար, իսկ երանելին, այնչափ անասելի չարչարանքների մեջ միտքն անխոտոր և լեզուն անդրդվելի պահելով, առ Աստված խնդրելով, մի՞թե չէր նմանվում Քրիստոսի արթուն սրտին և մարմնի ննջմամբ, ինչպես որ կրքերի ննջման բնությունը՝ Քրիստոսին մահակից եղավ արթուն մտքով: Այս է, որ ասում է, թե՛

Խսե՛ք և խմեցրե՛ք, եղբայրներս, որովհետև

չարչարանքներն ըմպելով՝ ես ննջեցի մարմնով և իմ սիրտն արթուն մնաց՝ Աստվածությունամբ: Նույն ձևով էլ դուք ինձ եք նմանվելու՝ ինձ նման մահն ըմպելով:

Հարսը զգում է փեսայի դուռը բախելը:

Եղբորդդու ձայնն է դուռը բախում:

Ուրեմն տե՛ս, թե նրանք, որ այն բաժակը և գինին են ըմպում այս քնալից կյանքի մեջ, ինչպիսի՛ արթուն միտք են ստանում, ըստ ավետարանական խոսքի խրատի, թե. «Թող ձեր գոտիները ամրացած լինեն մեջքներիդ, և ճրագները՝ վառած»^{107*}, և դուք նման եղեք այն մարդկանց, ովքեր սպասում են, թե իրենց Տերը երբ պիտի վերադառնա հարսանիքից, որպեսզի երբ դա և դուռը բախի, փութանալի բանան նրա առջև:

Երանի այն ծառային, ում արթուն կգտնի Տերը գալստյան ժամանակ: Այսպիսին են սրբերը, որոնք Քրիստոս փեսային հարսնացան, ի պահ կանգնելով և լսելով ձայնը Քրիստոս եղբորդդու, որ դուռն է բախում՝ ներս հրավիրելով երկնքի արքայություն:

Փեսան, որ Քրիստոսն է, դուռը բախելիս ասում է.

Բաց ինձ, քույր իմ, մերձավոր իմ, աղավնի իմ, կատարյալ իմ. վասնզի գլուխն իմ լցրեցի ցողով և վարսերն իմ՝ գիշերվա մանրամաղ աճձրևով:

Արդ, համառոտ, այս է սրա մեկնությունը.

Բա՛ց ինձ, քույր իմ, մերձավոր իմ, աղավնի իմ, կատարյալ իմ:

Այս խոսքերով գուշակում է հարսի լուսավորությունը մկրտությունը, թե՛ Հոգու ծննդյամբ և խորհրդական արյունն ըմպելով՝ քույրս և մերձավորս եղար, և հոգով արդարացար աղավնու բնությունն առնելով, և կատարյալ դարձար, որ Աստծու Որդի եղար, իսկ ով արժանանա Աստծու որդի լինել, ամեն ինչով կատարյալ է, որովհետև սրանից ավելի բարձր ուրիշ ի՞նչ փառք կա այս երկրի վրա կամ երկնքում: Բայց եթե չպահենք և չարդյունավորենք տրված շնորհները և փառքը, կնմանվենք նախահորը, որ, ստանալով լուսավորությունը և անկարոտ, անցավ և անմահ կյանքն ու դրախտը, չպահելով և չարդյունավորելով, դարձյալ կորցրեց:

Նույնը և մեզ է ուսուցանում, որ անփուլթ չլինենք կատարելության շնորհին, այլ՝ իբր այն առած չլինելով՝ միշտ զգուշ լինենք: Քանզի, կատարելություն տալը նրանից է, իսկ պահելը՝ մեզանից, որ ասում է երանելի վարդապետը³⁰. «Բաց դուռդ ճանապարհի, որ դեպի կյանք է տանում, և կատարելությամբ քեզ հանգստություն, քնի և հեշտ կյանքի մի՛ տուր: Ինչպես ասում է առաքյալը. «Եթե մեկը կարծում է, թե ինչ-որ բան գիտի, ապա այնպես չգիտի, ինչպես պետք է իմանալ»^{108*} և դարձյալ ասում է, թե. «Ձեմ կարծում անձն իմ հասած, բայց այն կա, որ հետևում մնացածը մոռանալով՝ ձգտում եմ առջևում եղածներին: Ուշադիր ընթանում եմ աստվածային կոչմանս հետևից Քրիստոս Հիսուսով»^{109*}:

Արդ, բաց ինձ քո մուտքը, զի գլուխն իմ լցվեց ցողով, և վարսերն իմ գիշերվա մանրամաղ աճձրևով:

Այս նման է այն բանին, որ մյուս գալստյան ժամանակ ցույց տա մեզ համար ստացած վերքերը: Բայց այնտեղ՝ մեզ կշտամբելու համար է ցույց տալիս, որովհետև երախ-

տավորի հանդեպ ապերախտ գտնվեցինք, իսկ այստեղ մեզ հորդորելու համար՝ հարսին հիշեցնում է այն գիշեր մահվան վախից ունեցած իր քրտինքը, որի վերաբերյալ Ավետարանում ասում է, թե. «Քրտինքները ու լոր-ուլոր հոսում էին նրանից»^{110*}:

Ասում է, թե՛ իմ քրտինքով և աղավնու այդ անմեղությունը և կատարելությունը հագնելով ես դարձել իմ քույրն ու հարսը, և այն գիշերվա իմ քրտինքով անեծքի քրտինքը մաքրեցի, և ես, քո փոխարեն վշտացած, համբերում էի տառապալի քրտինքով: Արդ, պահիր, որ ստացար, այսինքն՝ աղավնու միամտությունն ու կատարելությունը, և մի՛ կորցրու նորից, քանզի երկրորդ անգամ այլևս չկա ո՛չ խաչ և ո՛չ մահ քեզ համար:

Հարսն այսպես է ասում.

Հանեցի պատմութեանս իմ, ինչպե՞ս հագնեմ այն, լվացի ոտքն իմ, ինչպե՞ս աղտոտեմ այն (Ե, 3):

Այսինքն՝ քո այնչափ երախտիքով և քրտինքով, որ ինձ համար էին, իմ հանցանքների պատուհասի զգեստը հանելուց հետո, ինչպե՞ս դարձյալ հագնեմ այն, հեռու

տար: Եվ որ մկրտությունը գարշապարս և ոտքերս լվացիր, ինչպես երանելի առաքյալներինը, և զերծ պահեցիր խայթող օձի թուլյնից, ինչպե՞ս աղտոտեմ այն՝ պոռնկություն, սպանություն, անիրավություն և դրանց նման այլ մեղքեր գործելով, որ լույսով հագա, և իրավունք ունեմ երկինք ուղևորվել և հրեշտակների հետ խնդալ:

Իմ եղբորորդին իր ձեռքերը ձգեց անցքից և որովայնն իմ խոնավեց արանով (Ե, 4)

Տե՛ս այս, թեպետ Պողոսի կամ Պետրոսի պես մեկը լուսավորվում է Հոգով և ջանում է տեսնել Քրիստոսի խորհուրդը, նման է ամբողջ մարմնի փոխարեն միայն ձեռքը տեսնելուն և այն էլ՝ շատ չնչին ու նվազ տեղից՝ որպես անցքից:

Որի համար առաքյալն ասում է. «Այժմ տեսնում ենք հայելու օրինակով, բայց այնժամ՝ դեմ հանդիման: Այժմ փոքրիչատե տեղյակ ենք, բայց այնժամ պիտի ճանաչեմ, ինչպես որ ինքը ճանաչեց ինձ»^{111*}:

Ասաց, թե՛ փեսան ինչ շնորհք որ տվեց ինձ և կամ խոստացել է տալ, և ինչ որ ինձ համար կրեց, և թե նրա մահվամբ որչափ

չնորհ ստացանք և նման ուրիշ անբավ և անպատմելի պարզեցումներ, որ ցույց տվեց այստեղ սրբերին, հանդերձյալ կյանքում ցուցանելիքի և ճանաչելիքի համեմատությունը այնպիսին է, ինչպիսին է ամբողջ մարմինը տեսնելու փոխարեն անցքից ձեռքը տեսնելը, ծովի ջրի (փոխարեն) մի կաթիլ ջուրը, արեգակի (փոխարեն) ճրագը և կամ ինչպես մոր որովայնում գտնվող մանուկը՝ ծեր տղամարդու համեմատությամբ: Եվ տե՛ս, որ նույնիսկ այն փոքր և սահմանափակ տեսողությունը խոռովվեց որովայնը, ինչպես որ ասաց.

Որովայնս խոռովվեց Գրանով:

Որովհետև Պողոսի աննշան տեսնելն իսկ չվարեցրեց նրան և կուրացրեց նրա աչքերը, ինչպես Հովհաննես առաքյալի տեսիլքի մեջ, նաև Եզեկիելի^{112*}: Եվ այս միայն հրեշտակներին տեսնվեց, ինչպես որ Դանիելն ասաց. «Տեր, քո երևումը խոռովեց որովայնն իմ»^{113*} և այլն: Քանզի, ինչպես տկար աչքը չի կարող տեսնել արեգակը, այնպես էլ մարդկային բնությունը չի կարող տեսնել կամ հասկանալ Աստծու բաները, որչափ դեռ այս

կյանքում է: Այս պատճառով էլ, Պողոսին մարմնից հանելով և երրորդ երկինք տանելով, ցույց տվեց անպատմելի բաներ, իսկ երբ երկիր վերադարձավ, չկարողացավ մարմնեղեն մտքով և շուրթերով պատմել՝ ինչ որ տեսավ և լսեց անկարելիները, այլ ասում էր նաև, «Լսեցի բաներ անճառելի, որ մարդ չի կարող խոսել»^{114*}, այսինքն՝ թե մարմնեղեն լեզուն չի կարող բացատրել անմարմնեղենի խորհուրդը: Իսկ եթե մեկը անցքից եղբորորդու երկարած ձեռքը՝ Որդի ընդունի, զի Հոր աջն է կոչվում, իսկ մարմինը՝ որ Աստվածությանը միացրեց, անցքը հասկանա, սա էլ խորհրդից հեռու չէ, քանզի ինչպես փոքր անցքը տաճարի համեմատությամբ, այնպես էլ մեր բնությունն է Աստվածության համեմատությամբ: Բայց ինձ առաջին պատճառն է ճշմարիտ թվում, նաև գրքերի համաձայն, մանավանդ՝ մարգարեական, որոնք շատ իմաստներ ունեն:

Ելա բանալու եղբորորդու: Ձեռքերն իմ գմուռու կաթեցին: Եվ մատներն իմ՝ գմուռուսով ցլված՝ փականքի բռնակի վրա (Ե, 5):

Երբ տեսա անցքից կարկառած ձեռքը,

այսինքն՝ նեղ լուսամուտից Աստծու հայտնած խորհուրդները, բացվեցին հոգուս աչքերը և տեսա՝ որչափ որ հնարավոր է մարմնեղեն աչքերով տեսնել, և հոգիս զարթնեց մեղքերի թմրությունից, և բարձրացար երկրավոր կրքերից՝ մի կողմ վանելով ախտերը:

Եվ ինքս ինձ մեռցրի մեղքերի համար, մեռնողի հետ մեռնելով, այսինքն՝ ինձ համար մեռած Անմահի:

Որի համար առաքյալն ասում է. «Նույն մկրտության հետ մեռանք, նույնի հետ էլ հարուժյունն առանք հավատով, Աստծու ներգործությամբ»^{115*}, և հաջորդ խոսքը:

Արդ, հայտնի է, որ նախ՝ պետք է մեռնել և մարմնի անդամները սպանել, ինչպես հաստատում է այս առաքյալը, և ապա միայն Աստված և աստվածային խորհուրդները կմտնեն մարդու մեջ: Սրա համար է, որ ասում է.

Եղբորդդուս առջև բացելիս ձեռքերն իմ գմուռս կաթեցիմ, Աույնպես՝ մատներս փականքի վրա:

Զմուռսը՝ մեռելության գուշակ է, և ձեռքերը՝ աշխատելու գործիքներ: Արդ՝ եղբո-

րորդու ձեռքը Քրիստոսին հասնում է հարսի միջոցով, այսինքն՝ հավատացյալների:

Եվ նրա ձեռքերը հավասարվեցին հարսի ձեռքին՝ փեսայի ձեռքերին մերձենալով՝ մեղքերից ձերբազատվելով և նրա հետ մեռնելով: Այս է, որ ինքը՝ Տերը համառոտեց, թե՛ «Ով որ գա դեպ ինձ և չատի բոլոր տնեցիներին, նաև՝ իր անձը, չի կարող իմ աշակերտը լինել»^{116*}:

Դարձյալ, թե՛ «Նեղ է դուռը և անձուկ ճանապարհը, որ դեպի կյանք է տանում»^{117*}: Արդ, հայտնի է, որ այն ճանապարհը նեղությամբ և մեռելությամբ է ընթանում, բայց եթե նրանում փեսայի սիրո տեղը գտնվի՝ դժվարինը դյուրին կլիկ: Որի համար մեծ առաքյալ Պողոսը ուրախացած խրախուսյա է տալիս՝ ասելով. «Ներկայիս չարչարանքները չարժեն հանդերձյալ փառքին, որ հայտնվելու է մեզ»^{118*}:

Դու տե՛ս, որ այժմ աշխարհի վրա բազում թագավորներ և թագուհիներ իրենց կամքի համաձայն ապրեցին և մահվան վերջին օրը զղջալով բաժանվեցին աշխարհից և դատաստանի օրից առաջ՝ չարիքների խղճմտությունից և Դատավորի ահից տանջանքների

մեջ են: Նույնպես և բազում թագավորներ ու մեծամեծներ արհամարհեցին աշխարհը և իրենց կոչման վերջին օրը՝ այն հույսով, որ իրենց առջև կար, ուրախությամբ հրաժարվեցին աշխարհից, անճառ զվարթությամբ բերկրելով իրենց կատարած վաճառքի վրա, որովհետև երկրի տեղ՝ երկինքն առան: Եվ հատուցման օրը չհասած՝ ուրախության մեջ են, որպես թե այստեղ ստացան իրենց վարձքը և ուրախությունը նմանապես, և անդադար օրհնում են Աստծուն, որ իրենց շնորհեց ճանաչել սնոտի կյանքի ոչնչությունը և փնտրել հավիտենական կյանքը:

Արդ, փեսա և եղբորորդի, ինչպես բազմիցս ասացի, Քրիստոսին է կոչում: Փեսա է ասում, զի սիրեց մարդկանց, ինչպես փեսան՝ հարսին, որ առաքյալն էլ է հաստատում «Նոսեցի ձեզ հետ մի տղամարդու մասին՝ սուրբ կույսի պես Քրիստոսի առջև դնելով»^{19*}: Եվ եղբորորդի է կոչվում նույն ինքը Քրիստոսը, քանզի հրեաներն ու հեթանոսներն Ադամից են, դրա համար էլ եղբայրներ են կոչվում, որովհետև Քրիստոսը հրեաներից է, և եկեղեցին, որ հեթանոսները և նոր հավատացյալ ժողովուրդներն են,

Քրիստոսին եղբորորդի են կոչում: Եվ հեթանոսներն այն պատճառով են կոչվում՝ հարս, քույր և պարտեզ, որովհետև ինչպես հարսն իր սրբությունն ու փեսայի սերը պարտավոր է միայն իր հետ նշանված տղամարդու համար պահել և եթե չպահի և ուրիշ մեկին սիրի, փեսայի անկողինը պղծած կլինի և նրանից օտարացած, նույնպես և հավատացյալները, որոնք մկրտությամբ Քրիստոսին միացան և հաղորդվեցին նրա մարմնին և արյանը, եթե այնուհետև ի սեր աշխարհի բաժանվեն և միանան պես-պես ցանկասիրական ցնորքները՝ պոռնկություն, սպանություն, ամբարտավանություն, ազահություն, փառասիրություն, նախանձի, կռվի և նման չարիքների, և լուծեցին Քրիստոս փեսայի հանդեպ իրենց սերը և իրենց հետ կնքված ուխտը, և չարություն ուսուցիչ սատանային հարսնացան³¹: Եվ իրավամբ ընդունեցին անվրեպ տանջանքները:

Սակայն, եթե դառնան իրեն, դարձյալ մարդասեր է Տերը, քանզի ողորմած է և չի կամենում մեղավորի մահը, որի համար իսկ մարմին առավ և անարգների համար մեռավ: Նույնպես պետք է լինի նաև քրոջ

գուլթը, և պարտեզը՝ մշակողի համար պետք է պտղաբերի և ոչ թե օտարների կերակուր լինի: Բայց մենք ըստ կարգի ձեռնամուխ լինենք խոսքին:

Բացեցի իմ եղբորորդու առջև, եղբորորդիս անցավ, և հոգիս էլավ Արա խոսքի հետ (Ե, 6):

Տե՛ս, բացելուն պես անցնում է: Այսինքն՝ երբ ես մտքիս աչքերը բարձրացրի Գրքերի խորհրդով՝ տեսնելու համար նրա շնորհների գիտությունն անքննելի խորքը, բացեցի սիրտս՝ հավաքելու համար ներսը դժվարությունամբ տեսնվածները և քննելու, տեղեկանալու, հասու լինելու նրա գիտությունն խորքին, իմ տկար մտքի հասողությունից դուրս մնացածը այնպես զարհուրեցրեց ինձ, որ կարծես թե այն իմանալու համար պատրաստ էի մոռանալ այն գիտությունը, որ ստացա բացելու ժամանակ: Այդ բանի համար էլ ասում, թե. «Անցավ եղբորորդիս», որ ասես նրան տեսնելուն պես անցավ-զնաց որպես դյուրընթաց փայլակը:

Եվ հոգիս իմ գնաց Արա խոսքի հետ:

Այսինքն՝ սակավ ճաճանչ ընդունելով նրա խոսքերից՝ հոգիս ինձ թողեց և նրա

խոսքերի հետ զնաց: Իբրև թե ճանաչեցի նրան և նրա սիրուն միացա և նրա պատվիրանների մեջ եռացի, և երբ կարծում էի, թե հասա, առավել ևս հասկացա, թե որքան հեռու եմ հասողությունից, որովհետև, երբ տեսա ճշմարիտ արեգակը, նրա լույսի շնորհիվ հասկացա, թե որքան հեռու եմ իմացությունից, և միտս բերի այս աստվածային Սողոմոնի իսկ մի այլ տեղ ասածը. «Ով որ իր գիտությունը հավելի՛ ցավերը կավելացնի»^{120*}: Այս ասելով, ոչ թե հրաժարեցնում է Սուրբ Գիրքն ուսանելուց, որպեսզի ցավերը չավելանան, այլ հորդորում է առավել զարգանալ գիտության մեջ և այնչափ գիտությամբ հասկանալ մնացած գիտության անգիտելիությունը: Ինչպես խմածը որքան խմում, այնքան ավելի է ծարավում, նույնպես և նա, ով միտքը հառում է Աստվածաշունչ գրքերին, որքան խորհի, խոկա և ուսանի, այնքան ավելի կփափագի սովորել, որովհետև գիտի, որ չի կարող գտնել Սուրբ Գրքերի գիտության լրումը: Եվ մտքի փափագով այրվելը ցավ է պատճառում հոգուն, որ քիչ իմացածով ճանաչում է անբավ մնացածները և, ասես ցավով բռնվածի պես, վարակ-

վում է դրանք ճանաչելու ցանկությունը, բայց այս ցավերից և հոգսերից ճառագում են առողջության գյուտեր:

Փնտրեցի Գրան և չգտա, կանչեցի Գրան, և ինձ ձայն չտվեց (Ե, 7):

Սա ասված խոսքերն է վկայում, թե ովքեր գտնվեցին և ում բացեցի, մնացյալների համեմատությամբ այնպես թվաց, թե ոչ տեսել եմ և ոչ էլ լսել իսկ ձայնը:

Գտան ինձ պահապանները, որոնք շրջում էին քաղաքի մեջ, զարկեցին, վիրավորեցին ինձ պարիսպների պահապանները, վրայիցս հանեցին հագուստներս:

Արդ, պարիսպների պահպան ասելով՝ պետք է հասկանալ սպասավոր հոգիներին՝ հրեշտակներին, որ հայտնում է Պողոս առաքյալը. «Չէ՞ որ ամենքն էլ հարկավոր հոգիներ են, որ առաքվում են սպասավորելու նրանց, ովքեր պիտի ժառանգեն փրկությունը»^{121*}: Եվ օրհնեցուք ասում է. «Հեթանոսների սահմանները կանգնեցրեց Աստուծո հրեշտակների թվին համապատասխան^{122*}», որովհետև հրեշտակները անհավատ մարդկանց պահպաններն են, ըստ գավառների

և քաղաքների, իսկ հավատացյալներից յուրաքանչյուրին՝ մեկական հրեշտակ [է պահպանում,] և սրբերին՝ առավել ևս, ըստ մարգարեի ասածի. «Աստուծո հրեշտակների բանակները իր երկյուղածների շուրջն են և պահպանում են նրանց»^{123*}: Արդ, եթե հրեշտակները պահպաններ են, նրանք չէ, որ զարկում են, վիրավորում, կամ կոտորում, այլ՝ գողերը և դեերը: Ուրեմն, հայտնի է, թե հարվածել, վիրավորել և հագուստները հանել ասելով հասկանում է. թեև ես չհասա և չկարողացա հետազոտել Աստուծու խորհուրդները, սակայն խնդրելիս հույս ունեի, որ գոնե պարիսպների պահպաններից, այսինքն՝ սրբերից կամ հրեշտակներից պիտի ուսանեմ: Նրանք իրենց մասին ևս ասացին, որ նույն տկարությունն ունեն, և ապա, երբ նրանցից իմացա, թե իրենք էլ ճանաչողությունն անկարողությունն ունեն՝ հուսահատվելով, այնպես ինքս ինձ վտանգված զգացի, ինչպես մեկը, ում վիրավորում են և հագուստներն հանում: Որովհետև մերկացա ակնկալության պատմությանից:

Սակայն, թեև այս ցանկալի խնդրի համար հույսս իսպառ հատավ, բայց ես հոգուս

ուժգին փափագի, տենչանքի և ծարավի շնորհիվ, եղբորորդու հանդեպ տածած սիրուց դարձյալ հետամուտ եղա նույն խնդրին և, չհավանելով նրանց հանձնառու թյուրընդ, նրանց երգվեցնելով, ասացի.

Երդվեցնու՛մ էմ՝ ձեզ, Երուսաղեմի դուստրեր, անդաստանի գորությունների և ուժգնությունների վրա, էթե գտնեք եղբորորդու՛մ իմ, պատմեցեք նրան, թե խանդակաթ էմ քո սիրով (Ե, 8):

Տե՛ս, թե ինչպիսի՛ անմեկնելի և անհամբերելի է սուրբ եկեղեցու սերն առ Աստված, և այս խոսքերի ապացույց են վկանների օրինակները, որոնք հանուն Քրիստոսի այնպիսի տանջանքներ հանձն առան, որոնք վեր են մարմնի կարողությունից, և Քրիստոսը, տեսնելով նրանց մեջ սիրո այնքա՛ն ջերմեռանդություն, ըստ իրենց փափագի, նրանց անմահացրեց տանջանքների ցավերի մեջ, ինչպես մեղավորներին՝ հավիտենական տանջանքների մեջ երեք պատճառով. նախ՝ որովհետև սրբերը նախընտրում էին հնար լինելու դեպքում ոչ միայն մեկ անգամ մեռնել հանուն նրա սիրո, այլև բյուր անգամ, նաև՝ մշտապես, ինչպես խոսքով էլ էին ասում: Ինչպես որ սուրբ Գրիգորն էր Տրդատին ա-

սում, թե՛ «Նրանից խնդրեցի երկարացնել տանջանքներս»³²: Նա իր աղոթքներում նույնպես Աստծուց խնդրում էր երկարացնել³³: Արդ, քանի որ արդարների ցանկությունն ընդունելի է նրան, ուստի նրանց տուժնություն է շնորհում: Եվ երկրորդ՝ որ հեթանոսներին նույնպես իմացնի իր հանդեպ սրբերի ունեցած գորովը, և նրանց մեջ նախանձ արթնացնի՝ այնպիսի սիրով բորբոքվել, ինչպես Ադրիանոսն էր սրբերին երգվեցնում, որ տեսնելով նրանց այնպիսի դառը նեղություն մեջ՝ ասում է.

«Ասացե՛ք ինձ հաստատ, թե ինչ հատուցում եք ակնկալում, որ այդքան չարչարանքների եք համբերում, թվում է, թե [հատուցումն] ավելի մեծ է: Որի համար իսկ հավատաց Քրիստոսին, և նահատակակից դարձավ նրանց³⁴: Իսկ երրորդ՝ որպեսզի սրբերը, ողջ մնալով այնպիսի վտանգների մեջ, հասկանային, որ Աստծուց է կենդանությունը, և նա է Տերը կյանքի և մահվան:

Երդվեցրի՛ ձեզ, դուստրեր Երուսաղեմի, գորությունների և ուժգնությունների վրա անդաստանի:

Այս մի անգամ բացատրել եմ, թե անդաս-

տան է անվանում աշխարհը. և որտեղից է աշխարհի ուժգնությունն ու զորությունը, ով հաստատել է այն և ով պահում է անսասանության մեջ, նրան է տրվում երգումը, որ Քրիստոսն է:

Եթե գտնեն եղբորդու, արան թող պատմեն, թե խանդակաթ է հարսի սերն իր հանդեպ:

Արդ, երանի այն անձին, ում ուղղված է սիրո հարցումը և որի մոտ է գտնվում, ինչպես և պարծենում է Պողոսն իսկ, թե. «Ո՛չ հրեշտակները, ո՛չ իշխանությունները, և նա, որ հետո է գալու, չեն կարող բաժանել մեզ Քրիստոսի սիրուց»^{124*}: Ահա այս սերն է, որ գովված է երկնքում և երկրի վրա, այժմ և Քրիստոսի օրը, և ոչ թե այլանդակ սերն ինչքի, կամ իշխանության, կամ գեղեցկության և նման այլ բաների (հանդեպ), որ այստեղ պարսավանք է բերում և այնտեղ անվախճան տանջանքներ:

Երուսաղեմի դուստրերը և պարիսպների պահապանները հարցնում են հարսին.

Երդում առնելով՝ նրանք հարցնում են հարսին մեզանից առած կերպարանքի մասին, քանզի անտես են և մեզանից սովորե-

ցին և որ դեռևս սովորում են, ինչպես որ գրել եմ սրանից առաջ:

Ի՞նչ է եղբորդու տարբերությունը այլ եղբորդուներից, ո՛վ գեղեցիկ կամաց մեջ, ի՞նչ է տարբերությունը եղբորդու, որ այդպես երգվեցնում ես մեզ (Ե, 9):

Հարսը բացատրություն է տալիս իր եղբորդու մասին:

Եղբորդու իմ սպիտակ է և կարմիր՝ ընտրված շատերի միջից (Ե, 10):

Սպիտակ և կարմիր ասելով՝ ակնարկում է մեր մարդկությանը (հատուկ), մարմինն ու արյունը, որ առավ Սուրբ Կույսից: Ասում է՝ սպիտակ և կարմիր, վասնզի մարմնով և արյամբ գոյացավ Կույսից, բայց թեպետ այսպես է, սակայն Աստվածածինն այր մարդու սերմից հղություն չունեցավ, և ոչ էլ՝ ապականության մեջ, այլ՝ Սուրբ Հոգուց հղություն և Կույսից ծնունդ՝ ծնունդից հետո էլ կույս մնալով, նույն կույսից ելած դուները փակ վիճակում³⁵՝ որը նման է մյուս ծնունդներին: Սրա համար էլ ասվում է շատերից ընտրված, որովհետև ծննդյան ժամանակ ո՛չ երկունք ունեցավ, ո՛չ ցավեր, ո՛չ

տրտմութիւններ, այլ, ինչպես որ հրեշտակը ուրախութիւնն և բերկրանք ավետարանեց Կոլոսին, նույնպես և ծնունդը եղավ ուրախութեամբ լի:

Գլուխը նրա ոսկի կեփազյա (Ե, 11):

Ինչպես որ այն ոսկին ավելի մաքուր է և պատվական, քան մեկ այլ ոսկի, նույնպես էլ մեր գլուխ Քրիստոսը առավել է բոլոր մաքուրներից, որ երկնքում են կամ երկրի վրա: Ինչպես ասում է մարգարեն. «Նա մեղք չգործեց և չգտնվեց նենգութիւն նրա բերանում»^{125*}: Որ և Տերն ինքն է ասում. «Ձեզանից ո՞վ կարող է հանդիմանել ինձ մեղքերի համար»^{126*}, որը և ամեն տեսակ մեղքերի մաքրիչն իսկ եղավ, որը և «Ամեն ինչով փորձված է և առանց մեղքի է, ըստ նմանութեան»^{127*}, ինչպես ասաց առաքյալը:

Նրա վարսերը գանգոյր են, սև՝ ինչպես ագռավ (Ե, 12):

Ըստ Գրքերի, գովեստի արժանի չեն, այլ՝ նախատինքի, բայց այստեղ՝ վայելչութեան համար է ասված, ըստ մեր նախընտրութեան, որովհետև՝ թուխ մազերը երիտասարդների համար շատ գեղեցիկ են: Նաև՝ «բոլոր մարդ-

կանց որդիներից ավելի գեղեցիկ էր երևում»^{128*}, որ առաջատես լինելով՝ ասում է նաև այս Սողոմոնի հայրը: Արդ, եթե հարսը եղբորորդու գեղեցկութիւնը նկարագրի ոսկով և պատվական քարերով և երկրիս մյուս վայելչութիւններով կերպածեմ, դու մի՛ զարմացիր, քանզի առաքյալն ասում է. «Աչխարհի սկզբից նրա անտեսանելի բաները արարածների միջոցով են տեսնվում»^{129*}:

Նրա աչքերը ջրերի լիութեամբ վրա, կաթով լվացված աղավաղների պես են, ասում ջրերի լիութեամբ վրա (Ե, 13):

Այսինքն՝ միամիտ է, ինչպես որ Տերը գովեց աղավաղներին^{130*}, այնպես են նաև նրա աչքերը: Չունի այլևայլ խարդախ և թշուր նայվածք մարդկանց նման, այլ՝ ուղիղ, ճշմարիտ և սրահայաց: Եվ տեսնում է այն, ինչ կամարդու մեջ և ոչ մոլար բաներ՝ աչքերից խաբվելով, ինչպես ասում է Հովհաննես ավետարանիչը: Նաև առաջատես է ստեղծվելուց առաջ, ինչպես ասում էր Երեմիա մարգարեն. «Մինչև ստեղծվելը՝ գիտեմ քեզ»^{131*}:

Կաթով լվացված, քանզի կաթի տեսքը ջրի կամ այլ իրերի բնութեան նման ցույց չի տալիս մի բան, որ չէ, այլ միայն՝ իր բնութ-

յունը, և ուրիշ հեղուկների նման՝ իր մեջ այլ բան չի կարող ցույց տալ:

Բայց ի՞նչ է ջրերի լիության վրա նստած:

Որովհետև, ինչպես ջուրը՝ արևի ձևը և հայելին է լինում, նույնպես էլ նրանք, որքեր իրենց գտում ու մաքրում են մեղքերի աղտերից, նրանց մեջ է երևում, և իբրև նրանց վրա նստած է թվում տեսնողներին, և այն լինում է տնկված ծառ՝ հոսող ջրերին մերձ^{132*}, որ տալիս է անթորչում և հարատևորեն անսպառ պտուղ:

Այտերը Արա խնկալից տաշտերի պես անուշահոտությամբ են բուրում:

Սա մատնանշում է եկեղեցու առաջնորդների և վարդապետների մանրապատում վարդապետության որոճալից խոսքերը, որոնք հարատևորեն և առանց հոգնելու՝ իրենց ծնոտների շարժումով եփած անուշահոտ յուղերի պես քաղցրացնում են մարդկանց միտքն ու խորհուրդները: Իրենց սուրբ սրտերում, իբրև տաշտերի մեջ, ժողովածները սփռում են մարդկանց առջև, ոչ շատ խորությամբ ծածկելով անիմանալիները և ոչ էլ խիստ պարզունակ ու դյուրընկալ

դարձնելով Աստծո խորհուրդները, այլ միջին դժվարությամբ տալով Գրոց գիտությունը, որպեսզի դյուրընկալությամբ հարհամարհվի իբրև դյուրագյուտ բան, որ անիմացությամբ չհուսահատվեն ուսանել ցանկացողները, այլ կարողանան քիչ ջանքով իրենց սրտի հիշատակարանում ամփոփել Գրոց խոսքերը:

Դարձյալ՝ ինչպես որոճացող կենդանիները արածածը հետ են բերում ու որոճում, այնպես էլ վարդապետները՝ սրտում ժողոված Սուրբ Հոգու խոսքերն են դարձնում մտքի առարկա, և չհոգնող ծնոտների շարժումներով դարձյալ մանր ծամելով, բերանից մարդկանց մտքերին են փոխանցում Սուրբ Գրքի լուսավորությունը, որպես եփած խունկ:

ԾրթուԱքները Արա շուշամ են, լիության գմուռս են բխում:

Արդ, տե՛ս դարձյալ գովասանքները: Որովհետև, ինչպես տաշտ եղած ծնոտներն անուշահամ և անապակ բաժակն են մատուցում խոսքը լսողների հոգիներին, նույնպես էլ շուշանացած շրթունքները բխում են

լիության զմուռս, որովհետև խրատում են մեռնել մարմնով և մեռցնել մարմնի անդամները ոչ թե սակավամեռությամբ, այլ՝ լիությամբ, այսինքն՝ կատարյալ մեռելությամբ: Մտքի խորհուրդները մեռցնելով՝ չխորհել երկրավոր բաների, այլ՝ երկնայինների մասին՝ որովայնը մեռցնել՝ կերակուրների սակավապետությամբ, աչքերը մեռցնել՝ չնայելով պոռնկական երեւոյթով հաճույք առթող բաների, այլ նայելով Քրիստոս փեսայի ցանկալի գեղեցկությանը և փափագելի երեսին, որին հենց հարսնացանք: Նույն ձևով իմացիր նաև բոլոր անդամները և բոլոր զգայությունները, որոնց մեռելությամբ ճշմարիտ կենդանություն կստանանք՝ խրատվելով սրբերի շուշանացյալ շրթունքներից:

Ձեռքերը Արս ճախարակով բանված ոսկի-Անր եմ, Թարսիսի ակերով լեցուն (Ե, 14):

Տե՛ս, թե ինչպես մի-մի անդամ թվելով՝ գովությամբ է բացատրում: Որովհետև, ինչպես ճախարակով բանված անոթները բոլորովին զտված և մաքրված են լինում աղտեղությունից և տգեղությունից, այսպես էլ եղբորորդու ձեռքը մաքուր է մեղքերից ինչ-

պես ոսկի: Ոչ միայն իր գործերն ունենալով, ինչպես մարդու ձեռքը, այլ՝ Թարսիսի ակերով լցված, ըստ Եզեկիելի ասածի. «Աչքերով լի են նրանց թևերը»^{133*}: Արդ, եթե Աստծո սպասավոր հրեշտակների բոլոր անդամներն աչքեր են, և՛ տեսողությամբ լի, ապա որքա՞ն առավել ևս Աստծո մարմնացյալ Բան Քրիստոսի (պարագան է), որ թեև Կույսից մեր բնությունն առավ, բայց աստվածային բնությամբ միացած՝ ամեն մեկ անդամն աչք է և տեսանող, ինչպես ասում է մեր Գրիգոր Լուսավորիչը, թե՛ «Աստված ամենայն ինչով լսող է, ամենայն ինչով տեսանող է, ամենայն ինչով խոսք»³⁶, ոչ ինչպես մենք, որ յուրաքանչյուր անդամ ունի իր ուրույն գործը, ոչ աչքը կարող է լսել, և ոչ ականջը՝ տեսնել, ոչ բերանը՝ քայլել, և ոչ ոտքը՝ խոսել. նույնպես են մյուս անդամների գործերը: Բայց թեպետ մեր մարմնով միացավ, սակայն իր հետ ունի Աստվածություն ամենակարողությունը և ամենատեսությունը:

Որովայնը Արս փղոսկրյա տախտակ է, ականակապ շափուղա:

Ակնարկում է աստվածային որովայնը,

որ մերինի նման միայն կերակուրներ և ըմպելիքներ ընդունող չէ, այլև՝ թեպետ մեզ պես կերակրվող է, բայց ականակապ շափոցողայից փղոսկրյա տախտակ է, այսինքն՝ աստվածային դպրությունների և գրությունների անոթ: Որովհետև, ով նրան հավատում է, աստվածային որովայն է ստանում, և «կենդանի ջրերի գետեր կբխեն նրա որովայնից»^{134*}: Ապա որքան առավել ևս աստվածային այն որովայնը, որ ընդունակ է մարմնական կրքերի և աստվածային իմաստության ժողովարան տախտակը լինել, ինչպես փղոսկրը, որ ասում են՝ անփուտ է:

Մրուգքները Արա կճյա պուներ եմ՝ հաստատված ոսկեղեմ խարխալների վրա:

Տե՛ս, թե աստվածային Սողոմոնը ինչպես ճշգրտորեն հայտնում է Քրիստոսի տնօրինությունը, հարսի խոսքերով նշելով եղբորորդու կատարյալ մարդկությունը՝ լիախառն Աստվածությունը: Թող ամաչի պիղծ նեստորիոսը, որ եղծիչ է եկեղեցիների և հաղորդակից հրեաների և մահմեդականների հավասար խորհրդակից: Քանզի կամենալով ճշգրտել աստվածային տնօրինութ-

յունը՝ անորոշ և միացած, անդամ-անդամ և զգայարան-զգայարան, Աստվածությունը խառն է գուշակում՝ գլխից սկսելով և անցնելով մյուս անդամներին, որով ծեփվում է պիղծի բերանը: Արդ, ո՞վ է սյունների կճյա և ոսկյա խարխալը, եթե ոչ մարմնին միացած Աստվածությունը՝ անապական մաքուր և անախտ զորությունը:

Նրա հասակը՝ Լիբանանի պես, ընտրյալ իրուն մայրիները (Ե, 15):

Ի՞նչ է գուշակում այս ասելով. աստվածային մարմնի մեկ անձ լինելը ինչպե՞ս կարող է նմանվել Լիբանանի մայրիների բազմությունը, որ բերում է մայրիների բազմության օրինակը, թե՛ «Արդարները արմավենիների պես պիտի ծաղկեն, Լիբանանի մայրիների պես պիտի բազմանան»^{135*}, եթե ոչ բացահայտորեն ազաղակում է բանականներին և զգայազուրկ (չակներին), [որ] թեև մարմնի մեջ փակվեց խառնվելու համար, բայց նրա զորությունը և հասակը շատ ավելի բարձր են, քան Լիբանանի մայրիները և ավելին. նրա զորությունը և բարձրությունը ոչ թե միայն այսքան է, այլև մեր

բնությունն առած լինելով, պետք է մեզանից օրինակ բերի: Ինչպես որ մարգարեն է ասում. «Դավթի աթոռին պիտի նստի, նրա արքայությունը պիտի հաջողեցնի»^{136*}: Նույնպես Գաբրիելն էր ասում Կույսին, թե՛ «Տեր Աստված նրան պիտի տա իր Հոր՝ Դավթի աթոռը և պիտի (հավիտյան) թագավորի Հակոբի տան վրա»^{137*}: Նա, որ ողջ աշխարհի թագավորն էր, միայն Հակոբի տան վրա է ասում՝ ըստ մեզ խոնարհվելով:

Կոկորդը Արա լի է քաղցրությամբ (Ե,16):

Քաղցրությամբը ասում է աստվածային կոկորդի քաղցրությամբ լի բարբառն, որով աղաղակելով, ասում էր. «Եկեք ինձ մոտ բոլոր հոգնածներ և բեռնավորվածներ, և ես պիտի հանգչեցնեմ ձեզ»^{138*}: Եվ դարձյալ, թե՛ «Չեկա արգարներին կանչելու, այլ՝ մեղավորներին»^{139*}: Եվ այսպիսի քաղցրությամբ այլ հրավերներ (եղան) նրա կողմից մեղավորներին ու ամբարիշտներին: Ինչպես ասում էր պոռնիկ կնոջը, թե՛ «Թող ներվեն քեզ քո մեղքերը»^{140*}: Եվ մյուս պոռնիկին, թե՛ «Եվ ես չեմ դատապարտում քեզ, գնա և այսուհետև մի մեղանչիր»^{141*}:

Եվ ամենևին ցանկալի:

Տե՛ս, ամենևին ցանկալի է ասում. այսինքն՝ թե բոլոր ցանկություններից բարձրագույնն է, որի մեջ ամեն ցանկություն դադարում է, որովհետև ցանկալի ցանկությունից առավել բան չկա: Ինչպես որ Տերն էր ասում. «Բազում մարգարեներ և թագավորներ ցանկացան տեսնել այն, որ դուք եք տեսնում, և չտեսան, և լսել, ինչ որ դուք եք լսում, և չլսեցին»^{142*}: Ըստ այդմ Տերն այլուր աշակերտներին ասում է. «Պիտի ունենաք օրերից մի օր Մարդու Որդուն տեսնելու ցանկություն, և պիտի չկարողանաք տեսնել»^{143*}: Նրան տեսնել ցանկալով մաքսապետ Զաքեոսը, հոգևորապես տեսնելով Աստծուն՝ մարմնով ծածկված, հրաժարվեց փառքից և ինչքերից, ցանկալի համարելով միայն իրեն՝ Տիրոջը: Եվ առաքյալները ևս, տեսնելով ամեն ինչով ցանկալին, ինչպես որ պետք էր տեսնել, թողեցին ամեն ինչ՝ կին, զավակներ, հայր և մայր, ունեցվածք և այսպիսի ամեն բան՝ զնացին նրա հետևից: Որովհետև հաստատապես իմացան, թե միայն նա է ցանկալի տեսողության մեջ ճշմարիտ: Հերովդեսը ևս վաղուց ի վեր ցան-

կացել էր տեսնել Տիրոջը, բայց որովհետև հոգու աչքերը զուրկ էին մարմնի աչքերի տեսողությունից, որ մեղքերով էր խավարած, անարգել ցանկալին ուսուցանեցին: Այժմ ևս պատահում են նրա գործերի հրաշքների տեսությունն անարժաններ, ովքեր չեն կարողանում տեսնել, ինչպես որ հարկն է, քանզի կուրացած է նրանց առաջնորդող միտքը:

Այն է եղբորորդիս իմ, և այն՝ մերձավորս իմ, դուստրեր Երուսաղեմի:

Որքան կարողանում էր, Երուսաղեմի դուստրերին խոսքերից և օրինակներից առավել, ցույց տվեց գեղեցկությունը՝ տեսնելով մարդու բոլոր որդիներից ավելին:

Հարցնում են Երուսաղեմի դուստրերը.

«Ո՞ր գնաց եղբորորդիս Արա, ո՞ր գնաց եղբորորդիս քո, գեղեցիկդ կանանց մեջ, ո՞ր գնաց եղբորորդիս քո, ո՞ր փնտրեմք քեզ թետ» (Ե, 17):

Այստեղ Երուսաղեմի դուստրեր է ասում հրեշտակներին՝ վերին Երուսաղեմի բնակիչներին: Հապա տե՛ս, իրենց համար (մեզ հետ մարմին դարձած) անտեսանելին, որ մենք

տեսանք՝ ցանկանում են մարմնով տեսնել, որ հենց մեզանից սովորեցին և ղեռ սովորում են երկնքից նրա խոնարհումը և մարդեղությունը: Ինչպես ճշտում է առաքյալը՝ «Որպեսզի այժմ հայտնվի երկնքի իշխանություններին՝ եկեղեցու միջոցով»^{144*}: Մեզնից լսելով նրա փրկութենաբեր տնօրինությունը՝ զիտակցում են և անսահման զարմանքով սքանչանալով մեր հանդեպ ցուցաբերած անչափ սիրո և անըմբռնելի խոնարհման վրա, մեզ ձայնակցելով՝ օրհնում են և մեզ տոնակից դառնում, ինչպես որ բացատրում են վարդապետները:

Իսկ երբ հարսին կոչում են գեղեցիկդ կանանց մեջ, այն գեղեցիկ վարքի համար է, որ եկեղեցին ստացավ Քրիստոսի գալստյամբ, նաև որովհետև հարսին ենք ընտրում որպես օրինակ:

Նույն ձևով կանայք է ասում, որովհետև հարսնությունը կանանցն է:

ՓԼՈՒՆ Զ

Եղբորոդի՛ն իմ իջավ պարտեզն իր (Զ, 1):

Պարտեզ հավատացյալներին է անվանում, որ Քրիստոսին հարսնացան: Ինչպես որ նույն այս Սողոմոնի հայրը մի այլ տեղ այգի է անվանում, նույնպես և Եսային^{145*}: Ինքը՝ եղբորորդի Քրիստոսը ևս Ավետարանի մեջ ասում է. «Ես եմ որթատունկը և դուք՝ բարունակները»^{146*}:

Եղբորոդի՛ն իմ իջավ պարտեզն իր՝ տաշտերը խուճկերի, հովվելու բուրաստանում և հավաքելու շուշանները (Զ, 2):

Ինչը պարտեզ է, նույնը նաև բուրաստան է կոչվում, և ով եղբորորդին է, նույնն իր իսկ կողմից հովիվ է անվանվում, ասելով. «Ես եմ քաջ հովիվը»^{147*}: Եկավ հովվելու և արածեցնելու ոչխարներին, բայց ոչ ազահ հովիվների պես, որոնք, ինչպես ասում է Եզեկիել մարգարեի [բերանով], դալար արոտը նախ իրենք էին ուտում և իրենք էին խմում զուլալ ջուրը, և իրենցից մնացած ու

գետնին թափված հարդը և կճղակների կոխկրտելուց պղտորված ջրերը թողնում հոտին, մորթում էին նրանցից գերերին, իսկ նիհարներին չէին խնամում, և այսպիսի այլ բաներ, որ մարգարեների միջոցով բողբոլում է հովիվների անօրենուլթյունների մասին: Իսկ ինքը եկավ, ասում է այս մարգարեի բերանով, լինելու այնպիսի հովիվ, որ ճարտարուլթյամբ արածեցնի և խնամի հոտը, և գողին թույլ չտա ապականելու այն, այլ մեզ առաքինուլթյուն և արդարուլթյուն պարզելով՝ մեզնից շուշաններ հավաքի, այսինքն՝ հավատո խոսքի ծաղիկներ և սրբուլթյուն, որոնցով զվարճանում է Քրիստոս փեսան:

Ես՝ իմ եղբորորդուն, և եղբորորդի՛ն՝ իմ ինձ, որ շուշանների մեջ եմք հովվում (Զ, 3):

Այս խոսքերով հարսը հայտնում է այն բուռն սերը, որ ունի եղբորորդու հանդեպ, և չի կամենում նրա հովվուլթյունից բաժանվել և օտարի հետևից օտար արոտ գնալ, ինչպես և ինքը եղբորորդին՝ Քրիստոսն, ասաց. «Իմ ոչխաներն իմ ձայնն են լսում, և իմ հետևից են գալիս, օտարի հետևից չեն գնա, այլ կփախչեն նրանից»^{148*}: Որովհետև

տեսնող աչքեր ստացած հոտը հետևում է չուշանաբույժ հովվին, որ իբր կեր նախևառաջ իր մարմինն ու արյունն է տալիս և ապա՝ անպատմելի բարությունները: Այստեղ՝ [նկատի ունի] Գրքերի իմաստութեան համեղութունը, որ սրբերի քիմքի համար ավելի քաղցր է, քան բերանի համար մեղրը, իսկ այնտեղ՝ այն, որ իմաստութունից դուրս է, որ ըստ աստվածաբանի ասածի է՝ նրա ուսուցանելը և մեր՝ ուսանելը³⁷, որ ինքն իսկ ասաց, թե ձեզ հետ նոր պիտի ըմպեմ Հոր արքայութեան մեջ^{149*}:

Փեսան հարսին ասում է.

Գեղեցիկ ես, մերձավոր իմ, իբրև անուշափոտություն, գեղեցիկ ես իբրև Երուսաղեմը՝ կարգված ճիսցման համար: Դարձրո՛ւ քո աչքերը ինձնից, վասնզի դրանք թունդ հանեցին ինձ (Ձ, 4):

Այստեղ տե՛ս հարսի (արած) փեսայի անսահման գովքը: Քանզի տեսնելով, որ հարսը ճանաչում է փեսային, նույն մարմնացյալ Բանի զգայարանները մեկ առ մեկ թվարկեց անճառելի սքանչացումով, և որչափ հնարավոր էր, մեր՝ տեսնվողներին և ապականացուներին [միջոցով] կերպարանե-

լով փափագելին, մեր բնությունից դուրս տեսանելիների և ապականացուի գեղեցկությունը և ծանուցումներով որքան որ փափագում էին ուսանել, և իր հանդեպ ունեցած անհազ սիրո հավատին, և այն գեղեցկութեանը, որին փոխվեց ավագանով՝ համաձայն յուրաքանչյուր անդամի և զգայութեան: Որովհետև, ինչպես Աստվածաբանն է ասում, Աստծուն հայելով ստվածացավ³⁸: Ցույց է տալիս, թե նրանք, որ առ Աստված են հայում և նրան են մոտենում, նրա գեղեցկությունն են ժառանգում, ինչպես որ պատրույգը ճրագին մերձենալով նույն լույսին է փոխվում: Արդ, այն նշանը, որ տվեց հարսը փեսայի և եղբորորդու գեղեցկութեան մասին, նույնը փեսան է ձևակերպում հարսի մասին՝ ասելով.

Գեղեցիկ ես, մերձավոր իմ, իբրև անուշափոտություն:

Տե՛ս, Քրիստոս փեսային մերձավոր լինելու պատճառով հարսը գեղեցկացավ անուշահոտութեան պես: Ինչպես որ մեկը անուշահոտին մերձենալիս անուշահոտում է, այնպես էլ, ով որ առ Աստված մերձենա՝

կաստվածանա: Գեղեցիկ ես՝ Երուսաղեմի պես: Որովհետև բնակարան եղավ գեղեցիկ փեսային, ինչպես երկինքը և վերին Երուսաղեմը հիացումի համար ես: Այսինքն՝ թե դու եղար, որպեսզի հիանան քեզանով: Քանզի տեսնելով ինձ մերձենալուց առաջ ունեցած մեղքերի սևությունից, այնպիսի սքանչելատեսիկ գեղեցիկ անբծության փոփոխվելը, միանգամայն հիանում եմ, նաև հրեշտակներն են հիանում, ինչպես Տերն իսկ հիացավ հարյուրապետի հավատով և ասաց. «Իսրայելի մեջ երբեք այսպիսի հավատ չգտա»^{150*}:

Դարձրո՛ւ աչքերդ ինձանից, քանզի դրանք ինձ թունդ հանցիմ (Ձ, 4):

Այսինքն՝ ինձ նայող աչքերիդ հստակատեսությունը և ստուգատեսությունը, որ իմացար իմ տնօրինական գեղեցկությունը, որ տկար և հողեղեն բնությունից եղա, ինչը հրեշտակներին անգամ անհասկանալի էր, բայց դու իմացար և տեսար ինձ բնությունից վեր տեսությամբ և այդ աչքերդ ինձ թունդ հանցիմ: Հեռացրու աչքերդ ինձանից, որոնք խուզարկում են իմ անհաս բնության գեղեցկությունը, որպեսզի ավե-

լին տեսնելու և քննելու ցանկության դեպքում չչլանան և չկուրանան մտքիդ աչքերը, ինչպես Պողոսի մարմնական աչքերը՝ սաստիկ լույսին նայելուց^{151*}: Որովհետև, ինչպես որ արևին պիշ-պիշ նայելը աչքերին վնաս է տալիս, նույնպես էլ Աստծու գիտության մեջ չափազանց խորը նայելը՝ մտքի աչքերին շլացում է բերում: Քանզի, թե Աստված որքան է տեսությամբ, զորությամբ և սքանչելագործությամբ, ոչ ոք հասու չէ դրան, դա նույնիսկ հրեշտակներին է անհասանելի, ուր մնաց թե՛ մարդկանց:

Արդ, հեռացրո՛ւ աչքերդ ինձնից, ասում է Քրիստոս փեսան, որովհետև դրանք ինձ թունդ հանցիմ՝ վախով և սքանչացումով: Սքանչացումով՝ սրահայացության համար, վախով՝ թե միգուցե ավելի նայելով՝ կուրանաս: Նաև Մովսեսը, փոքր-ինչ տեսնելուն պես դարձրեց երեսը և չէր համարձակվում նայել^{152*}: Նույնպես և Եղիան, երեսը մուշտակով ծածկեց միմիայն կռնակից տեսնելով՝ իբր ձայնի արձագանք^{153*}:

Վարսերը քո խուզվածների երամակի պես են, որոնք տեսնվեցին Գաղասադից: Ատամների խուզվածների երամակի պես են, որոնք լվացարանից են ելնում (Ձ, 6):

Վարսերը՝ հպվելով փեսայի մազին, որ մեզ համար սևացավ և մերն իր վրա առավ այն, որ մեզը չգիտեր, մեզ համար մեզը գործեց, որպեսզի մենք նրանով արդարութուն գտնենք: Եվ արդարացանք՝ ճերմակելով ավազանի մկրտությամբ ու լվացմամբ, Գաղազից երամակվող Քրիստոսին հարսնացած հավատացյալների բազմությամբ: Նույնպես և կենաց Բանի՝ մանրող ատամները խուզված երամակների պես, որոնք ելնում են հոգևոր ջրի լվացարանից, որ լվանում և մաքրում է՝ մաքրված ոչխարներից առավել:

Ամենքն էլ երկվորյակ են, և մեջներս ստերջ չկար:

Հավատացյալների երամակների այս լվացարանի մասին նախապես նաև Եսային է վկայում. «Ուրա՛խ եղիր, ամո՛ւլ, որ չէիր ծնում, գոչի՛ր և աղաղակի՛ր, որ չէիր երկնում, որովհետև որբևայրիների զավակները

չատ ավելի են, քան այր ունեցող կանանց»^{154*}: Սրանով գուշակում է, թե որքան բազմաձևություն է հեթանոսությունից հրաժարվող հավատացյալների բազմությունը ուղիղ վարքի մեջ: Ինչպես որ մի տեղ Եսայի մարգարեն, Տիրոջ բերանով վերածայնելով, հարցնում է. «Ո՞վ են սրանք, որ թռչում են ամպերի նման և աղավինների նման ձագախառն երամով գալիս են դեպ ինձ»^{155*}:

Իբրև լար կարմիր են քո շրթունքները, քո խոսքերը՝ գեղեցիկ, այտերդ՝ իբրև կեղևը Առաքիլի քո լուսությունից (Ձ, 7):

Սրանից առաջ ասածները դարձյալ երկրորդեց հարսի գովաբանությունը՝ փեսային մերձենալով: Աչքերը՝ աստվածային աչքերի նման, վարսերը՝ լուսավոր վարսերի պես, գլուխը՝ Քրիստոսի գլխի, շրթունքները՝ կենդանություն բխող շրթունքների, որովհետև շրթունքները կարմրեցին Քրիստոսի արյունով, և խոսում են նույն բանը, որ ինքը սովորեցրեց խոսել՝ թշնամիների համար աղոթել և օրհնել հալածիչներին^{156*}, և նման այլ բաներ: Ինչպես որ նուռն իր կեղևի կարմրությունը իր ներսում ամբարված անուշա-

կերակրությունը հիվանդների և փափագողների առողջութեան համար հայտնի է դարձնում լուությամբ, այսպես էլ Աստուծո ընտրյալներն, իրենց բարի գործերը տեսանելի բաների մեջ սակավ ցույց տալով, իրենց ներսում՝ սրտի և մտքի մեջ ամբարված անչափ առաքինությունը և աստվածասիրությունը ծանուցում են լուությամբ, քանզի եթե իմաստությամբ հետազոտվի մարդը՝ դեմքից էլ կերևա: Սրա համար է, որ ասում է. Բացի քո լուությունից: Թե որչափ ես գեղեցիկ՝ զանազան զգայություններով լցված և զարդարված, լուում ես և անպատմելի է մինչև այն օրը, երբ բոլոր խորություններն ի հայտ գան, անտեսանելիները տեսնվեն, լուածները լսվեն, որ ինքը փեսան ահեղ դատաստանի ժամանակ հրեշտակներին և մարդկանց ցույց տա: Արդ, սակավ ինչ թվելով՝ սրբերի բազմությունն է ճանաչեցնում, որոնք, այս վեցհազարյան դարաշրջանում գտվելով, մաքրվեցին մեղքերից նեղություններով և պես-պես փորձություններով, որ սատանայից և սատանայացած մարդկանցից կրեցին, դարձան, եղան թագուհիներ և հարձեր, և օրիորդներ Քրիստոս փեսային՝ յուրաքանչյուրն ըստ

իր ջանքերի և քրտինքի, անվանվելով և լինելով թագուհիներ, հարձեր և օրիորդներ, ինչն ասում է իսկ:

Վաթսուճ եմ թագուհիները, և ութսուճ՝ հարձերն ու օրիորդները, որոնք թիվ չունեն (Չ, 8):

Սա նրանց բազմության համար է ասում, ովքեր ութերորդի մեջ պիտի փառավորվեն Քրիստոսի հետ և նրա հետ հանգստանալով պիտի ուրախանան, կարծես թե նրա հետ աշխատեցին իրենց վեցհարյան ժամանակի ընթացքում, ինչպես ասում է մեր սուրբ Լուսավորիչը, և նրա հետ պիտի ուրախանան³⁹:

Վաթսուն թիվը երկու իմաստ ունի, զի վաթսունը վեց տասի և հինգ տասներկուսի է բաժանվում: Այստեղ հինգ տասներկուսը Իսրայելի ցեղերի համար է ասված, որոնցից վեցհազարյան դարում հինգ զգայարաններով նրանցից ընտրվեցին, և անդրանկության համար կոչվեցին թագուհիներ, զի հեթանոսներից առաջ հաճոյացան Աստուծոն: Ինչպես ասվում է Հովհաննես ավետարանչի տեսիլքում, բոլորը, զատ-զատ թվելով, տասներկու հազար յուրաքանչյուր ցեղից^{157*}: Եվ

ութսունն հարձեր և անթիվ օրիորդներ ա- սում է նրանց համար, որոնք հեթանոսների միջից հաճոյացան Աստծուն: Այս համարով ոչ թե սահմանափակում է սրբերի թիվը, այլ միավորներով և տասնավորներով ցույց տա- լով՝ բացահայտում և անթիվ է համարում (ավելի) հեթանոսներից, քան հրեաներից Քրիստոսի գալստյամբ արդարացածների քանակը: Եվ երկրորդ, վաթսունով ակնար- կում է վեցհազարյա դարը և դրանցում, ինչ- պես արծաթը՝ բովի մեջ, բազում քրտինքով և չարչարանքներով փորձվածներին՝ ինչպես առաջ ասացի, ստացան թագուհիության ա- նուն Աստծուն առավել սիրելի լինելու հա- մար: Ովքեր այստեղ իսկ փառավորվեցին մարդկանցից, և այնտեղ առավել ևս փառա- վորվելու են: Ինչպես Աստվածածինը, Հով- հաննես Մկրտիչը և նախավկան, առաքյալ- ները, մեր Գրիգոր Լուսավորիչը, տիեզերա- կան վարդապետ Հովհանն և երրորդության ծանուցիչ Աստվածաբանը⁴⁰: Եվ ութսուն հարձերը, որ վաստակով նրանցից կրտսերա- գույն են, բայց օրիորդներից ավելի բարձր, ութերորդի մեջ պիտի պսակվեն: Եվ նրանք, ովքեր զանազան վարքով և ապաշխարու-

թյամբ հաշտություն են գտել և արքայութ- յանն են հասնում ութերորդ դարում, օ- րիորդներ են կոչվում, որոնց թիվ չկա, քան- զի անչափ են ապաշխարությամբ փրկված- ները: Որովհետև հարձեր մարտիրոսներին է կոչում, իսկ օրիորդներ՝ ճգնավորներին և աղքատացած մարմնով ապաշխարողներին, ու նրանց, ովքեր աշխարհից ելնելու ժամին, արտասուքով և զղջումով մեղքերի թողութ- յուն են գտնում, և արքայություն՝ Քրիստո- սի մարմնին և արյանն հաղորդվելով: Նաև սուրբ Լուսավորիչը մի կարգ է համարում ապաշխարողներին և խոստովանողներին և նրանց, որ աշխարհից հեռանալիս դարձի են գալիս: Մարտիրոսներին, ճգնավորներին, վարդապետներին և այլոց ևս թվելու ժամա- նակ մի կարգ էլ նրանց է հաշվում⁴¹: Արդ, երկուսից որ մեկը քեզ հաճելի է թվում, ըն- դունիր, կամ երկուսը միասին, որովհետև Գրոց մտքերը բազմակի են մեկնվում:

Մի է իմ աղավճիս, իմ կատարյալը: Մի է իր մորից, իր ընտրյալ ծնողից (Ձ, 9):

Տե՛ս, թեպես անունով տարբեր են թա- գուհիները և հարձերը և օրիորդները և ա-

նունների համեմատ՝ նաև փառքը, բայց ըստ ավագանի և ըստ խոստովանության արտասուղքների՝ մեկ են՝ լինելով մայր եկեղեցու աղավնիները և Սուրբ Հոգու ծնողի որդիները լինելով: Սրա համար է ասում. Մի է իմ աղավնին, իմ կատարյալը, մի է իր մորից՝ եկեղեցուց՝ իր ընտրյալ ծնողից: Սուրբ Հոգու ավագանի ծնունդով, որ Սուրբ Հոգին ծնում է մկրտությունը, և եկեղեցին սնուցանում է Քրիստոսի մարմնով և արյունով: Այս է վկայում նաև Բասիլիոսը՝ ասելով. «Նույնպես էլ ձեր ճշմարիտ մայրը՝ եկեղեցին կանչեց հնազանդ և կամակատար որդիների բազմությունը, հավատացյալներիդ եմ ասում, այսինքն՝ ժողովվածներիդ»: Եվ առաջ գնալով ասում է. «Քանզի Հոր սիրույն և հավատացյալ Մոր, այսինքն՝ Աստծո և Եկեղեցու հավատացյալ որդիներ լինելով, ձեր Հոր հանդեպ ունեցած սերը անխախտելի պահեցեք, և նայելով սրբերի բազմությանը, որոնք ձեր մոր՝ եկեղեցու գանձն են, հուսով բերկրացած ուրախությամբ ցնծացեք, որպեսզի այն շնորհները, որ նրանց լուսավորեցին, ձեզ էլ արժանի անեն հասնելու սրբերի լույսի ժառանգության վիճակին»: Եվ

դեռ առաջ գնալով ասում է. «Ստեփանոսը սուրբ մայր եկեղեցու սուրբ որդին, նրա կատարելության միանգամայն պարծանքն է»⁴²: Տե՛ս, եկեղեցին, որ հավատացյալների մայր կոչեց, նույնը և Ստեփանոսի, այլ սրբերի՝ առաքյալների և մարգարեների և մարտիրոսների և բոլոր հավատացյալների համար ասաց: Քանզի թեև սրբերը փառքով մեկ չեն, բայց սուրբ եկեղեցու մի ծնունդ են, և այս եկեղեցուց փոխադրվում են նույն եկեղեցին՝ ի վերին Երուսաղեմ: Սրա համար եկեղեցին պետք է ավելի սիրել, քան մարմնավոր ծնողներին՝ առավելագույն ծնողություն համար: Քանզի ինչպես հոգին առավել է, քան մարմինը^{158*}, այսպես էլ հոգու մայրն ավելին է, քան մարմնի մայրը: Արդ, ինչպես որ մոր կաթից և նրա սննդից օտարացողներն են մահանում, նույնպես և նրանք, որ եկեղեցուց, նրա ստինքից և գրքերի հոգևոր կերակրից, որ եկեղեցու ստինքն է, օտարանում են, և փափագով և բաղձանքով չեն մտնում այնտեղ և Գրքերով չեն կերակրվում, չեն կարող ապրել, այլ մահանում են անմահ մահով: Մարգարեն, այս բաները տեսնելով, ավաղում է՝ ասելով. «Մեղավորները օտարացան մորից,

խաբվեցին արգանդից և սուտ խոսեցին»^{159*}: Այսինքն՝ դավանանքը և ուխտը, որ ուխտեցին ծննդյան ավազանում՝ սիրել հայր Աստծուն և մայր եկեղեցուն, ատեցին և օտարացան: Քանզի սատանան նրանց իրենց մորից՝ այսինքն՝ եկեղեցուց դուրս գտնելով՝ գերեվարում է և տանում, ինչպես մարդավաճառը, որ գողանում է մանուկներին, որոնք ծնողներից հեռու են գտնվում: Նաև այն աղոթքները, որ պարտավոր են կատարել եկեղեցու մեջ, նրա սուրբ սեղանի առջև, որտեղ սուրբ Երրորդությունն է բնակվում, նրանք փողոցների, հրապարակների և անսուրբ տեղերի մեջ են կատարում, և եկեղեցու պատիվը հրապարակներին և փողոցներին են տալիս, և այս հանցանքների համար, որոնցով արհամարհում են եկեղեցին և պաշտամունքը դրսում են կատարում, դատապարտություն և ոչ թե ողորմություն են գտնում: Այսպես անողները բազում խոսքերի և ապաշխարանքի արժանի են, և այլ ժամանակ պետք է ասել, քանզի փոքր չէ դրա վնասը: Բայց մենք մեկնենք առաջիկա խոսքերը.

Տեսան Արամ դուստրերը և գովեցին, թագուհիներն էլ երամի տվեցին Արամ:

Դուստրերը և թագուհիները տեսան հարսին և երանի տվեցին նրան: Այստեղ դուստրերը և թագուհիներ է կոչում հրեշտակների ժողովը, անդրանիկների եկեղեցին՝ երկինք գրվածների համար: Տե՛ս, թե ինչպիսի փառքի հասավ մարդը, որ հրեշտակները, որոնք անմահությունը և լուսավոր փառքով են պատված և գերագույն բնությունը հոգիացած, և Աստծուն ավելի մոտ են, երանի են տալիս մարդկանց: Եվ հիրավի իսկ, քանզի Աստված մարդկանց հետ է, այլև աստվածացած և Աստծու հետ միացած մեր բնությունը հրեշտակացած աստված է: Եվ հրեշտակները մեր աստվածացյալ բնության՝ ահ ու դողով (լեցուն) փառաբանիչները, երկրպագուներն ու դողությունը նայողներն են: «Քանզի Աստծուն ոչ ոք չտեսավ երբեք»^{160*} և մեր բնությունը, որ միավորվեց Աստծուն, այդ միավորության պատճառով անտեսանելի է հրեշտակներին: Եվ դարձյալ՝ հրեշտակները, որոնք անմարմին են, Աստծու ծառաներ են կոչվում, իսկ մարդիկ, որ հողեղեն են՝ Սուրբ Հոգու ծնունդ և որդիներ են կոչ-

վում, նրա արյունն ու մարմինը ըմբռնչանողներ, և մեր մեջ ենք առնում այն, որին նրանք չեն համարձակվում մերձենալ և ոչ էլ կարողանում են նայել: Ուրեմն, հիրավի կարոտում են մեզ հրեշտակները, նաև նախանձում են մեր այնչափ պարզեցումներին, որ տրվեցին մեզ Փեսայից: Ինչպես Տերն է ասում Ավետարանում առակավոր ձևով, անդրանիկ որդու, այսինքն՝ հրեշտակների խոսքով. «Այս քանի՞ տարի է, որ ծառայում եմ քեզ և երբեք պատվիրաններիդ դեմ չգործեցի, մի ուլ անգամ երբեք չտվեցիր ինձ, որպեսզի բարեկամներիս հետ ուրախանամ, և դրան, որ քո ունեցածդ պոռնիկների հետ կերավ, պարարտ եզր մորթեցիր»¹⁶¹*: Այսինքն՝ Աստծու Որդու մարմինը, որ մեզանից առավ: Նույնիսկ մեր սպասավորները մեզանից վեր դասվեցին, ինչպես ասում է առաքյալը. «Ոչ բոլոր հոգիներն են առաքվում սպասավորելու նրանց, ովքեր փրկված լինում պիտի ժառանգեն»¹⁶²*: Արդ՝ դուստրերը և թագուհիները, հարսին երանի տալով, ասում են.

Ո՞վ է սա, որ երևում է իբրև առավոտ, գեղեցիկ՝ իբրև լուսիճը, ընտիր՝ իբրև արեգակը, հիացումի համար կարգված (Ձ, 10):

Եվ արդարև, հիացմունք է բնութայունից լինել առավոտի, լուսնի և արևի պես՝ հրեշտակների հիացումի համար կարգված: Այս և Տերն է վկայում՝ ասելով. «Այն ժամանակ արդարները պիտի ծագեն արևի նման երկնքի արքայուկության մեջ»¹⁶³*: Մանավանդ որ արդարները արեգակից առավել պիտի ծագեն, բայց քանի որ երկրի վրա չկա սրանցից ավելի պայծառագույնը, այդ պատճառով այս կերպ են գովվում արդարները:

Փեսան հարսին ասում է.

Ընկուզեմիների պարտեզն իջա մայելու ձորի կանաչությանը: Տեսնելու՝ թե ծաղկա՞ծ է անձին, ծաղկա՞ծ է որթատունկը, ծաղկա՞ծ են անձեմիները (Ձ,11):

Այս բանը պետք է հույժ քննվի, զի ընկուզենիների պարտեզ ասաց հարսին, և այլ բերքերի ծաղիկներն ուղեց տեսնել, և ոչ պարտեզը՝ որթատունկի, նոճու և նռնենու: Արդ, ըստ իս, այստեղ ընկուզենիների պարտեզ երկրի համար է ասված, և սրա մեջ

բնակվող մարդկանց ընկույզ է կոչում, որովհետև ընկույզը երկու բնություն ունի, մեկը՝ կեղևը, որ ունի փայտի բնություն, և մյուսը՝ ներսի պարարտությունը, քանզի հոգին ևս, որ պարարտ է զորությամբ, շրջապատված է մարմնով, բայց եթե միաբանում են արգարության մեջ՝ իրար հակառակ չեն լինում, ինչպես առաքյալն է ասում, թե՛ «Մարմինը ցանկանում է հակառակ հոգու, և հոգին՝ հակառակ մարմնի, և քանի որ սրանք իրար հակառակ են, ուստի ինչ կամենաք, այն մի՛ արեք»^{164*}: Արդ, եթե հակառակները դարձյալ միաբան գտնվեն իրար հետ, հոգու վտակները խմելով՝ կլինեն ծաղկաբեր բույսեր և վայելչաբար գեղեցկատես, կբարձրանան նոճու նման, և մարմինը հոգու պես առաջադեմ կդառնա, և կլինի գինեբեր որթատունկ, որպեսզի երկնավոր Փեսայի բաժակի մեջ ճմլվի ողկույզը, և երկնավոր արքային կերակուր լինի, ինչպես նուրը՝ թագավորներին: Բայց իջնելու մասին, որ ասաց՝ Ընկուզենիների պարտեզն իջա, նկատի ունի Աստծու Բանի մարմնավորությունը իջնելը, որ պատե՛հ ժամին իջավ օրենքներով և մարգարեններով արորված երկիր, կատարելապես

կամենալով ցույց տալ փրկության պտուղների տեսակը արմտիքների ծաղկած բերքերից, քանզի նրանք քարոզեցին Փրկչի գալուստը, որ ծաղիկ էր, և երբ գալստյան ժամանակի նշանը գա, միածին Աստծու տնօրինությունը պիտի ժողովի այգու պտուղը, ինչպես առակով ասված է Ավետարանի մեջ:
Հարսը փեսային ասում է.

Այնտեղ պիտի տամ քեզ ստիճաներն իմ, չիմացալ անձն իմ, դրեց ինձ իբրև կառքերն Ամի-ճադարի (Ձ, 12):

Երբ հարսը լսում է փեսայի իջնելը և ծաղիկներ փնտրելը, պատասխանում է. Ոչ միայն ծաղկեցի ազնվական ծաղիկներով, այլև կերակրեցի քեզ՝ ըստ քո աստվածային ախորժակի, որ խնդրում ես մարդկանցից՝ կերակրել քեզ անհատնում իմ ստինքներով՝ մաքրություն սուրբ սրտիս, որ ստինքներիս մոտիկ է մնում միշտ:

Չիմացալ անձն իմ:

Այսինքն՝ ինչպես որ կաթն աներևութաբար ստինքներից կերակուր է լինում մանուկների անբժույթյան համար, նույնպես և խորհուրդները, անբիժ սիրով ջերմացածնե-

րին, անգիտությամբ մարդու կերակուր են լինում՝ Աստծու, որ ոչինչ չի պահանջում մարդկանցից, բացի սուրբ սրտից, որով տեսնում են Աստծուն, և որի մեջ ինքն է հանգչում: Ինչպես ասում է մարգարեն. «Ես ո՞ւր պիտի հանգչեմ, եթե ոչ սրտով հեզերի և խոնարհների մեջ, և նրանց մեջ՝ որոնք դողում են իմ խոսքերից»^{165*}: Եվ կառքերի նման հանգիստ են լինում փառքով բարձրացրած փեսային:

Դուստրերը և թագուհիները հարսին ասում են.

Դարձի՛ր, դարձի՛ր, սմնացի՛ կիմ, դարձի՛ր, դարձի՛ր, որ տեսնեմք քեզ (Ձ, 13):

Տե՛ս հրեշտակների սքանչացումը մարդկանց չար բարքից դեպի բարին փոխվելու համար: Տեսնենք՝ հրեշտակների զարմանատեսությունն է ցույց տալիս, որ տարբեր էինք հրեշտակների ընթացքից և այժմ գերազանցեցինք հրեշտակներին՝ հրեշտակատեսությամբ: Քանզի նրանք, ունենալով հանդերձ անախտ, անբիծ և անաշխատ բնություն, հաղթվեցին մեզանից, որովհետև մեր հողեղեն, ախտալից և տկար բնության

հզորությամբ գերազանցեցինք նրանց՝ հաղթահարելով մեր ախտերը, կրքերը և կարիքները: Եվ հիրավի զարմանում և տեսություն են խնդրում, որոնց և փեսան առավել սքանչացումով է նայել տալիս հրեշտակներին, նրանց դուստրեր և թագուհիներ է անվանում, որոնց և ասում է:



ՓԼՈՒՒՄ Է

Փեսան ասում է դուստրերին և թագուհի-
Աերին. Ի՞նչ եք տեսնում սոմնացի կնոջ
մեջ, որ եկել է բանակների գնդերի պես (Է, 1):

Այսինքն՝ դուք ի՞նչ կարող եք տեսնել
սոմնացի կնոջ գեղեցկությունից, որ բանակ-
ների զնդերի պես բարի գործերի արմտիքով
է բազմացած. բայց ես ձեզ կհայտնեմ: Եվ ա-
պա նշաններ է տալիս՝ պատմելով: Բայց
հարսին առավել չարություն պատճառով սի-
դովնացի է կոչում, որովհետև ավելի շատ
էին գտնվում կռապաշտություն և ամենայն
անօրենսության մեջ, նմանվելով սիդովնացի-
ներին:

Որովհետև, գեղեցկացավ քո քայլքը կոշիկ-
ների, դուստր Նադաբի:

Տե՛ս, որ առաջ փեսան հարսին սիդովնա-
ցի կոչեց, երբ հրեշտակները առաջ ևս կո-
չում էին սիդովնացի, այստեղ Նադաբի
դուստր անվանեց, ցույց տալով, թե ինչ
պիղծ նախնիների ծնունդներ և դուստրեր

դարձան Քրիստոսի ծնունդ, դուստր և
հարս, որովհետև այլևս չունեն օձի խայթոց-
ների [համար] խոցելի, մերկ զարչապարներ,
այլ՝ արդարություն կոշիկներով ամրացած,
վախ չունեն խայթող օձի թույներից: Ու
նաև՝ մեղքերից լվացված, ինչպես առաքյալ-
ների ոտքերը՝ Փրկչի կողմից՝ ջրով և Հո-
գով, որոնք նաև համարձակություն ստա-
ցան տրորելու օձերին և կարիճներին և
թշնամու ողջ զորությունը: Այս պատճառով
առավելացան գեղեցկությամբ, որովհետև ի-
րենց ոտքերին հազան խաղաղության ավե-
տարանի պատրաստությունը, ինչպես ա-
սում է առաքյալը^{166*}:

Հարդարումը քո բարձերի ցանկությամբ է ար-
վեստավորի ձեռքերով շարված հուլունքների:

Արդ, ինչպես որ ոտքերն ապահովվեցին
խայթողից և այնպես գեղեցկացան կոշիկնե-
րով, նույնպես և գլուխը բարձրացավ կոր-
ծանումից, որ երկրին էր կցվել՝ դրախտի
բարձրությունից ընկնելով: Բարձով, որ իբ-
րև ուլունքներով է զարդարված, որովհետև՝
Ջի իմաստությունը մարդու գլխի մեջ է:
Արդ, հայտնի է, թե ինչպես բարձը գլուխը

շալակողը և նրա հանգիստն է, նույնպես և Գրքերի գիտությունը և Աստծու պատվիրանների իմաստները՝ գլխում և ուղեղում եղած իմաստների շալակողն և հանգիստն է, որովհետև նրա մեջ են հանգչում խելքի ալեկոծությամբ ծփացող հույզերը, ասես բարձին կռթնած, և թույլ չեն տալիս վայրաքնին ալիքների վրա անիմաստ ծփալ: Սրա համար ասաց.

«Քո բարձերի հարդարումը Գմանվում է արվեստավորի ձեռքերով շարված ուլունքների:

Քանզի, ինչպես որ շարված ուլունքն իր մեջ ամփոփում է գեղեցիկ մարգարիտների պես-պես զանազանությունը, նույնպես և մարգարեական գրքերից, օրենքներից, առաքյալների, վարդապետների, մարտիրոսների գործերից, ճգնավորների սխրական մարտերից և նույն ավետարանական հրամաններից և ավետումներից կազմված գրոց գիտությունը, որպես բարձ դրված է մտքի տակ և թույլ չի տալիս գահավիժել երկիր, որովհետև ինչպես առանց բարձի գլուխը գետնի վրա է, նույնպես և երկիր [ասելով] պետք է հասկանալ հերձվածողների մոլար

գիտության թյուր վարդապետությունը, որ չկարողանալով Սուրբ Գրքի իմաստները շաղկապել՝ Քրիստոսի տնօրինությունը երկու բնության բաժանեցին, և այլևայլ զանազան մտքերով հասկացան Գրոց խոսքերը, ինչպես Արիոսը և Մակեդոնը, և աշխարհի կործանիչ և եղծիչ Նեստոր պիղծը և բյուրայլ հերձվածողներ: Նաև վարքերի և կերակուրների և աշխարհի բոլոր գոյացությունների, երկնի և երկրի արարածների, հրեշտակների և մարդկանց, հանդերձյալ գալստյան և ահեղ դատաստանի և հավիտենական գեհենի մեջ սխալ իմաստներ գտան և այլոց ուսուցանեցին: Այժմ ևս շատերը կան, որ նույն մոլար ուսմունքներն են սովորեցնում: Եվ սա լինում է երկու պատճառով. նախ, որ չքննեցին Գրքերը, այլ բավական համարեցին իրենց իմաստությունը՝ գիտությունն ուսումնասիրելու համար, ինչպես որ առաջին իմաստուններն իրենց իմաստությամբ չկարողացան կտրվել կուռքերի պաշտամունքից և իմաստությամբ ճանաչել Աստծուն: Ինչպես առաքյալն է բողոքում. եթե կամենային իմաստությամբ քննել, արարածների մեջ իսկ կարելի էր գտնել Ա-

րարչին. Իմանալով արարածների անկայուն, տկար և փոփոխական բնությունը՝ կարելի էր հետևեցնել, թե ուրիշ ստեղծող կա սրանց, և դրա համար է, որ Աստված տվեց իմաստության առավելությունը: Եվ երկրորդ պատճառը, որովհետև մարդիկ, մեղքի հետևանքով հոգու թևերից հեռու լինելով, հակառակորդ պիղծ ոգին է մտել ներս և իր իմաստությունն է ուսուցանում և իրեն է կապում Սուրբ Հոգուց թափուր մնացածներին: Բայց սրբերի գլուխները նման բարձերի վրա չեն հանգչում, այլ այնպիսիների, որոնք ճարտար արվեստավորի, այսինքն՝ Սուրբ Հոգու կողմից են շինված և հարդարված:

Քո պորտը ճախարակյա թակույկ է, որից անպակաս է խառնված գիմիմ (Է, 2):

Արդ, նույն ձևով պորտերը ևս տվյալ իմաստն ունեն, քանզի ինչպես ճախարակով շինված թակույկները ինքնին փափագելի են և գինի խմողների մտքերն են արագացնում, մանավանդ՝ մատուցակներինը՝ հորինելու նրանց մեջ խառնված գինիների հեղումը, նույնպես և ճշմարտված և մեղքերից մաքր-

ված պորտը դառնում է ընդունարան Հոգու շնորհների և անապակ գինու և անուշ ըմպելիքի՝ իրար խառնելով արբեցումը, որ Հին և Նոր Գրքերից է, որը նախքան լսելը գեղեցկություն տեսքը հորդորում է արբենալ և մեղքերից զտված ու մաքրված պորտի մեջ ընտրել-հավաքել:

Քո որովայնը որպես շեղջ ցորեմի, շուշանով ծածկված:

Այդպիսի որովայնների և մյուս բոլոր գեղեցկացած զգայարանների մասին մեր սուրբ Լուսավորիչը հատուկ գովությունը հաճախ է մանրակրկիտ թվում⁴³: Քանզի, հենց այնպիսիներն են հոգևոր գանձերի հողեղեն ամանները, ինչպես ասում է առաքյալը, թե՛ «Պահենք գանձերն այս խեցեղեն ամանների մեջ»^{167*}: Եվ եթե այս այսպես է, ապա ինչո՞ւ է դնում խեցեղեն ամանի մեջ նման պատվական գանձը, այս Պողոսն ինքն է մեկնում. «Որպեսզի գորություն առավելությունն Աստծուց լինի և ոչ թե մեզանից»^{168*}: Որովհետև դրանով ավելի է երևում Աստծու զորությունը՝ թույլ ամանը ծանրն ու անտանելին է տանում: Ինչպես արարածներից ևս

երևում է, որովհետև երկինքը և երկիրը տկարի վրա է դրված և հաստատված, բայց ամբողջը պահում է անսասան: Նաև Աստվածածնի տկար բնությունը աման և կրող եղավ Աստծու անտանելի Բանի բնության՝ խառնված մարմնին, որ իրենից էր: Նույնպես և տկար մարդիկ, Հոգու շնորհներն ընկալելով իրենց որովայնի մեջ՝ իրար վրա դիզելով, իբրև ցորենի շեղջ, վարդապետության ատամներով աղացվելով, հաց են դառնում ի կերակուր այդ Հոգևոր կերակուրներին քաղցյալների և կարոտյալների:

Եվ ծածկված շուշաններով: Հրաշագույն շուշանների պես հրավիրում են հրեշտակներին տեսության գալու, ինչպես առաջ դուստրերն ու թագուհիներն ասացին, թե՛ Դարձի՛ր, և տեսնենք քեզ:

Քո երկու ստիճաները, որպես երկվորյակ ուլերն այժյամի (Է, 3):

Արդ, երկու տեսակ բան կա մարդու մեջ, ինչպես ասում է Աստվածաբանը՝ հոգի և միտք, և նրանք երկուսն էլ հարաբերվում են սրտին, ուր ստինքներն են, այդ պատճառով էլ նրա մերձաբնականներին ստինքներ է ան-

վանում: Ու նաև, ինչպես ստինքը կաթնաման է և կենսատու կերակուր մանուկներին, նույնպես և միտքն ու հոգին արթուն, լուսավոր և սրահայաց են, ինչպես այժյամը, աստվածային հեռավորները որպես մերձավորներ տեսնելով՝ անձանց անսխալ ճանապարհ են ցույց տալիս և իրենց հետևից գնացողներին անորոգայթ են պահում որսորդներից և կերակրում են մեղքերից մաքրվածներին, ինչպես ստինքները՝ մանուկներին:

Քո աչքերը որպես ծովակն Եսեթոնի⁴⁴, դոմեռի մոտ բազում դուստրերի (Է, 4):

Այն աշխարհը լինելով չափազանց հեռավոր, ոչ ոք տեղեկություն չի տալիս նրա մասին: Բայց ես այսպես եմ հասկանում, որ բարձրագույն է երկիրն այն և ստորին մասում ունի հանդիպահայաց մեծ ծովակ: Այսպես էլ՝ եկեղեցի-հարսի աչքերը՝ հոգու մեծությամբ մեծացած, ակնդետ նայում են երկնքի դռներին, ուր բնակվում են հրեշտակների բազմության դուստրերը՝ չչեղվելով աջ կամ ձախ և անհագ նայվածքով սպասում են երկնքի թագավորին, որ արժա-

նանան մտնելու դռներից այնտեղ, ուր այն քաղաքի դուստրերն են բնակվում:

Ռունգները քո իբրև աշտարակը Լիբանանի, որ դիտում է ի դեմս Դամասկոսի:

Քանզի, ինչպես որ Լիբանանի աշտարակը վայելուչ նայվածք ունի դեպի Դամասկոս, այնպես էլ քո ուունգները փափագում են վայելուչ նայվածքով հոտոտել մաքուր յուղի բուլբուլի անուշուրթյունը, որ վերին Դամասկոսից է, այսինքն՝ երկնի քաղաքից: Մի կողմ եմ թողնում Պողոսին, որ Երրորդության մասին առաջին պատվական գիտությունն այնտեղ ստացավ՝ Դամասկոսին մերձենալու ժամանակ և դամասկոսցի Անանիայից բժշկեց իր աչքերի մթազնումը՝ նրա ձեռնադրությամբ^{169*}, և այդ սխրալի և հիանալի հոտը հոտոտեց և հոտոտեցրեց բոլոր հեթանոսներին, և այդ բուլբուլը հոտոտած ուունգները չհագեցան, այլ զմայլվեցին ինչպես պատվական գինուց արբածները, որ գիտակից ուղեղն անուշացնում է ցանկալի և հրեշտակային քնով և հանգչեցնում է մեղքերից ուժատներին:

Քո գլխի հյուսքերը իբրև ծիրանի, իբրև թագավորի թագ գլխի՝ հրապարակում ընթանալիս (Է, 5):

Ինչպես որ ծիրանինները թագավորների վայելուչ սեփականությունն են, և միայն թագավորն իշխանություն ունի զարգարվելու ծիրանիններով, նույնպես և այն գլուխները, որոնք մագեր և զարդ, և երկնավոր փեսայի փառքն ունեն, վայելչացած են մաքրությամբ՝ ծիրանի հագուստների նման և թագավորների գլխին դրված թագի պես, երբ նրանք զորքերի միջով ընթանում են հրապարակով: Արդ, գուցե մեկը հարցնի, թե ինչո՞ւ պսակները նահատակների գլխավոր պարգևներն են, որ, օրինակ, բազում սրբերին երևաց, ինչպես քառասուն մանուկներին⁴⁵, Ղևոնդյաններին⁴⁶ և բազում այլոց: Եվ թագավորների գլխին է դրվում, քանզի մարդու զգայարաններից ամենից պատվականը գլուխն է, ուր ուղեղն է գետեղված, որտեղից խելքի իմաստությունն է և կյանքի սկզբնավորությունը, որտեղ և լուսատես աչքն է, քիմքի և հոտոտելիքի կազմը և ականջների լսելիությունը, և բերանը, որ կերակրով և ըմպելիքով պահում է

կենդանությունը և խելքի ու սրտի զգացումները խոսքերով արտահայտում է լսողներին: Արդ, այն պատճառով է պսակում նրան, որ ճիշտ է ուղղորդում անձն ու խելքը՝ գործերը, խոսքերը, առաքինությունները, սրբությունը, սերը և ողորմությունը և սրանց նման աստվածահաճո խորհուրդները և գործերը: Արդ, գլուխը պարփակելով պսակում է թագով, որ պատճառն ու խրատատուն է բոլոր բարիքների, և գլխի պսակմամբ ցուցադրում է պարգևներով պարփակված ամբողջ անձը:

Թագը գլխին դրված. սրանով ցույց է տալիս Աստծու անճառելի լուսավորությունը և զորությունը՝ ազուցված գլխի վրա, որ առիթն է այսքան բարի խորհուրդների և օգտավետ ուսմանց, ինչպես ասում է այս Սողոմոնը. Շնորհաց պսակը պիտի ընդունես քո գլխին:

Շնորհ՝ գլխին աստվածային զորություն հագնելուն է ասում, որ ասես թագով զարդարված, մարմնավորներով կերպավորում է աներևույթ փառքը, իսկ տեսանելիներով և սնտոի ցանկալիներով՝ աներևույթ և ճշմարիտ ցանկալիները: Արդ, երանի նրանց, որ

անթառամ թագին են արժանանում և հարսնանում, որովհետև նրանցով թագակից են լինում Քրիստոսի անվերջանալի թագավորությանը:

Քանզի գեղեցկացար և հեշտալի եղար, սե՛ր, քո փափկության մեջ (Է, 6):

Նայեց հարսի բոլոր զգայարանների ճշմարտապես թվարկված գովասանքներին, թե ինչպես մեկ առ մեկ թվարկված և գովված են, դարձյալ համառոտում է՝ ասելով. Քանզի գեղեցկացար և հեշտալի եղար: Այս է ստուգապես մարդու գեղեցկությունը, որ բոլոր զգայարաններն իր Աստծուն է ծառայեցնում, և աստվածացնում է դրանք՝ Աստծուն մերձենալով, աստվածային գործերին հաղորդվելով, որ արժանանում է Քրիստոս փեսայից՝ լսելու այնպիսի բաներ, թե՛ գեղեցկացար և հեշտալի եղար ինձ: Ո՛վ անբավ երանություն, որ Աստծո բերանով խոստովանում է, թե գեղեցիկ և հեշտալի է եղել իրեն: Որին ցանկացան սրբերը՝ առաքյալները, մարգարեները, նահատակները, ճգնավորները և բոլոր վարդապետները քահանայական կարգերով հանդերձ, որոնք Աստծու

դուստր և հարս լինելով, մոռացան իրենց գերդաստանները և հայրերի տունը, օտարանալով աշխարհից և աշխարհում եղած ամեն ինչից, փափկացան առաքիլնության վարքով, և սիրվեցին Փեսայից, որ ասաց. Սեր քո փափկության մեջ: Թե այն փափկությունը սիրում եմ այնչափ սիրով, ինչպես մարմնավոր փեսաները՝ մարմնով փափկացած հարսներին:

Նմանվեց քո մեծությունը արմավենու և քո՝ ստիճքները ողկույզների (Է, 7):

Երբ քեզ տեսա, այնպես ցանկալի եղար ինձ, ինչպես արմավենու մեծությունը և ստիճքները քո, ինչպես մանուկներին՝ ախորժելի, որ, վրա բերելով, ասում է.

Ասացի, պիտի ելնեմ արմավենու վրա, պիտի բռնեմ նրա բարձրությունից (Է, 8):

Օհ, տե՛ս Աստծո անբավ սերը, որ տածում է սրբերի և արդարների հանդեպ, որ, քերովբեական աթոռին նստելուց առավել, նրան բաղձալի է սրբերի մոտ հանգչելը: Եվ այս քեզ նշան, որ Հակոբ նախահոր մոտ իջնելով և իբրև ընկերն ընկերով հետ ողջագուրվելով՝ գիրկն առավ և հակառակվեց

նրան՝ ասես պրկանոցով կաշկանդելով, և բռնելով նրա ամուլաջիլերից, թուլացրեց^{170*}, որ և Եսայի մարգարեի բերանով ասում էր. «Ես որտե՞ղ պիտի հանգչեմ, եթե ոչ հեզերի և խոնարհների մեջ և նրանց մեջ, ովքեր դողում են իմ խոսքերից»^{171*}: Քանզի գգվում և փափագում է սրբերի մեջ լինել, իբրև անսահման ցանկալի բաների: Որ և տեսնելով բաղձալի ցանկությունը և հարսի մեծությունը, ինչպես արմավենին, ասաց. «Պիտի բարձրանամ նրա վրա, պիտի բռնեմ նրա բարձրությունից»: Որ և խոնարհեցրեց երկինքը և իջավ, և մեր բնությունն առավ՝ առ մեզ տածած իր անպատմելի սիրո համար:

Եվ պիտի լինեն ստիճքները քո, որպես ողկույզ որթի և հոտը ոռոգների քո, իբրև խնձոր, և կոկորդը քո իբրև գիճի ազնիվ:

Ինչպես որ ողկույզը նախքան ուտելը, նախ աչքն է զվարթացնում տեսությամբ, նույնպես էլ սրտիդ ստիճքներից բխած շնորհների խոսքերը նախ լսելիքն են բերկրեցնում և ապա՝ խոսքին ախորժողների սիրտը:

Եվ հոտը ոռնգմերի քո, իբրև խնձոր:

Այսինքն՝ սրբության վարքի անուշահոտությունը, որ տարածվում է մեծերի թե փոքրերի վրա, որպես խնձորների անուշահոտություն, որ հոտոտում է երկնավոր փեսան, զոհերից և մեծամեծ նվերներից առավել, որ ասվում է Աստծու անուշահոտություն: Զի, ոչ թե ճենճերաց հոտն էր, անուշահոտություն Աստծուն, այլ մատուցողների մաքրությունը հաճոյացնում և անուշ հոտ էր լինում Աստծուն, ինչպես՝ Հաբելին:

Եվ կոկորդ քո իբրև գիճի ազնիվ (Է, 9):

Քանզի, ինչպես գինին ուրախարար է խմողների համար, նույնպես էլ սրբերի և անարատների երգը և նրանց կոկորդների խոսքերը ուրախացնում են երկնավոր փեսային առավել, քան հրեշտակների սրբասացության երգերը: Քանզի նրանք կարողությամբ և անմեղությամբ են նրա փառաբանիչները, որը զարմանալի չէ, բայց երբ ախտով և կարիքներով պատված հողազանգված մարդը կարողանում է նմանվել կրքից զերծ ու անկարիք եղողներին, շատ սքանչելի է, և արժանի՝ սերովբենների կոկորդն առ-

նելու և նրանց երգելիքը երգելու: Եվ [այս] ինչպես կարող է չուրախացնել փեսային, երբ դուստրերը և թագուհիները սքանչանում են գեղատեսիլ սոմնացիով, որ հարսն է, ասելով. Դարձիր, դարձիր, սոմնացիդ, և տեսնենք նոր և չքնաղ տեսքը քո: Եվ փեսան, իր վրա առնելով հրեշտակների՝ այսինքն՝ դուստրերի և թագուհիների կոչը, պատասխանեց և ասաց. Ի՞նչ եք տեսնում այդ սոմնացու մեջ, որովհետև, թե որքան է սխրալի, չեք կարող տեսնել այն՝ եթե ոչ ինձնով, որ կարող եմ հրապարակատես անել մարդկանց ծածուկ առաքինությունները: Եվ, ապա՝ մեկ առ մեկ թվելով զգայաբանների հրաշալիքները, նրանց պատմեց հարսի գեղեցկությունը:

Հարսն էլ դուստրերի և թագուհիների երեսին ասում է.

Եղբորորդու հետ գնացի իմ ուղի՛ն, բավականացա իմ շոթունքներով և ատամներով:

Այսինքն՝ թե այն պատճառով ձեզ սքանչելի թվացի, որ հրաժարվելով նախահորս աշխարհական, մեղսասեր, օձապատիր խաբեությունից, ուղիղ վարքով քայլեցի եղբոր-

որդուս հետ, որ իմ [ընուծթյունը] հագավ և իմով հաղթեց և ինձ ուղղությունն ցույց տվեց, նախ՝ ինքն անելով և ապա՝ ինձ ուսուցանելով, ինչպես ասում է Ղուկաս ավետարանիչն իր երկրորդ գրվածքում. «Որտեղ Հիսուս սկսեց գործել, և ապա ուսուցանել»^{172*}: Քանզի նրա համար մարդ եղավ, որ նախ՝ ինքն անի այն ամենը, որ վարդապետեց և գործերով ուսուցանի հեզուծթյուն և խոնարհություն, ինչպես ինքը Տերն ասաց, թե. «Ուսանեք ինձնից, որովհետև հեզ եմ և խոնարհ՝ սրտով, և պիտի հանգստություն գտնեն ձեր անձերը»^{173*}: Նույնպես և քաղցրությունը, երբ աստվածային երեսին ապտակ զարկողին ասաց, «Եթե չար բան խոսեցի, վկայիր չարը, իսկ եթե բարի խոսեցի, ինչո՞ւ ես զարկում ինձ»^{174*}: Եվ երբ իրեն դիվահար կոչեցին, դարձյալ չընդդիմացավ, այլ քաղցրությամբ ասաց. «Իմ մեջ դե չկա»^{175*}: Նույնպես անոխակալությունը, որ աղոթում էր խաչ հանողների համար. «Հա՛յր, ներիր նրանց, զի չգիտեն, թե ինչ են գործում»^{176*}: Նույն կերպ իր հոգնածությունը էչով անցկացրեց և առանց գոռոզանալու էչի վրա նստեց: Այդպես արեց նաև հարսանիքին՝

ջուրը գինու փոխելով և լինելով խնդակից խնդացողին և ընծայաբեր: Սգի մեջ տրտմության չափը ցույց տվեց արտասովելով և իր տրտմելով սովորեցրեց մեզ սգակից լինել եղբորը: Եվ կերակուրների չափը՝ գարեղեն նկանակով և ձկնով վճարելով, խոտերի վրա բազմելով, ցույց տվեց անօթևան մնալն ու չափավոր տուրք վճարելը^{177*}:

Եվ այն ամենը, ինչը կարիք ունի ուսման, նախ ինքն իր անձի վրա կրեց և ցույց տվեց մեզ նույն ճանապարհը: Սրա համար էլ հարսն ասում է. Եղբորորդուս հետ գնացի իմ ուղին: Այսինքն՝ նրա հետ գնացի բոլոր ուղղություններով, որ նա գնաց երկրի վրա, և նրան նմանվեցի, ինչպես ընտիր անոթ Պողոսն էր ասում. «Դուք ինձ նմանվեք, ինչպես ես՝ Քրիստոսին»^{178*}: Եվ որտեղի՞ց տրվեց այնչափ զորություն հարսին՝ Քրիստոսի ուղեկցության ուղղությունը: Քրիստոսի մարմնի և արյան՝ հաղորդության մեծ խորհրդից, որ մեզ տվեց զորանալու համար, և բավական համարեց շրթունքով ըմպելու և ատամներով մանրելու այն, որին դուք հրեշտակներդ՝ դուստրերդ և թագուհիներդ, ի զորու չէիք տեսնելու, նրան, որ ոսկորը

չփշրվեց խաչի վրա, ինչպես կանխագուշակել էր մարգարեն^{179*}, այն կարողացանք մանրել ատամներով, և անբովանդակալի և կիզիչ հրով չենք այրվում կիզանուտ մարմիններով, և դուք չեք կարող, և չեք համարձակվի ո՛չ ակնարկել, և ո՛չ էլ իշխել: Եվ ես ի զորու եղա (կրել) անբավելին՝ ինչպես Աստվածածինը, որ որովայնի մեջ կրեց և չայրվեց, ինչպես մորենին՝ նրա օրինակ: Եվ սրանով իբրև փեսայի պանծացյալ անճառելի պարզեով, հարսը պարծենում է հրեշտակների առջև, և, վրա բերելով ասում.

Ես եղբորորդու՞ն եմ, և ինձ մոտ է Արա վերադարձը (Է, 10):

Այսինքն՝ թե այս կերակրով միանալով նրան՝ ես նրանն եմ, և նա՝ իմը, որպես և ինքը՝ Տերն ասաց Ավետարանում. «Ով ուտի մարմինն իմ և ըմպի արյունն իմ, իմ մեջ պիտի բնակվի, և ես՝ նրա մեջ»^{180*}: Եվ դարձյալ. «Ինչպես որ դու, Հայր իմ, իմ մեջ ես, ես էլ՝ քո, որպեսզի նրանք էլ մեր մեջ լինեն: Ես՝ նրանց մեջ, և դու՝ իմ մեջ»^{181*}:

Առ ինձ դարձը Արա:

Այս միավորության վրա և այն է ասում, որ գալու է մյուս անգամ իր մոտ առնելու մեզ յուր փառքի մեջ դասելու և գոտի կապելու, և մեզ ծառայելու, ինչպես և ասաց:

Ե՛վ, եղբորորդի՛ իմ, էլ՛նե՛ք անդաստան՝ հանգչե՛ք գյուղերի մեջ (Է, 11):

Կանուխ գնանք դեպի այգիները. տեսնե՛ք, թե ծաղկա՞ծ է որթատունկը, ծաղկա՞ծ է Առհի՛ն, ծաղկա՞ծ ե՛ն Առնե՛հիները (Է, 12):

Տե՛ս, այստեղ հարսի միությունը փեսայի հետ, որ նախապես ասաց փեսան, թե՛ ընկուզենու պարտեզն իջա միայն տեսնելու, թե ծաղկա՞ծ է, իսկ այս խոսքերով, որ այժմ հարսն ասաց, հասկանում է Քրիստոսի երկիր գալը՝ տեսնելու համար, թե ծաղկա՞ծ են այն սերմերը, որ մարգարեները սերմանեցին, որ պտղաբերվեց իր գալստյամբ: Արդ, հարսը, միանալով փեսային, սիրում է հաղորդակից լինել ծաղիկների և պտուղների բերքը տեսնելուն, այդ պատճառով այնտեղ փեսան ասում է՝ իջա, քանզի երկնքից իջա: Եվ այստեղ հարսն ասում է՝ զնանք, քանզի, երկրի վրա լինելով, հարսը սիրում է շրջել

փեսայի հետ, որ «երկրի վրա երևաց և մարդկանց հետ շրջեց»^{182*}: Ինչպես և ասաց, թե. «Կան նաև իմ այլ ոչխարները, որոնք այս գավթից չեն: Նրանց նույնպես պետք է ես այստեղ բերեմ, որ իմ ձայնը լսեն և լինեն՝ մեկ հոտ և մեկ հովիվ»^{183*}: Որ և շրջեց իսկ հարսի հետ, այսինքն՝ առաքյալների հետ, ոչ միայն Հրեաստանում, այլև հեթանոսների երկրում, այսինքն՝ այնտեղ, ուր սամարացիին է, փյունիկ ասորին և ուրիշ շատերը: Նաև՝ համբառնալուց հետո առաքյալների և նրանց աշակերտների, վարդապետների և մարտիրոսների հետ շրջեց քարոզելու և տեսնելու համար հավատո խոսքի ծաղիկը և պտուղը: Եվ այս մասին է վկայում տերունական խոստումը, թե. «Ձեզ հետեմ ամեն օր, մինչև աշխարհի վերջը»^{184*}:

Արդ՝ առաքյալները չհասան աշխարհի վախճանին, ապա ուրեմն պարզ է, թե մինչև այժմ բոլոր հավատացյալների հետ է՝ ծաղիկները տեսնելու և պտուղների բերքով զվարճանալու [համար]:

Բայց դու տե՛ս հավատացյալների հանդեպ փեսայի և հարսի զթածությունը: Որովհետև, հրամանի չի սպասում, ինչպես հնում

մարգարեները, այլ՝ ստանալով այն սերը, ինչ որ փեսան, աղաչում է շրջել, փնտրելու համար մոլորյալներին և գտնելու՝ կորուսյալներին:

Ինչպես որ առաքյալներից և վարդապետներից շատերը իրենք իրենց նվիրեցին ծառայությանը, ինչպես որ մեր Լուսավորիչը, որ կնոջն ու զավակներին թողնելով, կամովին եկավ Տրդատի մոտ և աղաչում էր Աստծուն բոլոր մարդկանց դարձի համար, ինչպես որ իր աղոթքների մեջ կան պես-պես պաղատագին խնդրանքներ⁴⁷, որ այստեղ բոլորը երկրորդելու հարկ չկա:

Տե՛ս, ասաց, որթատունկ, նոճի և նռնենի: Քանզի նրանք, որ հավատքի եկան և հարսնացան Քրիստոսին, ոմանք ունեն պտուղ, սակայն՝ ոչ գիտությամբ, ինչպես հարյուրապետը և Կոռնելիոսը, նաև հենց Պողոսը, ով, ըստ օրենքների արդարության, եղավ անարատ: Իսկ ոմանք հենց անպտուղ էին, ինչպես Ոնեսիմոսը, որ նոճի էր: Իսկ այլք՝ ողկույզ և նուռ, սակայն աստվածագիտության մեջ՝ անկատար:

Մանրագործերը տվեցին հոտն իրենց. Եվ դուների առջև ամենայն պտուղներից՝ հին թե՛նուր, որ մայրս ինձ տվեց, պահեցի քեզ, եղբորորդի՛ իմ (Է, 13):

Մանրագործերը տվեցին հոտն իրենց:

Արդ, մինչև այժմ թվածներին բերումով, այս առավել մեկնություն կարիք չունի, սակայն համառոտն այս է, թե՛ գոհանում են հավատացյալների բերքերով, որ առաքյալները և նրանցից հետո անհամար վարդապետները քարոզությունք բյուր-բյուրավոր զանազան առաքինություններով հաճոյացան Աստծուն:

Ոմանք՝ վկայությունք արյան, ոմանք՝ ճգնավորական կյանքով, ոմանք՝ կուսությունքով, ոմանք՝ առաջնորդական և քահանայական վերակացությունքով, ոմանք՝ աղքատությունքով և հիվանդությունքով, և ոմանք՝ հարստությունքով՝ իրենց ինչքերը բաժանելով բոլորին: Եվ սրանց նման շատերը՝ միաբանեցին Աստծու սիրով, հույսով, հավատով, ողորմությունքով, խոնարհությունքով, սրբությունքով, եղբայրասիրությունքով, քաղցրությունքով, անոխակալությունքով, երկայնամտությունքով, անընչասիրությունքով, երկրավոր

բաներն արհամարհելով, երկնայինը ցանկանալով, զարհուրելով զեհենից, փափազելով Արքային և արքայությունը: Այս ամենն է, որ ասաց.

Մանրագործերը տվեցին հոտն իրենց. և դուների առջև ամենայն պտուղներից՝ հին թե՛նուր, որ մայրս ինձ տվեց, պահեցի քեզ, եղբորորդի իմ:

Սրանք առաքյալների և առաջնորդների գոհաբանական խոսքերն են ուղղված Քրիստոսի հավատացյալներին, ովքեր նրան են ընծայում այժմ և մեծ օրը, միասին հավաքված, և ասում են կասեն մարգարեի խոսքը. «Ահավասիկ ես և մանուկներն իմ, որ տվեց ինձ Աստված»^{185*}: Նման է սրան, որ ասաց, թե՛ Պահեցի քեզ, եղբորորդի իմ, որոնք առանց ամաչելու հաշիվ են տալիս ժողովրդին և պատարագում՝ Աստծուն:

Հին թե՛նուր, հներից և նորերից: Բայց որ ասում է՝ Որ տվեց ինձ մայրն իմ, մայրը ընդհանրական եկեղեցին է և Սուրբ Հոգին, որ ծնվեց ավազանով և սնեց Քրիստոսի արյամբ:

ԳԼՈՒԽ Ը

Ո՞վ կտա քեզ, եղբորորդի՛ իմ, ըմբռշխանել ստիճքներն իմ⁴⁸ (Ը, 1):

Սրբերի անհագ տենչն է, որոնց անհավատալի է թվում Աստծո փառքին հասնելը, առանց նկատի առնելու իրենց վաստակը, ջանքը և սրտի բաղձանքը: Եվ այս առ խոնարհություն սուրբ հոգիների, որոնք չեն համարձակվում իրենց սրտերի ստիճքները նրան բանալ, ինչպես Պողոս առաքյալն էր ասում, թե «Ես անձն իմ արժան չեմ համարում հասած լինելու»^{186*}: Նույնպես և մյուս սրբերը: Որովհետև իմանալով նախահոր կործանումը և, մանավանդ, սատանայինը, որն իր բարձրությունից ընկավ իր հպարտության պատճառով, նրանց ողջ ջանքն է խոնարհեցնել իրենց, իրենց անձն ամենքից նվաստ նկատել, և իրենց վաստակները մոռանալ, և իրենք իրենց արժանի չհամարել Աստծու ծառայությանը նվիրվելու, քանզի սովորել են Տիրոջից, որ ասաց. «Երբ բոլոր հրամայվածները կատարեք, ասեք թե անպի-

տան ծառաներ ենք, ինչ որ պարտավորվեցինք անելու, արեցինք»^{187*}: Այսինքն՝ ծառան անպիտան է, եթե ոչինչ չի հավելում ծառայությունը, քան հրամայվածները: Քանզի, այնպես էին ուսուցանում իրենց անձերը խոնարհության մեջ պահել և շնորհներին անարժան համարել, ինչպես առաքյալն է ասում՝ «Բոլոր առաքյալներից նվաստն եմ»^{188*}: Նաև բոլոր սրբերի և Սուրբ Հոգով լցվածների գործն այս է, որ ինչ արդար գործ էլ անեն, և կամ ի սրտե սեր ցույց տան առ Աստված, մտքի խոնարհություն չհամարեն, թե՛ Աստծո գիտություն մեջ են իբրև անարժաններ: Սրա համար է ասում, թե՛ ո՞վ կտա քեզ ըմբռշխանել ստիճքներն իմ, այսինքն, ընդունել քո հանդեպ ունեցած իմ սրտի սերը: Այս պատճառով վրա բերելով՝ ավելացնում է.

Երբ քեզ դրսում գտնեմ, պիտի համբուրեմ և պիտի չքամահրես ինձ:

Ի՞նչ, քո սերն իբրև թե արհամարհելի՞ սեր է: Բայց այս ցանկություն սերն արժանի է պարծանքի և հրապարակատեսություն, և ովքեր ճաշակեցին այն սերը, արբեցան նրա

սիրով և արհամարհեցին կին, որդիներ, ինչք, ստացվածք, իշխանություն, փառք և նաև իրենց անձը, և, մահվամբ, արյունով և աղքատությունը կատարյալ լինելով, համբուրեցին Քրիստոսին և համբուրվեցին նրանից: Այս է պարծանքի և երանության արժանի սերը, որ գովվում է հրեշտակներից և մարդկանցից:

Պիտի տանեմ քեզ տունն իմ մոր՝ սեմյակն ինձ հղացողի (Ը, 2):

Ասաց, թե.

Երբ քեզ դրսում գտնեմ, պիտի համբուրեմ և հետո՝ պիտի տանեմ քեզ տունն իմ մոր՝ սեմյակն ինձ հղացողի:

Այս բանն առաքյալը մեկնում է՝ ասելով. «Որի տունը մենք իսկ ենք», և որ հաջորդում է, լինելով Սուրբ Հոգու տուն և մեր մոր Հոր: Արդ, հայտնի է, ինչպես ասում է Բարսեղը, թե որտեղ կա Սուրբ Հոգին, այնտեղ են բնակվում նաև Հայրը և Որդին⁴⁹, ինչպես մարգարեի բերանով ասում է. «Նրանց մեջ պիտի բնակվեմ և նրանց մոտ պիտի գնամ»: Արդ, փեսային սենյակ և տուն եղավ հարսը, և այն տուն տանող ճա-

նապարհը խոնարհությունն է, և ով խոնարհ է, Սուրբ Հոգու հալածիչ է և ոչ թե՛ հանգստարար, ինչպես ասում է Բարսեղը⁵⁰:

Արդ, սեմյակ տանելով, պիտի խմեցնեմ քեզ անուշահոտ գինուց՝ անուշահոտ օշարակից:

Այս է, որ ասաց, թե՛ Ով կտա քեզ ըմբռնել ստինքներն իմ: Արդ, դրսում գտնելով և համբուրի արժանանալով, իր անձի սենյակն ու տունը և սրտի մեջ առնելով փեսային և Երրորդության բնակարան լինելով, խոստանում է նրան խմեցնել գինու ուրախությունը և նոնենիների օշարակը, որոնք Աստծու բարի խորհուրդներն ու սրտի գիտակցությունն են, ինչն անհասկանալի է մեղավորներին, զի Աստված նրանցով է կերակրվում և նրանց ըմպելով է սնվում, քանզի այս է կերակուրն Աստծո:

Ավելացնում է, թե՛ ոչ միայն բնակարան եղա Աստծո կամ փեսայի, այլ նրանցով հովանավորվեցի և պահպանվեցի, որի համար ասում է.

Թող Արա ձախը լինի գլխիս տակ, և աջը թող գրկի ինձ (Ը, 3):

Սրանով բացահայտում է հարսի, այ-

սինքն՝ եկեղեցու անբաժանելի պահպանութ-
յունը և վերակացուլթյունը:

Երդվեցնում եմ ձեզ, դուստրեր Երուսաղեմի,
անդաստանի գորությունների և ուժի վրա, եթե
արթնանաք՝ արթնացրեք սերը, միճև կամենա
(Ը, 4):

Սա երկրորդ անգամ եմ մեկնում: Բայց,
ասվելով մեզ տված բազմադիմի շնորհները
և անիմանալի պարգևները, երգամամբ հորդո-
րում է հրեշտակներին իրեն փառաբանակից
և գոհաբանակից լինելու մեր հանդեպ եղած
Աստծո սիրո համար, և՛ արթնացնող, որ
չկարծի, թե միայն ինքը բավական է Աստծո
երախտիքների օրհնություն համար, որով և
առավել ևս կարթնանա սերը, երբ գոհա-
նանք և փառավորենք նրան: Որովհետև
տասը բորոտներից մեկը, դառնալով Տիրոջը
և բարձրաձայն փառաբանելով նրան իր
մարմնական բժշկություն համար, ստացավ
նաև հոգու լուսավորությունը և հավիտե-
նական կյանքը: Իսկ ինը, ապերախտ
գտնվելով երախտավորի հանդեպ, զրկվեցին
ևս մի կատարյալ պարգևից և աստվածային
բերանի գովություններից^{189*}:

Արդ, հարսն, ապերախտ չլինելով Աստ-
ծու այնքան անիմանալի երախտիքների և
այնչափ պարգևների հանդեպ և ինքնաբե-
րաբար շնորհակալ լինելով և հրեշտակներին
կանչելով մեզ գոհաբանակից լինելու, արթ-
նացնում է փեսայի սերն այն պարգևների
հանդեպ, որ կամեցավ տալ մեզ, որն ստա-
նալու արժանի չեղավ նախահայրը:

Այս է, որ ասում է. Արթնացրե՛ք սերը,
մինչև կամենա: Այս գոհությունն էր, որ
խնդրեց իննից և նրանց մեջ չգտավ իր կամ-
քի փափազը:

Դուստրերը և թագուհիներն ասում են.

Ո՞վ է սա, որ ելնում է ճերմակած, կոթնած իր
եղբորորդուն (Ը, 5):

Հրեշտակները զարմանում են մեր անարգ
և աղտեղած բնություն մաքրություն և լու-
սավորություն վրա, որ այնպիսի անքննելի
շնորհների հանդիպեց և իր եղբորորդի
Քրիստոսին միացած և, նրան հենված, ել-
նում է այնտեղ, ուր բնակվում են հրեշտակ-
ների բանակները, Քրիստոսին ուղեկից լի-
նելով, որ մեր ձեռքից բռնած՝ տարավ մեզ
անկյալ հրեշտակների տեղը, որ, ինչ դրախ-

տի մեջ չհանդուրժեց տեսնել՝ տեսնի իր փառքի մեջ:

Փեսան հարսին ասում է.

Պիտի արթնացնեմ քեզ խնձորենու Աերքո, այնտեղ ծնեց քեզ մայրս, այնտեղ երկունք քաշեց քեզ ծնողը:

Նախ, պետք է տեսնել խնձորի հատկությունը և ապա հասկանալ նրա ներսում եղած զգաստացնող ակնարկը: Խնձորն առողջ կերակուր է և հիվանդներին շատ ախորժելի և թագավորներին իսկ շատ վայելուչ և զանազան հոտերով անուշացնում է հոտոտողների քիմքը, որը մեր սուրբ Գրիգոր Լուսավորիչն է ասում⁵¹: Արդ, խնձորի է նմանեցնում օրենքների և մարգարեների խոսքերը, որոնք Սուրբ Հոգով տրվեցին մեզ, նախ սինայական լեռան վրա՝ Մովսեսի ձեռքով, և ապա ժամանակ առ ժամանակ բազմացավ մարգարեների միջոցով: Եվ ինչպես որ հավքերը, երկար ժամանակ ձվերի վրա նստելով ջերմությամբ, Արարչի հրամանով կյանք են ստեղծում, նույնպես և մեր բնությունը, երկարուձիգ դրվելով օրենքների և մարգարեական պատգամների տակ, երկնեց Աստ-

ծուց Հոր՝ և Որդուց, որ մեր Փեսան և եղբորորդին անվանվեց, ու ծնվեց բոլորի մորից, որ նրա ծնողն է բնությամբ և մերը՝ շնորհով:

Եվ որովհետև երկունք ասաց, և երկունքը մորն է, սրա համար մայր կոչեց Քրիստոսի և մեր Հորը: Բայց Հայրը երկնեց, ինչպես ասացի, օրինական և մարգարեական պատգամներով և ջրից ու հոգուց ծնեց իր որդիներին և Քրիստոսի եղբայրներին: Որովհետև մեկ է մեր մայր ծնողը՝ ամենակալ Հայր Աստված:

Նաև՝ իր մկրտությամբ և ավագանով ծնվեց Քրիստոս, և Սուրբ Հոգու գալստյամբ Աղամի առջև փակված երկինքը բացեց, և ինքը՝ նույն ծնունդը, մեզ պարգևեց Սուրբ Հոգուց և կոչեց Մարդու Որդի և մեզ կոչեց Աստծո որդիներ: Ինչպես պարզ խոսքերով ասում է երանելի վարդապետ Հովհանն, թե՛ դու մի երկմտիր, թե Աստծո որդի չես լինի, քանզի անկարելի էր Աստծո որդուն լինել մարդու որդի, քան թե մարդուն՝ լինել Աստծո որդի⁵²: Արդ, երբ հարսին երզվեցնում է արթնացնելու փեսայի սերը, պատասխան է տալիս վաղուց ի վեր արթնացած այն սի-

րուն, որ Աղամբը կասեցրեց հանցանքով: Սակայն նա, ըստ անոխակալ գլխության, և ըստ իր արարչական սիրո, մեզ բաց չթողեց իր ձեռքից, այլ դարձյալ գլխութով՝ օրենքներով և մարգարեներով, որպես դաստիարակ, խնամեց, երկնեց և վերստին ծնեց մեզ. «Ոչ թե ապականացու սերմից, -ինչպես ասում է Պետրոս առաքյալը,- այլ անապականացուից՝ Աստծո կենդանի և մշտնջենական խոսքով»^{190*}: Սրա համար է ասում, թե՝

ԻՍՃՈՐԵՆՈՒ տակ կարթնացնեմ քեզ, այնտեղ երկնեց քեզ իմ մայրն, այնտեղ երկնեց, որ ծնեց քեզ:

Այսինքն, թե՝ արթնացած էր նրա սերը մեր մեջ, և ի նպաստ դրա մեզանից միմիայն կամենալն էր պահանջվում:

Արդ, որովհետև հոգու ազդեցությամբ և իմ Հորից նոր ծնվելովդ հասկացար քո հանդեպ ունեցած այնչափ սերը, «Ով իր Որդուն չխնայեց, այլ մեր ամենքի համար նրան մատնեց»^{191*}, ինչպես ասաց, օրինակ, առաքյալը: Արդ՝

Դի՛ր ի՞նչ իբրև կնիք սրտի վրա քո և իբրև մատանի՝ քո բազկի վրա (Ը, 6):

Այսինքն՝ պահպանի՛ր և կնքի՛ր ինձնով սիրտդ և բազուկդ, որպեսզի վայր չընկնես բարձրանալիս, և մի տուր մոռացություն իմ հոգաբարձությունքը քո հանդեպ գործածու երախտիքները, որ քեզ իմ ծնողի որդին դարձրեցի: Արդ, սիրտդ դարձյալ մի՛ տուր սատանայի խորհուրդներին, և ձեռքդ ու բազուկդ մի՛ մեկնիր նրան:

Որովհետև սերը հոգի է իբրև մահը, և Գախաճը՝ դժոխքի պես խիստ:

Այսինքն, ինչպես որ մահը խիստ է՝ ում այցելում է, և նախանձը հզոր՝ դժոխքի պես, այնպես էլ նրանք, որ ինձնից այսպիսի սիրով սիրվեցին, և այդպիսի սիրո փոխարեն իմ սերը թուլացնում և հակառակորդին են սիրում, այսինքն՝ մեղքը, անօրենությունը և աշխարհի սերը, Տիրոջ նախանձն ու բարկության ցասումը մահվան պես հարձակվում են այդպիսի վրա, և ապա անբուժելի ցավեր է ստանում: Քանզի, եթե ամուսիններից սիրված կանայք, իրենց ամուսնու սիրո փոխարեն չնանում են, ապա ոչ միայն ամուսինների սերն են սառեցնում իրենցից, այլև ամեն տեսակի ատելությունից առավել մեծ ատելություն են արժանանում և օտարանում

են իրենց ամուսիններին: Շատերը նաև մահ են կրում իրենց այրերի բարկությունից, ինչպես ասում է նաև այս Սողոմոնը. «Լի է սրտատուժյան նախանձով նրա ամուսինը և բարկության օրը պիտի չհանդուրժի»¹⁹²: Ուրեմն, որքան առավել ևս կհզորանա Աստծուն հարսնացածներին վրա, փեսայի՝ Աստծո և մեզ փրկողի բարկությունը որպես մահ ու դժոխք, որ այնչափ առատ սիրո ղիմաց նրա հանդեպ ատելություն ենք ցուցաբերում, իսկ սատանային, որ չնաբար գողանում և յուրացնում է Քրիստոսի հետ մեր սուրբ ամուսնությունը, ախորժելով սփռում ենք մեր անձը՝ ընկնելով նրա պղծալի խորհուրդների և գործերի ազդեցության տակ: Որի համար դրա փոխարեն իրավամբ գտնում ենք անմահ մահը և անքննելի դժոխքը: Արդ, ո՞ր բերանը կարող է երանի տալ նրան, ով արժանանալով այսպիսի սիրո, գիտի Աստծուց գոհանալ, պահել նույն սերը, և մեղքերով չեղծել այն: Եվ դարձյալ, ո՞ր բերանն է ի գորու ավաղելու այնչափ սիրուց մեղքերով օտարացածներին և անմահ դժոխքի բնակիչներ դարձածներին: Որի համար վրա բերելով՝ ասում է.

Նրա թևերը հրաբոցի թևեր են, և բազում ջրեր պիտի չկարողանան շիջանել սերը, և ոչ էլ գետերը պիտի արգելեն նրան (Ը, 7):

Այս ի հայտ է գալիս նաև մարմնական սիրո մեջ: Քանզի, որտեղ սուրբ սերն է բնակվում՝ ծնողական կամ ամուսնական, և սրանց նման, ոչ գետերը կարող են խափանել, ո՛չ սուրը, ո՛չ հուրը և ո՛չ էլ մահը: Քանի՞սն իրենց զավակների համար հրի, ջրի և սրի ու սովի մատնվեցին: Նույնպես և իշխանների համար: Արդ, որքան որ է Աստծո հանդեպ սերը, նույնքան հարատև է մարդկանցից եղած սերը, որ հաղթող է հրի և ջրի, կապանքների և քերոցների, կնոջ և որդիների, որով հաղթեցին իսկ Քրիստոսի սիրով արբեցած բոլոր սրբերը՝ առաքյալները, մարգարեները, մարտիրոսները, ճգնավորները:

Եթե այրն իր ամբողջ կյանքը տա իր սիրո համար, արհամարհելով պիտի անարգեն նրան:

Սա այսպես պետք է հասկանալ, թե Աստծո սերը նման չէ մարդկանց սիրույն: Մանավանդ ենթակա չէ մեղքերի, այսինքն՝ որքան ավելանում է սերը, այնքան արհամարհվում և անարգվում է մարդկանցից: Բայց Աստծո հանդեպ սերն այնքան գովության և մեծա-

րանքի արժանի է, որով և Դավիթն է պարծենում. «Սիրեցի քեզ, Տեր, զորությո՛ւնս իմ»^{193*}: Եվ թե՛ «Նվաղեց սիրտս և մարմինս, իմ սրտի Աստված, բաժինն իմ Աստված հավիտյան»^{194*}: Այսինքն, թե դու ես իմ բաժինը, և երբ քեզ եմ հիշում, սիրտս նվաղում է: Եվ թե՛ «սիրտս պիտի ցնծա առ Աստված կենդանի»^{195*}: Եվ Աստծո զմայլական սիրով ջերմացած այսպիսի վշտալի բազում այլ խոսքեր կգտնես սրա մոտ, որ չեմ կարող թվել: Նույնպես անսահման են նաև Պողոսինը և մյուս առաքյալներինը: Այսպես նաև Աստծու այնչափ վարդապետներինը և սրբերինը, որոնք, նրա սիրով ջերմացած, հաղթեցին աշխարհը, բոլոր կարիքներն ու կրքերը և փորձությունները:

Քույրը մեր փոքր է և ստիգքներ չունի: Ինչ անենք մեր քրոջը այն օրը, երբ խոսվի նրա Ռամար: Եթե պարիսպ է, շինենք նրա վրա արծաթեղեն աշտարակներ, և եթե դուռ է՝ պատենք նրան եղևնափայտե տախտակով (Ը, 8):

Այս բանն այնպես է հասկացվում, թե հրեշտակների զորությունների կողմից է ասվում հարսի մասին, որ նոր եկեղեցին է՝ հեթանոսներից եղած: Եվ քույր է ասվում՝

նույն Արարչից ստեղծվելու և լինելու համար: Իսկ փոքրիկ՝ մեր անարգ բնության պատճառով է ասում, քանզի հողեղեն ենք, թեև մյուսը՝ հրեղեն, այսինքն՝ հողին, որ մարմնին լծակցվեց, բայց հրեշտակներից ավելի փոքր է, որը մարգարեն ևս վկայում է. «Փոքր-ինչ խոնարհ արարեցիր նրան, քան հրեշտակներին քո, բայց առավելագույն փառքով և պատվով պսակեցիր նրան»^{196*}, և որ հաջորդ խոսքն է: Նաև մարդուն պատվով այնպես փառավորեց, որ սատանան, նախանձ զրսևորելով նրա հանդեպ, կամեցավ հափշտակել, որի համար էլ ընկավ երկնքից և իր փառքից:

Արգ, հրեշտակները տարակուսում են մեր տկար բնության վրա, որ հասու եղավ անհասանելի և աստվածային խորհուրդներին, փառքին, տեսությանը և գիտությանը: Իսկ ստինքներ, ինչպես բազմիցս եմ գրել, կոչում է սրտի շտեմարանը և միտքը:

Եվ տարակուսում են հրեշտակներն՝ այս բնությունն այն անտարր տարրողության համար անտանելի իմանալով, այդ պատճառով ասում է, թե.

Ի՞նչ պիտի անենք մեր քրոջն այն օրը, երբ խոսվի Արա համար:

Այսինքն՝ երբ պատմվի Աստուծո կողմից մարդու փոքր, անստինք և անհանճար բնություն, հողեղեն բնություն առնելը, որովայնի և արգանդի մեջ և կուսական արգանդից մեզ պես ծնվելը, Կույսի՝ կույս մնալը, կաթով սնվելը: Երկայն պիտի լինե՞ր թվել Աստծո բոլոր կարիքները, ամեն տեսակ մարդկային բաներ կրելը, որ հանձն առավ՝ բացի մեղքերից:

Թուք և ապտակ հանձն առնելը, մտրակածե՞ծ (լինելը), զգեստի ծաղրանքը, փշով պսակվելը, աստվածային գլուխը եղեգով ծեծվելը, չարագործների հետ խաչի վրա մերկ գամվելը, լեղիով և քացախով կերակրվելը, Աստծո մեռցվելը, գինվորից տեգով խոցվելը, պատանքվելն ու թաղվելը, և այլն: Այսպիսի պատմություն լսելով՝ ինչպե՞ս կհավատա կա՛մ կընկալի այն փոքր ստեղծվածը և անստինքը:

Այս վերաբերում է նաև Աստվածածնին՝ լսել հրեշտակից, թե՛ հղանալու ես, նաև՝ ընդունելու ու կրելու որովայնում և այլն: Եվ, արդարև իսկ տարակուսելի է, և հրեաներին

[թվում է] գայթակղություն, իսկ հեթանոսներին՝ հիմարություն^{197*}, որի մասին մեծ առաքյալն ասում է, թե տեղի տալիս է միայն Աստծու Հոգուն, որ կատարում է մեծամեծ, անքնին և հրաշակերտ բաներ, որոնց թիվ չկա: Նաև այն պատճառով բոլոր մարդիկ չկարողացան հավատալ, որովհետև Սուրբ Հոգին տեղ չգտավ նրանց մեջ, որ անկարելին կարելի դարձներ: Դրա համար հրեշտակները վրա բերելով ասում են, որ տարակուսում են մեր փոքր և անստինք բնության վրա:

Եթե պարիսպ է, շինենք Արա վրա արծաթեղեն աշտարակներ, և եթե դուռ է, շինենք Արա համար եղևնափայտե տախտակներ (Ը, 9):

Արդ, գրքիս առաջաբանում ասացի, թե մարգարեականները չեն համապատասխանում, որովհետև շատ լեզուներից են փոփոխություններ կրել. եբրայերենից՝ հելլեներեն, հելլեներենից՝ հունարեն և ասորերեն և ապա՝ հայերեն:

Բայց միտքն այս է, թե մարդ չէր և բոլորի արարչից ստեղծված կենդանի, այլ պարիսպ էր, սակայն հավելեցինք և հավելված-

ները արծաթով իսկ խառնեցինք՝ մարտկոց չինելով: Եվ դուռ էր, նրա վրա հարմարեցրինք մայրի (ծառի) տախտակներ և հավելեցինք նրա փոքրություն վրա, որ մեծությունը հարմար լիներ պարիսպը, կամ՝ դռնով ներս մտնելը: Արդ, հարսն այս լսելով, համարձակվում և պատասխան է տալիս տարակուսող հրեշտակներին, ինչպես որ գրված է.

Հարսն համարձակվում է.

Ես՝ պարիսպ, և ստիգքներն իմ՝ աշտարակ (Ը, 10):

Այսինքն՝ շատ մի անհանգստացեք իմ տկար բնության համար, քանզի զորությունը ամենակարողի ես՝ փոքրս, պարսպից ավելի մեծ եմ և ամուր, և անստինքս՝ աշտարակի նման ստինքներ ունեմ: Քանզի նա, ով ոչնչից ստեղծեց երկինքն ու երկիրը, մեր և ձեր բնությունը, ինձ մեծացրեց, ստինքներն իմ ձերիններից ավելի խոշորացրեց, քանզի, այն, ինչ դուք չեք կարող լսել և տանել և կրել, իմ տկար բնությունը, ձերինից առավել կարող լինելով, լսեց, տարավ և հավատաց: Որի համար վրա է բերում.

Ես նրա աչքում խաղաղություն գտածի պես եղա:

Ես, որ կորսված էի դրամի և ոչխարի պես, ինչպես գրված է Ավետարանում^{193*}՝ փեսայիս ասված առակում և մեր ապստամբելու պատճառով պատերազմի ու խռովության մեջ էի երկնայինների և երկրավորների հետ, այժմ փեսայի խաչով նրա աչքում եղա հիրավի խաղաղություն և մոլորությունից գտնված:

Դարձյալ իր առակների մեջ աստվածային Սողոմոնը ավելացնելով ասում է.

Սողոմոնը Բեղմավոնի մեջ այգի ուներ (Ը, 11):

Բեղմավոնը Հրեաստանի մեջ պարարտ երկիր է, որով առակում է աշխարհը և մարդուն նրա մեջ: Իսկ Սողոմոնը Քրիստոսն է, որ եղավ մեր խաղաղությունը, որովհետև խաղաղություն է թարգմանվում Սողոմոն անունը, իսկ այգին՝ հավատացյալներ, ինչպես որ Դավիթ մարգարեն, Եսային և ինքը՝ Տերը Ավետարանում այգի է կոչում, որը և այգին տվեց իր պահապաններին. Ամեն մարդ, – ասում է, – թող իր պտուղից հազար արծաթ բերի:

Սա շատ մեկնություն կարիք չունի: Բայց երանի նրանց, ովքեր պտուղը տալիս են երկնավոր Սողոմոնին կամեցած ժամի՝ լինեն դրանք անձինք, թե նրանց հավատացյալ ժողովուրդը: Որ եթե շատ կամ քիչ ունեն շնորհներ, կամ ժողովուրդներ, կամ ինչք, հաշիվ պիտի տան երկնքի Սողոմոն թագավորին՝ հոգևոր և մարմնավոր առաջնորդները, եպիսկոպոսները և քահանաները, թագավորները և իշխանները և մյուս պաշտոնյաները՝ հոգևոր լինեն, թե՛ մարմնավոր: Նույնպես աշխարհականը և զինվորը պարտավոր է հաշիվ տալ կնոջը, զավակներին և ծառաներին: Քանզի, եթե միայն իր կարիքներն է հոգում՝ ծառայություն, գուժ, հպատակություն, հարկ, տուրք և նման բաներ, և նրանց հոգևոր ու մարմնական կարիքների մասին հոգ չի տանում փութաջան ու սրտացավ, պիտի պատժվի Քրիստոսից: Եթե մեղքի ինչ-որ արատ տեսնի մեկի մեջ, պարտավոր է սիրով և արցունքներով բժշկել և վշտակցությամբ սպեղանի դնել վրան, ինչպես իր անձին և ոչ թե՛ մտքում գոռոզաբար և մեծամտացած, իր ունեցած իշխանությունամբ փքված՝ հոգևոր լինի թե մարմնավոր,

իր տան համար լինի թե ծառաների: Նա, որ բուրդն է առնում, կաթը կթում, պարարտներին մորթում և արոտների առատ տեղերը չի տանում, ինչպես մեղադրում է Սողոմոնը՝ մարգարեների միջոցով և ընկերոջը, ծառաներին և եղբորը հոգ չի տանում իր անձի պես, ուսուցանելով սրբություն, ողորմած բարքեր և խոնարհություն, աղոթքների մեջ՝ չծուլանալ, պահքի մեջ՝ չթուլանալ, Աստծո տունը գնալ և ուսուցանել, տեսության գնալ հիվանդներին, ինչպես նաև՝ բանտարկյալներին, հյուրերին ընդառաջ գնալ, հյուրասիրել և ճամփել, եկեղեցիները պատվել ընծաներով, պատարագներով և սպասներով, տերունական տոները մեծարել զգաստ փառաբանությամբ, մոմավառություններ և նվերներով, նույնպես և՛ սրբերի հիշատակը, քահանաներին պատվել իբրև Աստծու պաշտոնյաների և Քրիստոսի ժողովրդի առաջնորդների, և թագավորներին ու տերերին միայն երեսանց չծառայել, այլ՝ խղճատորեն, նաև քրիստոնեություն մյուս կարգերը, որ այժմ այստեղ չենք կարող թվել, բայց Աստված, որ Սողոմոն կոչվեց, պահանջում է հոգևոր և մարմնավոր առաջնորդներից, որ

կատարեն յուրաքանչյուրն ըստ պատշաճի
և ուսուցանեն հեզաբար: Քանզի նրա հա-
մար են կառավարում մեզ, որպեսզի հոգևոր
առաջնորդները պարտավոր լինեն մեզ հետ
պատերազմ մղել ընդդեմ սատանայի, և
մարմնավորները պարտավոր են արյուն իսկ
հեղել մեզ համար և պատերազմ տալ թշնա-
միների դեմ, և հարստությամբ կամ նույ-
նիսկ մահվամբ ազատել թշնամիներից: Եվ
արդարությամբ դատ անել՝ հարատև անա-
չառությամբ անդադար, անհանգիստ, որ-
պես Աստուծու սպասավորներ, և ամեն մար-
դու տուն իրենը համարել: Ինչպես գրում էր
Տրդատ Մեծ թագավորն իր աշխարհին, քա-
նի դեռ կռապաշտության մեջ էր, թե. «Ինչ-
պես տանուտերը հոգում է իր տան մասին,
նույնպես և մենք ենք հոգում Հայոց աշ-
խարհի մասին»⁵³: Արդ, եթե կռապաշտներն
այդպես հոգ էին տանում աշխարհաշինութ-
յան և մարդկանց հոգիների փրկության մա-
սին, որի համար էլ սրբերին չարչարում էին՝
քրիստոնեությունից կուռքերի պաշտա-
մունքին դառնալու համար, ասելով, թե՝
մեզնից աստվածներն են պահանջում, և ըստ
մեզ իրավացի չեն նրանց հարկերն ու ծա-

ռայությունները, եթե այս մասին չհոգանք:
Ինչպես Տրդատը սուրբ Գրիգորին էր ա-
սում. «Աստվածների ահից նրա բազում և
հավատարիմ ծառայությունները չհիշե-
ցի»⁵⁴: Նույնպես և պարսից թագավորն է
Վարդանանց գրում⁵⁵, և ուրիշ շատերը, որ
չէին ակնկալում դժոխք, չարչարանքներ և
դատաստան:

Արդ մեզ, որ գիտենք և հավատում ենք
Քրիստոսին և սպասում ենք նրա գալստ-
յանը, ստուգապես գիտենք, որ այս ամենի
համար պարտավոր ենք հաշիվ տալու թե՛
մարմնի, թե՛ մտածածների և թե՛ գործերի
համար, և որքան՞ զգուշություն է պետք,
որպեսզի ահեղ դատաստանի օրը ամոթով
չմնանք երկնային արքա Սողոմոնի առջև
այգու պտուղը պահանջելիս: Դրա համար
բյուր անգամ երանի նրանց, ովքեր պտուղը
լիապես են տալիս, և բյուրերից բյուր ան-
գամ ավաղելի են նրանք, ովքեր չեն կա-
րողանում հատուցել պտուղը: Արդ, Սողո-
մոնը առակով սկսելով է նախ ճառում, նա-
խահոր դրախտից արտաքսվելը և փառքից
ընկնելը, և դարձյալ Քրիստոսի գալստյամբ
փառք ստանալը, և հեթանոսների՝ նրան

Հարսնանալը, և պես-պես, զանազան շնորհների հանդիպելը, որ կարգեցինք և դրեցինք այս գրքում: Աստված փակեց այգին Հարսի անունից և իր մյուս անգամ գալուստը և արդարների պտղի պահանջումը, որ առաջ Հարս կոչեց՝ ցույց տալով առավելագույն սերը մարդկանց նկատմամբ, թե ոչ միայն Հարսնացած ենք և միավորված Քրիստոս փեսային, այլև նրա կերակուրն ենք՝ որպես այգում վայելչական խաղող՝ դրված թագավոր Քրիստոսի սկուտեղի վրա:

Տվեք այգին իր պահապաններին:

Պահապանները սրանք են, որ ասացի: Դարձյալ և յուրաքանչյուր անձ իր պահապանն է: Եվ յուրաքանչյուր այր բերում է հազար արծաթ իր պտղի համար: Արդ, այգի ասաց և պտուղն՝ արծաթ, ըստ այդմ ինչպե՞ս է հարմարվում, եթե հայտնի չէ, որ առակաբանում է, ինչպիսին է Երգ Երգոցի ամբողջ գիրքն իսկ:

Արդ, հազարը արդարների կատարյալ և բազմապատիկ բերքին է ասում: Եվ արծաթ, քանզի ինչպես արծաթն է ընտրվում և փորձվում բովում, նույնպես և սրբերը, իբրև

արծաթ փորձված են երկրից և յոթնապատիկ սրբված ու մաքրված հողից:

Եվ այգին իմ առջև է իմ (Ը, 12):

Ոչ որպես՝ մինչ երկրի վրա էր մարդը, և երկնքով, ինչպես վարագույրով միջնորդված էր, այլ իմն է և ինձ, և մշտապես իմ առջև: Այս նաև առաքյալն է վկայում՝ ասելով. «Այժմ տեսնում ենք իբրև օրինակներ հայելում, իսկ այնժամ՝ դեմ հանդիման»^{199*}: Եվ սրբերի ասած այսպիսի բազում այլ [մտքեր]:

Հազարը՝ Սողոմոնին և երկու հարյուրը՝ Արանց, որ պահում են պտուղը Արա:

Տե՛ս այստեղ Աստծո անչափ սերն առ մարդիկ, որի մասին և Աստվածաբանն է ասում, թե ոչնչով Աստված այնքան չի զվարճանում, որքան մարդկանց ուղղությամբ և փրկությամբ⁵⁶: Այսինքն թե՛ ոչ մի բանով այնպես չի զվարճանում Աստված, որչափ արդար և սուրբ մարդով, որի համար երկինքն ու երկիրն արարեց և ամենայն ինչ, որ երկրի վրա է, որի համար մարդ իսկ եղավ, և մյուս բոլոր բաները:

Արդ, Սողոմոնը հազարը իրեն է ասում,

Թե ինձ ավելի շատ պարգևներ և խնդություն է գտնել մարդուն ուղիղ և պտղատու, քան իրեն իսկ մարդուն, այնպես, ինչպես հազարի և երկու հարյուրի միջև է՝ ինձ հազար և նրան՝ երկու հարյուր, որ երկու բնությունն ունեմ ի մի միավորված՝ հոգի և մարմին: Եվ կատարյալներն ինձ, որ կատարյալ եմ աստվածությամբս և մարդկությամբս՝ կատարյալ մարդ, նույնպես և կատարյալ Աստված՝ մեզ կատարյալի փոխելու համար: Քանզի տասը, հարյուրը և հազարը կատարյալ թվեր են:

Քանզի մեկը տասով է ավարտվում, բայց ոչ առաջ, սակայն եթե երկրորդի, նույնպես և մի տասը, տասը տասը լինելով, հարյուր, բայց չի ավելանում, նույնպես և հազարը՝ տասն հարյուրով: Եվ սրանից հետո պահապաններին ասաց՝ վարձ տալ, ոչ միայն որ իրենց են պահում, այլ որ առաջնորդություններ են այդու պահապաններ և ճշմարիտ մշակներ, ովքեր թե՛ հոգևոր և թե՛ մարմնավոր վարձ են ստանում Տեր Հիսուս Քրիստոսից: Հարսն ասում է.

Որ Աստած ես պարտեզի մեջ, ուրիշները լսում եմ քեզ, ձայնը քո լսելի արա և իմձ (Ը, 13):

Արդ, որ փեսան այգի անվանեց հարսին, և ուրիշները նախապես՝ պարտեզ, նույնը երկրորդելով հարսն ինքը փեսային է պարտեզ կոչում, որ այդու պտուղն է պահանջում: Այս ասելով, թե դու ես զորությունն իմ և քո ճգնությունը և զորացնելով եմ պտուղ տալիս, բայց միայն թե ձայնդ լսելի արա ինձ: Այն, որ ասաց Ավետարանով իսկ. «Եկե՛ք ինձ մոտ բոլոր հոգնածներդ և բեռնավորվածներդ, և ես կհանգչեցնեմ ձեզ»^{200*}: Արդ, հարսն աղաչում է, թե միայն ձայնդ լսելի արա ինձ, որպեսզի անշեղորեն հետևեմ հովվիդ, որ ասացիր, թե՛ «Իմ ոչխարները լսում են իմ ձայնը և իմ ետևից են գալիս և օտարի ետևից չեն գնում, այլ փախչում են նրանից, որովհետև չեն ճանաչում նրա ձայնը»^{201*}: Արդ, այն է աղաչում, որ ցանկալի և փափագելի ձայնին անկարոտ պահի, որին, անշեղորեն հետևելով, կտա հազար արծաթը և այդու պտուղները և պարտեզի բերքը:

Ուրիշները լսում են քեզ:

Որպես թե ամենքը քեզ են սպասում, և ամենքի ակնկալիքը դու ես՝ երկնայինների և երկրայինների, և նրանցում եղած արարածների: Այս է՝ ուրիշները լսում են քեզ: Քո ձայնը ինձ ևս լսելի արա, ինչպես որ հրեշտակներին, որոնք ավելի մոտ են, քան մենք, և քո լույսով են լուսավորվում, ինչպես մենք՝ զգալի և իմանալի արեգակով, և նրանք՝ քեզնով:

Փախիր, եղբորորդի իմ, և անանվիր այծյամներից կամ եղնիկների ձագերից խնկարեք լեռների վրա (Ը, 14):

Տես հարսի պաղատանքների հավելումը, որ սաղմոսերգող մարգարեի նման փութացնում է օգնություն՝ ասելով. «Փութա օգնել ինձ և մի հապաղիր»^{202*} և դարձյալ. «Որովհետև նվաղեց սիրտն իմ, փութով լսիր ինձ»^{203*} և «Փութա օգնել ինձ, Տեր, փրկությամբ իմ»^{204*} և այլ այսպիսիք: Փախիր ասելով գուշակում են. նմանվիր այծյամներին կամ եղնիկների ձագերին, ըստ Դավթի խնդրանքի, աղաչում է արագահաս լինել, որպես այծյամն և եղնիկը, որ սրահայաց են

և արագահաս: Նաև ապագա գալուստն է ակնարկում՝ պահանջելով պտուղները, որ ամենքից խնդրելու է փեսայի մյուս անգամ գալստյանը, երբ գիշերվա մեջ ձայն հնչի. «Ահա փեսան է գալիս, եկեք նրան ընդառաջ»^{205*}: Որ տեսնում է այծյամի ու եղնիկի յուրաքանչյուր խորհուրդը և գործը ազոտ առակի նմանությունը, որ լեռների բարձունքներում է բնակվում. այստեղ՝ մարդկանց մեջ լեռնացած առաքինությունը և անուշահոտ վարքով, ինչպես խնկարեք լեռներով, և այնտեղ՝ սրբի մեջ և փեսայի հետ վեր սլանալով ի լյառն երկնային, որի մասին ասում է նաև Աստվածաբանը⁵⁷, նա և ներս է խոստում արագընթաց՝ նմանվելով առակողի խոսքին, որ ասում է՝ Փախիր եղբորորդի իմ:

Քանզի արագընթացը և փախիրը միևնույն իմաստն ունեն: Արդ, ասելով, թե նա ներս է մտնում արագընթաց՝ վրա է բերում՝ նրա հետ ներս է մտնում կեսը, որ փեսային հարսնացածներն են, և մյուսներն արգելանոցից դուրս են մնում՝ մտնելու ժամանակը պատրաստվելու վրա ծախսելով: Եվ շատերը հետո լալիս են՝ կրելով այնուհետև ծուլություն տուգանքը, երբ հնարավոր չի լինում

առագաստը մտնել, և բազմիցս ավաղելով աղոթում են, որ չարաչար փակվեցին (դռները)՝ այլ օրինակով նմանեցնելով հարսանիքից ուշացածներին^{206*}, ուր բարի հայրն ուրախացնում է բարի փեսային, նրա կնոջ՝ հարսի համար, կամ եզների լծի համար, որ դժվարությամբ ստացավ՝ փոքրագույնների պատճառով մեծը կորցնելով: Արդ, այս է ասում Աստվածաբանը⁵⁸, որը և Սողոմոնն է կանխագրում, թե փեսայի փախչելու կամ երկինք շտապելու ժամանակ, երբ գալիս է մեղավորների դատավորը և արդարներին կանչողը, ովքեր արժանացել են իր հետ ընթանալու, նրանց վերցրած՝ արագորեն ներս է մտնում որպես փախստական և փակում է դռները մեղավորների առջև:

Որովհետև ճանապարհը նախապատրաստելու ժամանակը վատնեցին անօգուտ բաների վրա՝ հոգալով աշխարհի պետքերը՝ եզների լուծ, կին, որդիներ և անդաստաններ և աշխարհի մյուս հոգսերը: Եվ այնժամ ընդունայն լացով լացում են՝ ի վերջո հասկանալով և գիտակցելով իրենց վնասը, երբ այլևս վերականգնելի չէ: Որի վրա ավելացնելով՝ ասում է, քանզի ոչ ոք այն-

տեղ չի մտնի արհամարհողներից, ծուլերից և աղտեղվածներից⁵⁹, և ոչ թե՛ փեսայի պես զարդարված, թեկուզ այստեղից ներս սողոսկի՝ սնոտի հույսերով խաբված: Այս է ասում, որ թեև այստեղ մեզ խաբում ենք սնոտի հույսով՝ մեկ այս ասելով, մեկ՝ մյուսը, թե քրիստոնյաների համար չկա գեհեն, և թե՛ ողորմած է Աստված, որ հանուն մեզ մարդ եղավ և չարչարվեց մեզ համար և մեռավ, արդ, նա ինչպե՞ս կմոռանա գութը և կուղարկի մեզ հավիտենական հրի մեջ, կամ թե՛ կզրկի առագաստից:

Այս է սնոտի հույսերով խաբվելը, ուստի վրա բերելով՝ ասում է, որ երբ ներսում լինենք, այնժամ Փեսան կիմանա, թե ինչ են վարդապետում, և զնացած հոգիներից ովքեր մոտ լինեն նրան՝ նրա հետ կլինեն⁶⁰, ինչպես ինձ է թվում, վարդապետելով կատարելագույններն ու մաքրությունները:

Արդ, ճանաչիր Աստվածաբանի ասածը, թե այն ամենը, ինչ խոսեցին և ուսուցանեցին մեզ Գիրքը, օրենքը, մարգարեները և Ավետարանը, որ Քրիստոսն է, առաքյալներն ու վարդապետները՝ բացահայտ և այլաբանական եղանակով, անկատար և թյուր են

անդենական գիտելիքի համեմատություններ, որ Փեսան վարդապետելով ուսուցանում է կատարելագույնը և մաքրագույնը այնտեղ կատարելացած փառքով, ինչպես հրեշտակներին և մաքրվածներին, իբրև կատարյալ մաքրություն (աչքի ընկնող) սերովբեների ու քերովբեների:

Արդ, նաև այն, որ Տերն ասաց՝ «չխմել որթատունկի բերքից մինչև այն օրը, երբ ձեզ հետ կխմեմ նորը իմ Հոր արքայության մեջ»^{207*} կատարյալ աստվածաբանություն է, ասում է սույն Գրիգոր Աստվածաբանը մեկ այլ տեղում, թե՛ նրանը ուսուցանելն է, մերը՝ սովորելը⁶¹: Թեպետ և բարձրագույն և մեծ խորհուրդ ակնարկեց Սողոմոնը Երգ Երգոցով՝ բովանդակ Քրիստոսի գալուստը և չարչարանքներով հանդերձ մահը, հարուժյունը և մյուս անգամ գալուստը, հեթանոսների հարսնությունը Քրիստոս փեսային, եկեղեցու լուսավորությունը և Հոգու շնորհների առատությունը մարգարեություններ, առաքելություններ, վարդապետություններ, մարտիրոսություններ, կուսություններ, քահանայություններ, ճգնավորական սխրանքով և ապաշխարողական վարքով և (հատկապես)

Քրիստոսի պատարագմամբ, որպես մեղք գործածների և մեռյալների հույս: Այն բաները, որ սովորելու են սրբերն իրենց նորոգություն և կատարելություն ժամանակ Փեսայի սիրուց, ինչն ասվեց Սողոմոնի կողմից, չափազանց անհնար են, նաև՝ այն բոլորը, որ պատմվեցին հներից և նորերից Աստծու այս բոլոր հրաշքների մասին, որ եղել և լինելու են, որքան բավարար համարեց Տեր Հիսուս ասել և ուսուցանել:

Ավարտենք Երգ Երգոցի մեկնության խոսքերը և ասենք այն, ինչ Աստվածաբանն ասաց հիշելու⁶². մենք ևս հաղորդվեցինք սրանց, երբ մեկնեցինք սրանք, և դուք, որ ուսանում եք նույն իր՝ Հիսուս Քրիստոսի մեր Տերոջ մեջ, որին փառք հավիտյանս և հավիտենից: Դարձյալ, հավիտյան փառք մեր շնորհատու Տեր Հիսուս Քրիստոսին Հոր և Սուրբ Հոգու հետ հավիտյանս հավիտենից. Ամեն:



ՀԻՇԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Եւ՝ Անձնացայ եպիսկոպոս Տեր Խոսրոս - վի որպէի Գործոր վաճանաս Նարեկից, Հայոց Թվականոթնայան ՆԻՉ 426 (977) Թվականին Աթոսաւ ՀՀ Համալսարան Թատաւոթի որպի, Ե վրիսորոսասակ սոթոլաստատր Գործուն ար - վայից Հրաման սոթոլաստատր - Սողոմոնի ս - Հարկո - խոսվերը Ե Բայաւայրելո - նրանց խորվոմ թատկվածները, որոնվ ունկնդրելն Հասկելի է: Քանկի վեասայի Ե Հարսի մասին է սոտոմ, որ վերաթերոմ է սորնեվներին Ե կարմրած շրթոնեներին, այրերի Գեղեց - կոթնանն ո - ցանկակի աշկերին, վրոջը, Եղ - Բորորպոն Ե օրիորպներին, Ե այսպիսի քոթակի ո - սրորի ցանկաւարոյց շար այլթա - ների, որ պարպիտ միավորոթնայան կայան է, որ մարտիկ, Լուրով անմասնակի մորով, այլ Ե այլ Բան էին Հասկանոմ: Այս Թատաւոթը, մաս - Հոգովելով այս մասին, սոտոլին Ե Երկրորդ անգամ Հրաման Հղեց ինչ, որին ՀՀամարչակ - վեցի Հակագրովել, վանկի Հասկացա, որ սոթ - վաստահաստ է Հրամանը, Ե մեկնեցի «Երգ Երգոցը» նրա Հրամանով:

Թեպէտի կարողոթնայան վեր Գործ

սորանչնեցի՝ վանեւայով անՀնայանեթ Գորնովել - Լոց, որպէսկի արվայական Հրամանը անկարար Հանա, սակայն սո ինչ Համար մեթ Հանագո - նոթնայան էր Ե մեկնեվի կողմից շար Բամթա - սանեների արթանի, նաս՝ սոթոլաստային պա - րիթն անկակակելի էր: Ասկայն Երկո - կողմից էլ՝ սոթոլաստայինից Ե մարտկայինից, աշկի սոտաջ ունեւայով Թատաւոթի Հրամանը՝ կարծոմ էմ արպարանակի է, որովՀեթ Ե իր իսկ՝ Քրիստոսի Հրամանն է՝ Հնայանեթ Լինել Թա - Գաւորներին՝ ինչպէս Աստոն: Եվ ով որ Հնայանեթով, Աստոլաստ իրենը կՀամարի նրան, իսկ ով անՀնայանեթ Գորնովի, նրան Ե իրենը կՀամարի: Ուստի, սոտաշոմ էմ Երկրոցաստր - ներից, որ Հեղագրեվ ինչ՝ իմ արթանեվներից վեր Գործ ճեոնարկելո - Համար: Քանկի, [նկարի ունեւայով] ինդրողի պահանջի Հարկագրականոթնայանը, միայն Հարկայա - Հանջ ինդրողի Համայայն Հկարողացա վերջա - ցած Համարել, այլ՝ Հոսայով սո Հոգին Սոթ, մասթեցի, Ե շի անպետի սոտաշոմեվ - ներս: Ակեցի սողթեվ Ե արցոնեվով ինդրել, որ նայելով իմ անարթանոթնայանը Ե Հայոցի արպետանեթ փոթագին, Բերանս Բա - ցեց սակո - Ե Համարոթելո - այս՝ ի փոս - Քրիստոսի. Ամեն:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԱՋԱԲԱՆԻ

- 1 «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք», Վենետիկ, 1840, էջ 271: Այսուհետև այս հրատարակությունից հղում կատարելիս տեքստում, փակագծերի մեջ նշվելու է միայն էջը:
- 2 Տե՛ս, օրինակ, Պ. Խաչատրյան, «Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը», Գիրք սոսաշին, Ա. Էջմիածին, 1996, էջ 137-150:
- 3 Մանրամասն տե՛ս Հ. Ղ. Միրզոյան, «Գրիգոր Նարեկացու գրական ժառանգության հարցի շուրջ», «Բանբեր Երևանի համալսարանի», 2004, թիվ 1, էջ 67-85:
- 4 Պ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 81:
- 5 Տե՛ս Գրիգոր Նարեկացի, «Մեկնութիւն Երգ երգոց Սողոմոնի», Բելրոյթ, 1963 (թարգմանիչը՝ անհայտ):
- 6 Տե՛ս Commentario sui Cantico dei cantici di Gregorio di Narek, introduzione, traduzione italiana e annotazioni di P. Winenzo Mistrih, Cario, 1968-1969.
- 7 Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Մեկնութիւն Երգ Երգոցի Սողոմոնի, թարգմանիչ՝ Վարդան Ֆերեշեթյան, «Աստղիկ» (Գիրք թարգմանչաց), թիվ 4, 1991, էջ 3-31:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ

*Թարգմանությունն իրականացված է ըստ հետևյալի.
«Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք», Վենետիկ, 1840, էջ 271-367:*

- 1 Ակնարկում է Ս. Գրիգոր Նյուսացու (335-394) «Երգ Երգոց»-ի մեկնության ոչ լիակատար լինելը (PG, t., 44, 755-1120). հունարեն բնագիրն ընդգրկում է Ա. 1-Ջ 8-ի բացատրությունը, որը բաղկացած է 15 ճառերից, իսկ հայերեն թարգմանությունը ներկայանում է 14 ճառերով. այն ընդգրկում է Ա. 1-Ե 16-ի բացատրությունը. տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ) ձեռ. 1013, թ. 41ա-120բ:
- 2 Գրեթե բառացիորեն քաղված է Ս. Հովհան Ոսկեբերանի՝ Մատթեոսի Ավետարանի մեկնությունից. տե՛ս «Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի յԱւետարանագիրն Մատթեոս. Գիրք կրկին», Վենետիկ, 1826, էջ 1:
- 3 Իմաստային վերապատումն է «Սուրբ Գրիգորի վարդապետության» համապատասխան մասի. տե՛ս «Ազաթանգեղեայ Պատմութիւն հայոց», տպ. 1909, էջ 144 (§ 276, ԻԳ): Այսուհետև կնշվեն այս հրատարակության տվյալները:
- 4 Մովսեսի «աստվածաբանակ իմանալի լեռը» բարձրանալու վերաբերյալ այս միտքը խորհրդաբանորեն ադրապարկում է Ս. Գրիգոր Նյուսացու «Մովսեսի կյանքը կամ կատարյալ կյանք» երկի համապատասխան պատկերին (PG, t., 44, 297-430): Արդյո՞ք Նարեկացին օգտագործել է Նյուսացու այս երկը՝ դժվար է ասել: Դժվար է ասել և այն, թե արդյո՞ք հայերեն թարգմանու-

- թյամբ այսօր անհայտ այդ երկը երբևէ թարգմանվել կամ կենցաղավարել է հայերեն ձեռագրերում:
- 5 «Ժողովողի» գրքից բերված տեղիները չեն համապատասխանում այսօր հայտնի ընկալյալ թարգմանությանը: Ինչպես հայտնի է հայ միջնադարում կենցաղավարել է այդ գրքի մեկ այլ թարգմանություն (տե՛ս Ն. Ծովակյան [Պողարեան], Ժողովողի հին հայ թարգմանությունները, «Սիոն», 1936, էջ 45-48), որը և, հավանաբար, օգտագործել է Ս. Գրիգոր Նարեկացին:
 - 6 Ակնարկում է Ս. Գրիգոր Նազիանզացու (Աստվածաբան) «Խօսք ամենասուրբ Պասքայ Աստուծոյ մերոյ» Բճառի համապատասխան միտքը. տե՛ս ՄՄ, ձեռ. 1500, թ. 737բ-741ա:
 - 7 Քաղված է Ս. Հովհան Ոսկեբերանի Արարածոց մեկնությունից. PG, t., 53, 21-54, t., 54, 385-580, 581-630. Վերջինս, իր ութ ճառերով, հայտնի է նաև հայերեն թարգմանությամբ. «Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի ճառք. Վենետիկ, 1861, էջ 56-109, նաև՝ «Էջմիածին», 1997, Զ-Է, էջ 150-169:
 - 8 Տե՛ս Ս. Գրիգոր Նիսացի, «Մեկնութիւն Երգ.», Ծառ Բ, ՄՄ ձեռ. 1013, թ. 49բ-55ա:
 - 9 Տե՛ս Ս. Գրիգոր Նիսացի, «Մեկնութիւն Երգ.», Ծառ Գ, ՄՄ, ձեռ. 1013, թ. 55ա-66բ:
 - 10 Գրիգոր Նարեկացին ամենայն հավանականությամբ աչքի առջև է ունեցել տասրակի բնութագիրը, որ առկա է Փիլոն Եբրայեցու «Այնոցիկ որ ի լինելութեանն խնդրոց եւ լուծմանց» (= Մեկնութիւն Ծննդոց, ///, Գ) աշխատության (տե՛ս «Փիլոնի Եբրայեցույ մնացորդք ի հայս», աշխատ. հ. Մ. Ավգերյանի, Վենետիկ, 1826, էջ 172), ինչպես նաև՝ «Բարոյախոսի» մեջ. Physiologus. The Greek and Armenian Versions with a Study of Translotion Technique by G. Muradyan, Peeters, 2005, p. 136 (32.2, 32.3):
 - 11 Միհնչեռ ըստ Հայաստվորքի, Տրայանոսը փորձում է

- այրել Ս. Իգնատիոսին († 117): Հաջողության չհասնելով «յայնժամ ետ վճիռ, եթէ զԻգնատիոս, որ ասաց ինքեան ունել զԽաչեալմ՝ հրամայեմք կապել եւ զինտորօք տանել Հռովմ, զի կերակուր լիցի գազանաց ի գրօսանս խաղուն». Դեկտ. Ի, Քաղոց ԺԲ. տե՛ս Յայսմատորք, Կ. Պոլիս, 1834, էջ 299:
- 12 Տե՛ս Ս. Գրիգոր Աստուածաբան, «Յաղագս հարուածոյ կրկտիմ», ՄՄ, ձեռ. 1500, թ. 748բ-752ա:
 - 13 Տե՛ս Ս. Գրիգորի վարդապետությունը, Ագաթանգեղոս, էջ 339 (§ 654, ԶԷ):
 - 14 Տե՛ս Ագաթանգեղոս, Պատմություն, էջ 63 (և 105, Ը):
 - 15 Տե՛ս Ս. Գրիգոր Աստուածաբան, «Յաղագս աղքատսիրութեան», ՄՄ, ձեռ. 1500, թ. 752ա-758ա:
 - 16 Տե՛ս Ս. Գրիգոր Նիսացի, «Մեկնութիւն Երգ.», Ծառ Ե, ՄՄ ձեռ. 1013, թ. 69ա-76ա:
 - 17 Նկատի ունի աստվածամաչողությունը, որ ըստ Նյուսացու, վախճան չունի: Աստվածամաչողության ընթացքը շարունակվում է նաև անդենակամում: Նարեկացին հետևում է Նյուսացու այս վարդապետությանը:
 - 18 Ս. Գրիգորի վարդապետությունը. տե՛ս Ագաթանգեղոս, էջ 335 (§ 650, ԶԶ):
 - 19 «Ս. Գրիգորի վարդապետությունը», տե՛ս Ագաթանգեղոս, էջ 150, (§ 287, ԻԵ):
 - 20 Ս. Գրիգոր Նիսացի, «Մեկնութիւն Երգ.», Ծառ Է, ՄՄ, ձեռ. 1013, թ. 81բ-90բ:
 - 21 Ս. Գրիգոր Աստուածաբան, «Ի մկրտութիւն Քրիստոսի», ՄՄ, ձեռ. 1500, թ. 729բ-737ա:
 - 22 «Որովայն=Γασտր, բերան =Στομα, ոսկեբերան =χρυσόστομος» զուգորդումով ակնարկում է այս երկու հայրերի՝ Ս. Գրիգոր Լուսավորչի և Ս. Հովհան Ոսկեբերանի հռետորական կարողությունները:
 - 23 Համեմատելի է Ս. Հովհան Ոսկեբերանի Եսայու մարգարեության մեկնության համապատասխան տեղիի հետ («Այսինքն՝ չէլէ կարօտ օգնականութեան, չկոչեցի

- գոք զօտար ինձ ի թիկունս»): տե՛ս «Երանելուն Յովհաննու Ոսկեբերանի Մեկնություն Եսայեայ մարգարէի», Վեճետիկ, 1880, էջ 462:
- 24 Տե՛ս Ա. Հովհանն Ոսկեբերան, «Վաղարամազիրն Մատթեոս», գիրք Գ, թերի, էջ 105 (Ճառ ԶԲ):
- 25 Տե՛ս Ա. Գրիգոր Աստուածաբան, «Վաղարամազիրն եպիսկոպոս Աղէքսանդրացի», ՄՄ, ձեռ. 1500, թ. 775ա-780ա:
- 26 Ա. Գրիգոր Լուսավորչի չարչարանքների նկարագրությունը տե՛ս Ազգաթանգեղոս, «Պատմություն», էջ 39-71 (§ 69-122, Զ-ԺԱ):
- 27 Տե՛ս Գրիգոր Աստուածաբան, «Խաւք ի նոր Կիրակէն ի Կեսարիայ կապադովկացոց ի կատարման յիշատակի սրբոյ վկային Մամասայ...», ՄՄ ձեռ. 1500, թ. 741-742բ:
- 28 Նկատի ունի Ա. Հովհանն Ոսկեբերանին (347-407) և Ա. Գրիգոր Աստվածաբանին (328-389):
- 29 Կինամոնի մոզական հատկությունների այսօրինակ բացատրությունը, որ, ինչպէս երևում է, գալիս էր վաղնջական ժամանակներից, տեղ է գտել նաև Մխիթար Գոշի Երեմիայի մարգարէության մեկնաբանության մեջ: Բացատրելով Երեմիա Զ 20 տեղին՝ նա գրում է. «Մի ի խառնուածոցն ինկոց կինամոնն է՝ պտուղ բանջարոյ, որ և գտանի ի Տմորիս Հայոց եւ յայլ աշխարհ, եւ ոչ միայն անուշահոտ է, այլ գոյ եւ գիտական զարոյթին ի նմա, զի ընդ քուն խաւել տայ, եւ յայտնէ զծածուկս սրտի», տես ՆԲՀ, Ա, էջ 1096 (կինամոնն) նաև՝ ՄՄ, ձեռ. 2606, թ. 47ա:
- 30 Նկատի ունի Ա. Կյուրէղ Երուսաղէմացուն և նրա խոսքը: «Աստծո գործը (շնորհը) տալն է, իսկ քոնը՝ այն պահելն ու պահպանելը». Գ. Փլորովսկի, Восточные отцы церкви, М., 2003, с. 96:
- 31 Նարեկացու այս միտքը համերաշխվում է Ա. Մակար Մեծի խորհրդաբանական այն մտածումին, թե մարդկային հոգու հաղորդակցումը սատանայի հետ դառնում է այնքան սերտ, որ դրա բարոյական հատկանիշները վերածվում են խորհրդաբանագանգական հատկանիշների, ինչը նման է ամուսինների սեռական համակեցությանը. տե՛ս Ս. Минин, Главные направления древне-церковной мистики, Сергиев Посад, 1916:
- 32 Տե՛ս Ազգաթանգեղոս, «Պատմություն», էջ 66 (և 114, Թ):
- 33 Տե՛ս Ազգաթանգեղոս, Պատմություն, էջ 54 (§ 93, Է):
- 34 Ադրիանոսը, որ հռոմեական զորաբանակի բարձրաստիճան պաշտոնյաներից էր, ընդունելով քրիստոնեություն, անհատակվում է Մաքսիմիանոս կայսեր օրոք 305 կամ 310 թթ: Օգոստ. ԻԶ, նաև ԺԶ. քաղվածքը բառացի համապատասխանում է վկայաբանությանը. տե՛ս «Վարք եւ վկայաբանությունք սրբոց», հո. Ա., Վեճետիկ, 1874, էջ 26-27. նաև «Յայսմատրք», Կ. Պոլիս, 1834, մասն Բ, էջ 98-99:
- 35 Նկատի ունի Եզեկ., ԽԳ 2 տեղին, որ մեկնաբանական ավանդույթը բացորոշ ակնարկ է նկատում Տիրամոր, որը Զավակ ունենալով, սակայն, կույս մնաց: Այս մասին հետևյալն ենք կարդում Դիոնիսիոս Ալէքսանդրացու (Ո 265) Պողոս Սամոսատցու դէմ գրած Հակաճառության մեջ. «Յղացաւ Բանն Աստուած ի սուրբ Կուսէն եւ ծնաւ ի նմանէն մարդ կատարեալ, յղացաւ եւ ոչ գիտեաց, ծնաւ եւ ոչ չարչարեցաւ, եւ որպէս Աստուած եւ Տէր բնութեամբ՝ պահեաց զարգանդ սրբոյ Կուսին, որպէս Էրն իսկ: Եւ վկայէ Եզեկիէլ մարգարէ. «Դուռն այն եղիցի փակեալ եւ ոք մի՛ մտցէ ընդ նա...»: տե՛ս Կնիք հաւատոյ, աշխատ. Կարապետ եպս. [Տէր-Մկրտչեան], Ա. էջմիածին, 1914, էջ 105:
- 36 Տե՛ս «Ա. Գրիգորի վարդապետությունը», Ազգաթանգեղոս, էջ 159 (§ 309, ԻԹ):
- 37 Տե՛ս «Ա. Գրիգոր Աստուածաբան, «Խօսք ամենատրբ պապայ Աստուծոյ մերոյ» (Ճառ Բ), ՄՄ, ձեռ. 1500, թ. 737բ-741ա:
- 38 Տե՛ս Ա. Գրիգոր Աստուածաբան, «Ի Ծնունդն Քրիստոս»:

- սի», ՄՄ, ձեռ. 1500, թ. 724ա-727բ:
- 39 «Ս. Գրիգորի վարդապետությունը», Ագաթանգեղոս, էջ 347 (§ 670, Ղ):
- 40 Տե՛ս ծնթ. 28: Մասնավորաբար Գևորգի ունի այն լուրջ նպաստը, որ Ս. Գրիգոր Աստվածաբանի երկերը բերում են քրիստոնեական աստվածաբանության մեջ բացարձակ արժեք ներկայացնող Երրորդաբանությանը:
- 41 Այս կարգազատումն առկա է «Յաճախապատում»-ի ԺԳ, ԺԶ, ԺԷ, ԺԹ և ԻԳ ճառերում. տե՛ս «Մատենագիրք Հայոց», Ա, Անթիլիաս, 2003, էջ 90, 99-101, 108-109, 128-137:
- 42 Վկայությունները քաղված են Ս. Բարսեղ Կեսարացու (329-379) «Ի սուրբ մահատակն Քրիստոսի Ստեփանոս» ներբողյանից (տե՛ս ՄՄ, ձեռ. 822, թ. 218ա-222ա), որ նրա «Պահոց» գրքի ԻԸ միավորն է:
- 43 «Յաճախապատում», Մատ Ի. տե՛ս «Մատենագիրք Հայոց», Ա, էջ 114-124:
- 44 Եսեբոն քաղաքի վերաբերյալ տե՛ս «Բառարան Սուրբ գրոց», Կ. Պոլիս, 1881, էջ 173:
- 45 Ապրիլ Ժ, Ահկի Գ «Վկայություն սրբոց քառասուն մարտիրոսացն...» տե՛ս Յալսմատրք, Կ. Պոլիս, 1834, էջ 159-161:
- 46 Տե՛ս Եղիշե, «Բան վասն հայոց պատերազմին», Ը եղանակ (Դարձեալ վասն խոստովանողաց նոցունց). «Մատենագիրք Հայոց», Ա, էջ 739-750:
- 47 Տե՛ս Ագաթանգեղոս, էջ 117-118 (և 224, Ի):
- 48 Ս. Գրիգոր Նարեկացու բերած Երգ Ը 1 տեղին (Ո՞վ տացէ քեզ, եղբորորդի իմ, դիել զստինս իմ) էապես տարբերվում է ընկալյալ թարգմանությունից (Ո՞վ տայր (= Ո տացե) քեզ, եղբորորդի իմ, դիել զստինս մօր իմոյ) որ ներկայացնում է հունարենի հարազատ իմաստը. տե՛ս Դկտ. հ. Համազասպ Ոսկեան, Երգ Երգոցի առաջին և երկրորդ թարգմանությունը (ուսումնասիրություն և բնագիր), Վիեննա, 1924, էջ 29, 71:

- 49 Տե՛ս ծնթ. 42:
- 50 Տե՛ս ծնթ. 42:
- 51 «Ս. Գրիգորի վարդապետությունը», Ագաթանգեղոս, էջ 334, (և 648, ԶԵ):
- 52 Ս. Հովհան Ոսկերեղան, «Վաւետարանագիրն Մատթէոս», էջ 21:
- 53 Տե՛ս Ագաթանգեղոս, «Պատմություն», էջ 75 (§ 130, ԺԲ):
- 54 Տե՛ս Ագաթանգեղոս, «Պատմություն», էջ 78 (§ 136, ԺԲ):
- 55 Տե՛ս Եղիշե, «Բան վասն հայոց պատերազմին», Եղանակ Բ, «Մատենագիրք Հայոց», Ա, էջ 534-579
- 56 Ս. Գրիգոր Աստուածաբան, «Ի Յալսմոյթին Քրիստոսի», ՄՄ, ձեռ. 1500, թ. 727ա-729բ:
- 57 Ս. Գրիգոր Աստուածաբան, «Ի Մկրտութիւն Քրիստոսի», ՄՄ, ձեռ. 1500, թ. 729բ-737ա:
- 58, 59, 60 տե՛ս ծնթ. 57:
- 61 Տե՛ս Ս. Գրիգոր Աստուածաբան «Խօսք յամենասուրբ Պասքալ Աստուծոյ մերոյ» (Մատ Բ), ՄՄ, ձեռ. 1500, թ. 737բ-741ա:
- 62 Տե՛ս ծնթ. 57:

Ծանոթագրությունները` Հակոբ Բետեղյանի:

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՏԵՂԻՆԵՐ

- | | |
|---|--|
| 1* Հմմտ. Եբր., ԺԳ 17: | 26* ԾԱՃՈՒ, Բ 15: |
| 2* Սղմ., Ա 1: | 27* Հովհ., Ժ 11: |
| 3* Սղմ., Ա 2: | 28* Բ Օր., Դ 9: |
| 4* Սղմ., Ա 3: | 29* Սղմ., ԸԼԷ 8: |
| 5* Տե՛ս Եբր., Թ 3: | 30* Հովհ., Գ 33: |
| 6* Տե՛ս Բ կորԱթ., ԺԲ 2: | 31* Բ ԿորԱթ., Բ 15: |
| 7* Մտթ., Է 6: | 32* Սղմ., ԽԳ 3: |
| 8* Եփես., Ե 32: | 33* Սղմ., ՀԹ 14: |
| 9* Եսայի ԿԲ 5: | 34* Սղմ., ԾԺԸ 103: |
| 10* Բ Թագ., Ա 26: | 35* Երգ Բ 7, Ը 4: |
| 11* ԾԱՃՈՒ, Բ 23: | 36* Ա, Հովհ., Դ 8: |
| 12* Տե՛ս ԾԱՃՈՒ, Բ 24: | 37* Սղմ., ԺԷ 5: |
| 13* ԾԱՃՈՒ, Բ 23: | 38* Սղմ., ԾԺԴ 5: |
| 14* Տե՛ս Սղմ., ՂԱ 13: | 39* Տե՛ս Եփես., Գ 13: |
| 15* Հոովմ., Ը 26: | 40* Առակ., Գ 16: |
| 16* Տե՛ս Սղմ., Ը 6: | 41* Տե՛ս Ղուկ., ԺԵ 11-32: |
| 17* Սղմ., Ը 6: | 42* Եբր., Ա 1: |
| 18* Ա Պետ., Ա 23: | 43* Նավում Ա 5: |
| 19* Սղմ., Բ 7: | 44* Երեմիա Ա 5: |
| 20* Եփես., Բ 14: | 45* Մտթ., ԺԱ 29: |
| 21* Հովհ., Է 37: | 46* Մրկ., ԺԴ 42: |
| 22* Սղմ., ԾԺԸ 72: | 47* Մտթ., ԺԶ 18, Գործք
Դ 11, Ա Պետ., Բ 4: |
| 23* Հովհ., Թ 37: | 48* Գաղատ., Ե 4: |
| 24* Սղմ., ՂԱ 16: | 49* Հմմտ., Հոովմ., ԺԳ 10: |
| 25* Հմմտ., Եսայի ԼԷ 22,
Զաք., Բ 10, Թ 9,
Ողբ Բ 1, Դ 21: | 50* Մտթ., Ե 17: |
| | 51* Ղուկ., Ժ 17: |

52* Ղուկ., Ժ 19:
 53* Հոովմ., Բ 9:
 54* Ա Կորնթ., ԺԳ 9:
 55* Ա Կորնթ., ԺԳ 12:
 56* Սղմ., ԾԺԶ 17:
 57* Սղմ., ԾԽԱ 8:
 58* Բ Կորնթ., ԺԲ 4:
 59* Ա Կորնթ., Ա 21:
 60* Եփես., Բ 14:
 61* Սղմ., ԻԸ 5:
 62* Եսայի ԿԶ 2:
 63* Բ Տիմոթ., Բ 20:
 64* Բ Տիմոթ., Բ 21:
 65* Ա Կորնթ., ԺԲ 28:
 66* Ծննդ., Գ 18:
 67* Ղուկ., ԻԳ 28:
 68* Հովհ., ԺԲ 23:
 69* Տե՛ս Մտթ., Ժ 16:
 70* Սղմ., ԽԴ 14:
 71* Սղմ., ԿԷ 18:
 72* Եփես., Զ 16:
 73* Սղմ., ԼԵ 10:
 74* Հմմտ., Հոովմ., ԺԲ 4-5:
 75* Հովհ., Է 38:
 76* Եսայի ԿԳ 3:
 77* Եփես., Գ 10:
 78* Սղմ., ԶԳ 8:
 79* Եբր., Ե 13:

80* Ա Կորնթ., Գ 2:
 81* Սղմ., ԾԺԸ 103:
 82* Գաղատ., Ե 22:
 83* Կողոս., Գ 12:
 84* Տե՛ս Ելք Լ 34-36:
 85* Հոովմ., Զ 3:
 86* Երեմիա Բ 13:
 87* Հովհ., Դ 10:
 88* Հովհ., Է 38:
 89* Հովհ., Է 39:
 90* Առակ., ԻԷ 16:
 91* Ա Կորնթ., ԺԲ 10:
 92* Ա Կորնթ., ԺԲ 11:
 93* Հովհ., Դ 34:
 94* Մտթ., ԻԵ 35:
 95* Մտթ., Զ 10,
 Ղուկ., ԺԱ 2:
 96* Եսայի ԿԵ 24:
 97* Տե՛ս Գործք Ժ 9-16:
 98* Մտթ., Ի 22:
 99* Ղուկ., ԺԸ 17:
 100* Մրկ., ԺԴ 24:
 101* Հովհ., Զ 54:
 102* Ա Կորնթ., Գ 18:
 103* Ա Կորնթ., ԺԱ 1:
 104* Բ Կորնթ., ԺԲ 5:
 105* Գաղատ., Գ 27:
 106* Հովհ., ԺԱ 25:

107* Ղուկ., ԺԲ 35:
 108* Ա Կորնթ., Ը 2:
 109* Փիլիպ., Գ 13:
 110* Ղուկ., ԻԲ 44:
 111* Ա Կորնթ., ԺԳ 12:
 112* Տե՛ս Գործք Թ.,
 Հայտն., Եզեկ., Ա 1-7,
 Ը 1-10:
 113* Դամիել Ժ 16:
 114* Բ Կորնթ., ԺԲ 4:
 115* Կողոս., Բ 12:
 116* Հմմտ., Ղուկ., ԺԴ 26:
 117* Մտթ., Է 14:
 118* Հոովմ., Ը 18:
 119* Բ Կորնթ., ԺԱ 2:
 120* Ժողով., Ա 18:
 121* Եբր., Ա 14:
 122* Բ օր., ԼԲ 8:
 123* Սղմ., ԼԳ 8:
 124* Հոովմ., Ը 38:
 125* Սղմ., ԼԱ 2:
 126* Հովհ., Ը 46:
 127* Եբր., Դ 15:
 128* Սղմ., ԽԴ 3:
 129* Հոովմ., Ա 20:
 130* Տե՛ս Մտթ., Ժ 16:
 131* Երեմիա Ա 5:
 132* Հմմտ., Սղմ., Ա 3:

133* Եզեկ., Ժ 12:
 134* Հովհ., Է 38:
 135* Սղմ., ՂԱ 13:
 136* Եսայի Թ 7:
 137* Ղուկ., Ա 32:
 138* Մտթ., ԺԱ 29:
 139* Մրկ., Բ 17, Մտթ., Թ
 13:
 140* Ղուկ., Է 48:
 141* Հովհ., Ը 11:
 142* Ղուկ., Ժ 24:
 143* Ղուկ., ԺԷ 22:
 144* Եփես., Գ 10:
 145* Սղմ., ԾԻԷ 3, Եսայի Ե
 1:
 146* Հովհ., ԺԵ 5:
 147* Հովհ., Ժ 11:
 148* Հովհ., Ժ 27:
 149* Տե՛ս Ղուկ., ԻԲ 18:
 150* Ղուկ., Է 9:
 151* Տե՛ս Գործք Թ 3:
 152* Տե՛ս Ելք Գ 6:
 153* Տե՛ս Գ Թագ., ԺԹ 13,
 ԻԱ 4:
 154* Եսայի ԾԴ 1:
 155* Եսայի Կ 8:
 156* Տե՛ս Հոովմ., ԺԲ 14:
 157* Տե՛ս Հայտն., ԻԱ 12:

- 158* Տե՛ս՝ Ղուկ., ԺԲ 23:
 159* Սղմ., ԾԷ 4:
 160* Հովհ., Ա 18:
 161* Ղուկ., ԺԵ 30:
 162* Եբր., Ա 14:
 163* Մտթ., ԺԳ 43:
 164* Գաղատ., Ե 17:
 165* Եսայի ԿԶ 2:
 166* Տե՛ս Եփես., Զ 15:
 167* Բ Կորնթ., Դ 7:
 168* Բ Կորնթ., Դ 7:
 169* Տե՛ս Գործք թ:
 170* Տե՛ս Ծմնդ., ԼԲ, 24-32:
 171* Եսայի ԿԶ 2:
 172* Գործք Ա 1:
 173* Մտթ., ԺԱ 29:
 174* Հովհ., ԺԸ 23:
 175* Հովհ., Ը 49:
 176* Ղուկ., ԻԳ 34:
 177* Տե՛ս Մտթ., ԺԳ, Մրկ.,
 Ը, Ղուկ., թ:
 178* Ա Կորնթ., ԺԱ 1:
 179* Տե՛ս Սղմ., ԻԱ 18:
 180* Հովհ., Զ 55:
 181* Հովհ., ԺԷ 21:
 182* Բարուք Գ 38:
 183* Հովհ., Ժ 16:
 184* Մտթ., ԻԸ 20:
 185* Եսայի Ը 18:
 186* Փիլիպ., Գ 13:
 187* Ղուկ., ԺԷ 10:
 188* Ա Կորնթ., ԺԵ 9:
 189* Տե՛ս Ղուկ., ԺԷ 11-19:
 190* Ա Պետ., Ա 23:
 191* Հռոմ., Ը 32:
 192* Առակ., Զ 34:
 193* Սղմ., ԺԷ 2:
 194* Սղմ., ՀԲ 26:
 195* Սղմ., ԶԳ 3:
 196* Սղմ., Ը 6:
 197* Տե՛ս Ա Կորնթ., Ա 23:
 198* Տե՛ս Ղուկ., ԺԵ:
 199* Ա Կորնթ., ԺԳ 12:
 200* Մտթ., ԺԱ 29:
 201* Հովհ., Ժ 16:
 202* Սղմ., ԿԹ 2:
 203* Սղմ., ՃԽԲ 7:
 204* Սղմ., ԼԷ 23:
 205* Մտթ., ԻԵ 6:
 206* Տե՛ս Մտթ., ԻԵ 11-
 12:
 207* Մտթ., ԻԶ 29:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Ս. Գրիգոր Նարեկացու
 «Երգ Երգոցի» մեկնության արժեքը.....5*

Մեկնություն «Երգ Երգոցի»..... 17

Ծանոթագրություններ սուսջարանի.....222

Ծանոթագրություններ Մեկնության.....223

Սուրբգրային տեղիներ.....231

Թարգմ. գրաբարից՝
Վ. Ֆերեշեթյանի

Խմբագիր՝	Ասողիկ եպիսկոպոս
Գեղ. խմբագիր՝	Ղևոնդ քահանա
Շապիկը՝	Ա. Օհանջանյանի
Սրբագրիչ՝	Ս. Բուլաթյան